

Ռ. ԶԱՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐ
ՈՈՒՍ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻՑԱՅԻ ՀԱՄԱՐ
ԵԶԸ ԹԱՏՐՈՒՆՈՒՄ

792.1(47.925) 25806

Q-39 Չարջին, Խ.

Դաշտում ուղարկված
այլ համար հայ քառո-
շունց. | | | 8n 704.

792.1(47-325)

9-32

ԱՐԵՎԵՆ
ԶԱՐՅԱՆ

ԱՏԱԽՎԱՅԻ Հ 1961 թ

ՊԱՅԵՐԸ

ԱՐԴԻՇ ԴՐԱՄԱՆԱԽՐԳԻՍՅԵՒ ՀԱՄԱՐ ՀԱՅ ԹԱՏՐՈՒՆՈՒՄ

(հարցի պատմությունից)

25806

A
20641



ՀԱՅՈՒՏՏՀՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 1954

Р. В. Зарян

БОРЬБА ЗА РУССКУЮ ДРАМАТУРГИЮ
В АРМЯНСКОМ ТЕАТРЕ

(из истории вопроса)

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат)
Ереван, 1954

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գիրքը մենագրական ուսումնասիրուրյուն չէ, այլ մի ժողովածու, որի մեջ հեղինակը հավաքել է, նիշտ է, տարբե ժամանակ և տարբե առիրներով, սակայն, բայ էուրյան, մի թեմայի շուրջ գրած իր հոդվածներ:

Հայ բատերական կոլտուրայի զարգացման մեջ ոռուական բառունի պրոգրեսիվ դերի լուսաբանուրյունը մեւ բառունի պատմաբանների առաջնաները խնդիրներից է:

Ճիշտ է, թե նեռն չկա այդ խնդիրը բացահայտող որևէ ժիշտ քառարութական աշխատուրյուն, սակայն, վերջին տարիներս, պարբերական մասունի էջերում, բավական հաճախակի են երեացել նրա առանձին կողմերը պարզող հոդվածներ ու ուսումնասիրուրյուններ:

Այդ բնդարձակ թեմայից գրեիս հեղինակին առանձնապես զբաղեցրել է միան մի հարց՝ հայ բառունում դեռն անցյալ դարի 60-ական թվականներից սկսած ոռուական դրամատուրգիայի համար ծավալված պայքարը։ Սակայն հեղինակն անհեածիշտ համարեց իր այս ժողովածուի մեջ տեղադրել նաև իր այն հոդվածները, որոնք պարզում են ոռուական դրամատուրգիայի մուտքը հայ իրականուրյան մեջ, ինչպես և հայ հնենատական մտքի կողմից ոռու գրականուրյանը տրված անդրանիկ գհանատականը։

Ժողովածուի վերջին երեք նյութը ժամանակին կարդացվել է որպես զեկուցում, առաջին երկուը թատերական ընկերուրյունում՝ Օստրովսկու ծննդյան 130-րդ տարելիցին և «Հատակում» պիեսի հայկական անդրանիկ թեմադրուրյան 45-ամյակին նվիրված երեկոներին, իսկ երկուրդը՝ Գիտուրյունների ակադեմիայում՝ Մ. Արենյանի անվան Գրականուրյան ինստիտուտի սեսիայում, որ երավիրված էր Տոլսոտյի ծննդյան 125-ամյակի ասորիվ։

Բոլոր նյութերը, որոշ կրթատումներով, նրապարակվել են պարբերական մամուլում («Սովետական Հայաստան», «Սովետական գրականուրյուն և արվեստ», «Գրական թերթ», Հայկական ՍՍՌ Գիտուրյունների ակադեմիայի «Տեղեկագիր» և «Կոմմունից»): Այժմ նրանք լույս են տեսնում ոչ կրեատ, անճշան վերանայումով: Բոլոր տեսակի հավելումները և նրատումները, որոնց կարիքը զգացել է նեղինակը վերանատարակուրյան կապակցուրյամբ, նպատակահարմար գտնվեց տաղ տողատակի ծանորությամբ:

Նեղինակը նեռու է այն մտքից, թե իր այս գիրքը որեւէ շափով հանդիսանում է արծարծվող հարցի սպառիչ պարզաբանում: Սակայն նա հակած է կարծելու, որ այն հետաքրքիր և նույնիսկ օգտակար կարող է լինել խնդիրն իր ամբողջուրյան մեջ նետազոտողի համար, մանավանդ որ այստեղ կուտակված փաստական նյութը և նրա կապակցուրյամբ առաջ բաշված հարցերը, ըստ էուրյան, առաջին անգամն են բարձրացվում մեր գրականուրյան մեջ:

ՈՌԻՍՈՎԿԱՆ
ԴՐԱՄԱ.ՏՈՒՐԳԻՒՅՔԻ ՄՈՒՏՔԸ
ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



«ԽԵԼՅԻՑ ՊԱՏՈՒՀԱՍԻ»
ԱՌԱՋԻՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԳ

(Ա. Ս. Գրիբոյեդովին նվիրված մի գրքի առքի)

Այս տարի, գրեթե միաժամանակ՝ երկու տարրեր, երկու իրար միանդամայն հակառակ դնահատական ստացավ վաղուց հայտնի մի պատմական իրադարձություն:

Հայաստանի գրական-թատերական և գիտական հասարակայնությունը 1954-ի մայիսի 30-ին երևանում, գեղատեսիլ Զանգվի ափին, «Արարատ» գործարանի բազալտաշեն պատին (ուր առաջ գտնվում էր Երևանի Սարդար Հովսեյն խանի ամրոցը) մի առանձին հանդիսավորությամբ փակցրեց հուշատախտակ, որի վրա գրված է՝ «Այստեղ, 1827 թվականին, հեղինակի ներկայությամբ առաջին անգամ բեմադրվեց ուսւմնական պատուհան» անմահ կոմմեդիան»¹:

Այդ նույն ժամանակ Մոսկվայում, Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը լուս ընծայեց «Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհանը» ուսւաց բեմում» խորագրով մի գրքույզ, որտեղ, ճիշտ հակառակը, բացավում է մի այդպիսի կարևոր պատմական իրողություն:

«1827 թվականին,— գրված է վերոհիշյալ գրքույզում,— նախատեսվում էր կոմմեդիայի (խոսքը «Խելքից պատուհանի»

¹ „Կոմմունիստ”, 1954, № 128.

մասին է — Ռ. Զ.) բեմադրությունը Երևանում, բայց «հշխանությունն իմանալով ներկայացման մասին, արգելեց այն»¹:

Գուցե և կարիք չպացվեր անդրագառնալու այս հակասությանը, եթե գրքուզկի հեղինակը պրոֆ. Վ. Ա. Ֆիլիպովը շլիներ, մի գեմք, որն առաջին անգամ չէ, որ հանդես է գալիս «Խելքից պատուհասի» բեմական պատմությանը նվիրված ուսումնասիրություններով:

Մեր երկյուղն այն է, որ պրոֆ. Ֆիլիպովի այդ պնդումը կարող է ընկալվել, որպես մի հեղինավորված եղբակացություն և, ուրիշներն էլ, վստահելով նրան, կամ հենվելով նրա հայտարարության վրա, կարող են կրկնել ու տարածել այն, մասնավանդ որ պրոֆ. Ֆիլիպովը միակը չէ, ոչ էլ առաջինը, որ կամածի տակ է դնում 1827-ի ներկայացման փաստը:

Մի նմուշ:

Լ. Իլինսկին իր մի հետազոտության մեջ 1827-ի ներկայացման մասին պահպանված տեղեկությունը ավանդություն է համձարում²:

Կամ ահա մի այլ օրինակ:

«Առվետական մեծ հանրագիտարանի» էջերում մեղ հատաքրքրող փաստի մասին երկու անգամ է գրվել և երկու անգամն էլ, որքան էլ դա զարմանալի է, իրարամերժ տեսակետ է արտահայտվել. մի հատորում գրված է, որ «Խելքից պատուհասը» բեմադրվել է հեղինակի մահից հետո միայն, հատվածաբար 1829-ին, իսկ լրիվ՝ 1831-ին³: Իսկ մի այլ հատորում ասված է, որ Երևանում, 1827-ին, հեղինակի ներկայությամբ խաղացվել է այն⁴:

Պրոֆ. Ֆիլիպովը, ինչպես ասվեց, առաջին անգամ չէ,

¹ Проф. В. А. Филиппов, „Горе от ума“ А. С. Грибоедова на русской сцене, 1954, стр. 6.

² „Литературное наследство“, 47—48, А. С. Грибоедов, 1946, стр. 335.

³ „Большая советская энциклопедия“, второе изд., 12, стр. 583.

⁴ Նույն տեղում, 3, էջ 100:

որ արտահայտվում է «Խելքից պատուհասի» անդրանիկ բհշմագրության մասին: Օրինակ՝ իր մի հետազոտության մեջ, որ կոչվում է ««Խելքից պատուհասի» վաղ բեմագրությունները», Հիշատակում է այդ ներկայացումը: «Տեղեկություններ կան այն մասին, — զրում է նա վիրոճիշյալ ուսումնասիրության մեջ, — որ կոմեղիան խաղացվել է 1827-ին, հեղինակի ներկայությամբ, երևանի բերդում, Սարդարի ամրոցի սենյակներից մեկում»¹: Այս էլ տառապ, որ այդ հետազոտությունը զրելիս նրան հայտնի է եղել, որ զրականության մեջ գոյություն ունի և հակառակ տեսակետ: Սակայն նա այդ հիմքի ընդունել, թեև անհրաժեշտ է համարել զրա մասին հիշատակություն անել գոնե ծանոթագրության մեջ²:

Ի՞նչն է պրոֆ. Ֆիլիպովին ստիպել իր իսկ բոնած դիրքը վիրանայել, ընդունել մի այլ, ճիշտ հակառակ տեսակետ, անհասկանալի է: Գուցե նա նոր փաստաթուղթ է հայտնաբերել: Սակայն ոչ մի նոր փաստաթղթի հիշատակություն չենք գտնում նրա զրում: Գուցե նա եղած փաստաթղթերի և վկացությունների խորազնին հետազոտությամբ հանգել է նոր եղրակացության: Ո՛չ և ո՛չ, որովհետև նրա զրուցումը վերդիշյալ հայտարարությունը հիմնալորելու ամենաթեթև փորձ անգամ չի արված:

Պրոֆ. Ֆիլիպովն իր զրուցում «Խելքից պատուհասի» երևանյան բեմագրության մասին ի միջի այլոց է խոսում, հատկացնելով նրան ոչ ավելի, քան երկու տող: Դրա համար չի կարելի կշտամբել Ֆիլիպովին: Գրքուցի ծավալը և բնույթը թույլ չեն տվել ծավալվելու և խորանալու: Սակայն ավելի կարուր է մի այլ հանգամանք. ըստ երևույթին, հետազոտած վիճակով նյութը, նա մեղ հետաքրքրող հարցին անդրադառնալիս հենվել է ուրիշի վրա, առանց աղբյուրը նշելու, առանց իր օգտագործած աղբյուրի հեղինակի անունն հիշատակելու:

¹ „Литературное наследство“, 47—48, А. С. Грибоедов, 1946, стр. 299.

² Նույն տեղում, էջ 322:

Եվ, այդպիսով, նա հակասության մեջ է այժմ ոչ միայն մեր քանի տարի առաջ իր իսկ կողմից պաշտպանած գրութիւն դեմ, այլև գրիբոյեգովագիտության մեջ այդ հարցի շուրջը վազուց ի վեր գոյություն ունեցող և արդեն տրադիցիայի ուժ ձեռք բերած հայեցակետի դեմ:

Ֆիլիպովի գրքույկում եղած նոր պնդման դեմ վիճելու համար՝ նախ և առաջ անհրաժեշտ է ժխտել նրա աղբյուրը:

Ո՞ւմ վրա է հենվել պրոֆ. Ֆիլիպովը: Մեզ հաջողվեց պարզել, որ նա, որքան էլ այդ գարմանավի և տարօրինակ լինի, աչքի առաջ է ունեցել Դրիզենի «Նյութեր ոռւս թատրոնի պատմության համար» աշխատությունը: Մեր նպատակը չէ այդ աշխատությունը որևէ շափով արժեքագուրկ անել, նամանավանդ որ ոռւս թատրոնի պատմաբաները ոչ սակավ անդրադառնալով նրան, գտնում են այնտեղ փաստական նյութի բավական հարուստ կուտակում: Եվ, չնայած դրան, «Խելքից պատուհասի» վաղ բեմադրությունների պատմությունն ուսումնասիրողը, եթե նրան հատկապես զբաղեցնում է հրեանյան ներկայացումը, այդ գրքի էջերում իր համար, բացարձակապես, ոչինչ հետաքրքիր չի գտնի:

Նախ, տեսնենք, թե Դրիզենն ինչ է ասում այդ մասին, ասպա միայն անդրադառնանք նրա քննությանը:

Պատմական գեպքի և նրա կապերի մասին քիչ, թե շատ ամբողջական պատկերացում տալու նպատակով պիտք է սկսենք մի փոքր հեռվեց:

1824-ին Գրիբոյեդովը ծանոթների շրջանում կարդում է «Խելքից պատուհասը»: Տպավորությունը ցնցող էր: Սակայն Գրիբոյեդովին չհաջողվեց կոմեդիան բեմ հանել և հրատարակության հանձնել, չնայած ունեցած կապերին: Մի՛ քանի հատված միայն լուս տեսավ պարբերական մամուլում: Չնայած դրան՝ կոմեդիան, որը ժամանակի առաջավոր գաղափարներով էր առգործած, ավելի արագ տարածվեց, քան այդ կարող էին հրեակայել «Խելքից պատուհասը» փակի տակ պահպաները:

Գրիբոյեդովը հանգիստ շուներ. սկզբում բոլորը խնդրում էին նրան կարդալ իրենց համար, հետո սկսեցին արտագրել, և «Խելքից պատուհասը» հազարավոր օրինակներով տարածվեց, հասնելով Ռուսաստանի մի ծայրից մյուսը:

Գրիբոյեդովին նվիրված մի ակնարկից, որ գրված է մեմորային գրականության ավաղների հիման վրա, իմանում էնք հետեւյալը. կոմեդիան տարածվել է տասնյակ հազարավոր օրինակներով՝ արտագրված վիճակում: Գրադիրներն ահագին գումարներ են վաստակում, արտագրելով և տարածելով կոմեդիան, որի պահանջն օր-օրի վրա ավելանում էր: Գրասեր և թատերասեր հասարակայնությունը խմբերով հավաքվում էր և որևէ մեկի թելադրությամբ գրի առնում: Մի խուզքով, ոչ մի գիրք այն ժամանակ չի տարածվել այնքան քանակությամբ, ինչ որ «Խելքից պատուհասի» արտագրվուծ օրինակները ¹:

Գրիբոյեդովի օրոք թատերական ուսումնարանը փորձ է անում ներկայացնել «Խելքից պատուհասը», բայց այդ էլ գլուխ չի գալիս: Ահա թե ինչ է պատմում թատերական ուսումնարանի աշակերտներից մեկը, որ այդ ներկայացման մեջ պետք է կատարեր Ռեպետիլովի գերը:

«1824 թվականին երևաց Գրիբոյեդովի անմահ կոմեդիան ձեռագիր վիճակում: Երկու, թե երեք տեսարան միայն տպագրվեց մամուլում, իսկ ամբողջ կոմեդիան այն ժամանակ արգելված պտուղ էր... Գրիգորեի հետ մենք առաջարկեցինք Ալեքսանդր Սերգեեիչին՝ «Խելքից պատուհասը» խաղալ մեր դպրոցական թատրոնում: Նա հիացավ մեր առաջարկից... մեծ ջանք գործ դրինք, մինչև որ բարի տեսուշը՝ Բոկը թույլ տվեց սաներին՝ մասնակցել այդ ներկայացմանը... արագ գործի անցանք, մի քանի օրում գերերն արտագրեցինք, մի շաբաթում՝ ըստ արինք... Գրիբոյեդովը գալիս էր փորձերին և շանասիրերան արինք... Գրիբոյեդովը գալիս էր առաջարկեցինք, մի շաբաթում՝ սովորեցնում մեզ... պետք էր տեսնել, թե ինչպիսի՝

¹ В. Вересаев, Спутники Пушкина, т. 2, 1937, стр. 268—269.

անկեղծ բավականությամբ նա ձեռքերը շփում էր, տեսնելով
իր «Խելքից պատուհասը» մեր մանկական թատրոնում... վեր-
ջապես կոմեդիան արդեն բոլորովին պատրաստ էր. հաջորդ
օրը նշանակվեց ներկայացումը... բայց, ավա՞զ, մեր բոլորի
հոգսերը և հոգսերը պայթեցին ստպնի պղաջակի նման:
Ներկայացման նախօրյակին, վերջին փորձի ժամանակ եկավ
տեսուչ Բոկը և Հայտարարեց զրաֆ Միլորադովիչի աճեղ
հրամանը, որ մենք չհամարձակվենք տղատամտել և որ զրա-
բնության կողմից չթույլատրված պիեսը չի կարելի թատե-
րական ուսումնաբանում խաղալ... բոլորս էլ սարսափելի
վշտի մեջ ընկանք... Գրիգորիի հետ անմիջապես դնացինը
Գրիգորյեղովի մոտ՝ Հայտնելու այդ ճակատազրական լուրը,
որը նրան, իհարկե, խիստ վշտացրեց:

Եվ այսպես, բանաստեղծին չվիճակվեց բեմի վրա (նույն-
իսկ այնպիսի թշվառ կատարումով, ինչպիսին մերն էր) իր
անմահ կոմեդիան ահսնելը¹:

«Խելքից պատուհասի» այս ներկայացման պատմության
փաստերը բերելով, Գրիգենը հետևյալն է գրում.

«Եթե չենք սիսալվում,— ասում է նա,— 1828 թ. «Խելքից
պատուհասը» բեմում ներկայացնելու մի փորձ էլ է եղել. այս
անգամ ներկայացման նախաձեռնությունը պատկանում է Երե-
վան քաղաքի զինվորական գարնիզոնին, ուր այդ ժամանակ
Երևանով անցնելիս գտնվում էր Գրիգորյեղովը: Հետևանքները,
սակայն, նույն էին՝ իշխանությունն իմանալով ներկայաց-
ման մասին, թույլ չի տվել»²:

Ապա նույն էջում, տողատակի ծանոթության մեջ աս-
ված է.

«Ի դեպ, այդպես էլ Գրիգորյեղովին չհաջողվեց կենդանու-
թյան ժամանակ իր երկը բեմում տեսնել: «Խելքից պատուհա-
սը» առաջին անգամ ներկայացվել է 1831 թվականի հունվարի

¹ П. Каратыгин, Записки, 1929—1930, т. 1, стр. 216.

² Н. В. Дризен, Материалы к истории русского театра, 1905, стр. 84.

26- էն, Պետերբուրգում, այսինքն՝ հեղինակի մահից երկու տարի հետո»¹:

Դրիզենի գիրքը, որ անկասկած հետաքրքրություն է ներկայացնում փաստական նյութի կողմից, թերի է իր այն ժամանակ, որ վերաբերում է մեզ հետաքրքրող հարցին: Ըստ երեսուցիչին, ինքն էլ մի առանձին կարևորություն չի տվել և զրի է հիշողությամբ վերաբերելով այդ մասին մի տեղ կարդացածը: Այդ պատճառով էլ տեղի է ունեցել թվականի շփոթ, ինչպես և այնպիսի հայտարարություն, որի համար գոյություն ունեցող փաստաթղթերում ոչ մի հիմք չկա:

Սակայն այս գեղգում հետաքրքրի Դրիզենը չէ, այլ սլրոֆ. Ֆիլիպովը, որ չես հասկանում, թե ինչու այդքան նշանակություն է տվել Դրիզենին և հենվել նրա վրա: Չէ որ նա կարող էր բազմաթիվ այլ աղբյուրներ հիշել, ոչ միայն նոր, ժամանակակից, այլ հին, որ գրվել են Դրիզենից առաջ, նրա ժամանակ, նրանից հետո, և բոլորովին ուրիշ, տրամադորեն հակառակ տեսակետ են պաշտպանում: Ի՞նչ հարկ կար այդ ամենը մի կողմ թողնել և որպես հիմք ընդունել եղած հիշատակություններից ամենաանվստահելին: Զարմանալի է, որ Ֆիլիպովը փոխանակ աշքի առաջ ունենալու գրիբոյեգովագիտության այն էջերը, ուր այդ հարցի մասին խոսվում է փաստաթղթերի հիման վրա, նկատի է տոել, բայ էության, մի կամայական շարադրանք: Վերջապես պրոֆ. Ֆիլիպովը կարող էր ոչ որի վրա էլ չհենվել և ուղղակի դիմել սկզբնաղբյուրներին:

Այժմ տեսնենք, թե ինչ է տոված սկզբնաղբյուրներում և կա՞ արդյոք այնտեղ այդպիսի պնդման համար որևէ հիմք, որ, հիմնվելով Դրիզենի վրա, արել է պրոֆ. Ֆիլիպովը:

Առաջին և շատ կարևոր սկզբնաղբյուրը վերաբերում է 1832-ին:

Թիֆլիսում լուս տեսնող «Тифлисские ведомости» ուստական պարբերականը 1827-ից 4 տարի հետո տպագրել է մե-

¹ Н. В. Дризен, Материалы к истории русского театра, 1905, стр. 84.

Հոդված, որտեղ առաջին անգամ խոսվում է այդ ներկայացման մասին:

«Ես մոռացա ասել, — զրում է Հոդվածագիրը, — որ «Խելքից պատուհաս» կոմեդիան խաղացվել է 1827 թվականին Երևանի բերդում Սարդարի պալատի սենյակներից մեկում: Կարո՞ղ էր արդյոք Գրիբոյեդովն իր կոմեդիան գրելիս, մտածել, որ նրա առաջին ներկայացումը ինքը կտեսնի պարսկական սատրապի բնակարանում»¹:

Հոդվածը, որից մեջբերում արինք, լույս է տեսել «Պուտինիկ Գորետուրանսկի» ստորագրությամբ, որը, ինչպես հետագայում, միայն 1875-ին² պարզվեց, Դմիտրի Զուբարյովն է:

Ո՞վ է Զուբարյովը:

Ահա, թե մեր բանասիրական գրականության մեջ ինչ ինչ գտնում նրա մասին:

Դմիտրի Ելիսեևիչ Զուբարյովը այն ուսական պաշտոնյաներից է, որ 1828-ին հայկական մարզ էր գործուղվել: Նրան, Շոպենին, ինչպես և ուրիշներին Անդրկովկաս էր հրավիրել Գրիբոյեդովը: Անդրկովկաս գալուց հետո, մինչև 1830-ը, Զուբարյովին հանձնարարված էր Երևան և Ղարաբաղ պրովինցիաների ուսումնասիրությունը և նկարագրությունը³:

Զուբարյովը, ինչպես տեսնում հնք, պատահական մի անձնավորություն չէ, այլ մեկը, որ հաճախ լինում էր Երևանում և շփում էր ինչպես քաղաքի բնակչության տարրեր խավերի, այնպես էլ նրա պաշտոնական շրջանների հետ, անձնական ծանոթություն ուներ Գրիբոյեդովի հետ և այլն:

Զուբարյովն իր հոդվածում, դժբախտաբար, շատ քիչ տե-

¹ „Тифлисские ведомости“, 1832, № 3.

² „Вестник Европы“, 1875, книга VII (ՏԵ՛Ս Մ. Գ.-ի հոդվածը „Первые представления комедии „Горе от ума“, 1827—1832, из воспоминаний участника“).

³ Վ. Ա. Պարսամյան, Ա. Ա. Գրիբոյեդովը և հայ-ուսական հարաբերությունները, 1947, էջ 68:

դեկություններ է հաղորդել: Ինչ խոսք, որ նա շատ ավելի է իմացել, քան զրել է: Այդ ամենը կասկածից վեր է, թեկուզ նրա համար, որ նա հարկ չի համարել այդ մասին հասակ արտահայտվել, գրել, խոսել է այլ առիթով և այնպես, ի միջի այլոց: Եվ այդ պատճառով էլ շատ մանրամասնություններ, որ այնպիսի կարու հետաքրքրությամբ որոնել է և շարունակում է գրիրոյեղովագիտությունը որոնել, այստեղ չեք գտնի:

Միթե պրոֆ. Ֆիլիպովն տվելի ճիշտ վարված չեր լինի, եթե հիմք ընդուներ Զովարյովին, որ մեզ հետաքրքրող պատճական դեպքին թեև ականատես չի եղել, բայց, համենայն դեպս ժամանակակից է:

Կամ ահա մի այլ սկզբնաղբյուր ես:

1874-ին Ալեքսեյ Վեսելովսկին հրապարակել է «Խելքից պատուհասի» նախնական պատմությանը նվիրված մի ակնարկ, որով գրիրոյեղովագիտությունը հարստացալ նոր, մինչև այդ անհայտ արժեքավոր տվյալներով:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Վեսելովսկին իր ակնարկը կազմելիս, բացի տպագիր աղբյուրներից, օգտագործել է Գրիրոյեղովի ժամանակակիցների վկայությունները, որ պատմել են իրեն՝¹:

Մեզ հետաքրքրող հարցին վերաբերող հատվոծը բերում ենք ամբողջությամբ.

«Սովորաբար կարծում են, — ասում է Վեսելովսկին, — որ Գրիրոյեղովին այնպես էլ չհաջողվեց երբեք տեսնել իր կոմեդիան բեմի վրա: Այդ այնքան էլ ճիշտ չէ: Նույն պատվավոր անձնավորությունը, որը տվել էր մեզ վերև հիշված մի քանի տեղեկությունները «Խելքից պատուհասի» մասին, հաղորդեց մեզ հետեւալ հետաքրքիր տեղեկությունը «Խելքից պատուհասի» բեմադրության մասին, որին ներկա է եղել Գրիրոյեղովը: 1827 թվին երևանի շոջանի օկուպացիոն 20-րդ հետևակ դիմի-

¹ „Русский архив“, 1874, книга VI.

գիայի պետ Ա. Ի. Կրասովսկին, որը մշտական հոգացողություն ուներ իր ստորագրալների շահերի, հարմարությունների և նույնիսկ զվարճությունների մասին, կազմակերպել էր երևանում թատրոն, ուր սպաները բեմադրում էին ընտիր պիեսներ, որոնց թվում «Խելքից պատուհասը», որը դեռ տպագրված չէր և տարածված էր ձեռագրերով: Երբ Գրիբոյեդովը Թափրիզից անցնում էր Երևանի վրայով, նրան խնդրեցին գալ ներկայացման և արտահայտվել, թե ի՞նչն է գտնում նու աշող և անհաջող, և նա ամենայն պատրաստակամությամբ արտահայտել էր իր կարծիքը: Այդ ներկայացումները, լրացնում է մեր թղթակիցը, տեսնեցին ոչ երկար և արգելվեցին գրաֆ Պասկեիլ-Երևանսկու հրամանով»¹:

Այս ակնարկի հեղինակին, ինչպես երևում է, հայտնի չի եղել Զուրարյովի հոգվածը. 1827-ի ներկայացման անդրանիկ արձագանքը մամուլում ոչ մի անդրադարձում չի գտել նրա գրածի միջ: Կարևոր է նշել և հետեւալը. միկնույն պատմական դեպքի մասին որքան շատ, իհարկե, իրար շհակասող վկայություն է պահպանվում, այնքան ավելի հավաստի է դառնում այն:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ է վկայում այս սկզբնաղբյուրը, արդեն հայտնի պատմական փաստի վրա ի՞նչ նոր կողմերից է լույս սփռում:

Նախ՝ պարզվում է, թե ովքեր են բեմադրել, մի տեղեկություն, որի մասին ոչինչ չի ասված Զուրարյովի մոտ: Երկրորդ՝ այս աղբյուրը հնարավորություն է տալիս ավելի ճշտելու ժամանակը. Եթե մինչ այդ գիտեինք, որ ներկայացումը տեղի է ունեցել 1827-ին, բոլոր դեպքերում այդ թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, որովհետև ուսաց զորքերը Երևանի բերդը գրավել են այդ տարվա հոկտեմբերի 1-ին, ապա այժմ, այս վկայությունից պարզվում

¹ „Русский архив“, 1874, книга VI.

է, որ խստքը վերաբերում է միայն գեկտեմբերին¹, որովհետև Գրիբոյեդովը այդ երեք ամիսների ընթացքում միայն մեկ անգամ է թալրիզից երևան եկել: Այնուհետև այստեղ շատ ավելի պարզ և որոշակի է ասված այն մասին, որ Գրիբոյեդովը եղել է իր պիեսի ներկայացմանը, որ նույնիսկ նրան խնդրել են արտահայտվել և նա էլ սիրով իր դիտողություններն արել է. այս փաստը վկայում է այն մասին, որ Երևանի շրջանի օկուպացիոն 20-րդ դիվիզիայի սպաները մտադիր էին ներկայացումը կրկնել և այլն:

Այս հարցն առանձնապես կարևոր է, նամանավանդ որ գրիբոյեդովագետների մեջ մինչև հիմա էլ գտնվում են այնպիսինները, որոնք կասկածի տակ են զնում հեղինակի ներկայությունը 1827-ի բեմադրությանը²: Եվ միանդամայն ան-

¹ Տարբեր կարծիքներ գոյություն ունեն այս հարցի շուրջը. օրինակ՝ Շլյապինը մատնանշում է նույնիսկ ամսաթիվ. նրա կարծիքով ներկայացումը տեղի է ունեցել գեկտեմբերի 24-ին (Պոլիօ собрание сочинений А. С. Грибоедова под ред. И. А. Шляпкина, 1889, т. 1, стр. XXXVIII). Օրովը մատնանշում է հոկտեմբերը ամիսը (տես նրա „Грибоедов“ 1952-ին լույս տեսած գրքի էջ 65): Իսկ պըռոֆ. Պարսամյանը այլ կարծիքի է. «Մենք,—զրում է նա,—օրը օրին հետեւ ենք Գրիբոյեդովի կյանքին ու զործունեությանը հայաստանում: 1827 թվականին նա միայն մի անգամ է թափրիզից (Պասկելիչ մոտից) Երևան վերադարձել, բայց երեսություն, թիֆիլս զնալու մտադրությամբ, այն էլ գեկտեմբերին 1827 թ. գեկտեմբերի 13-ից մինչև 24-ը Գրիբոյեդովը կրասոսվկու և ուրիշների հետ ճանապարհորդել է Երևանի մարզում, եղել է Փարաբարում, Էջմիածնում, Սարդարապատում, Կարա-Կալայում, Կողբում, Հաջի-Բայրամում, Թալինում և Գյումրիում: Գեկտեմբերի 20-ին նա Գյումրուց գալիս է Երևան և ապա վերադարձում Պասկելիչի մոտ:

Ելնելով այս տվյալներից, կարելի է ենթադրել, որ ռևելով պատուհասից առաջին բեմադրությունը Երևանում, Գրիբոյեդովի ներկայությամբ, տեղի ունեցած լինի 1827 թ. կամ գեկտեմբերի սկզբներին մինչև 13-ը, կամ գեկտեմբերի վերջերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Գրիբոյեդովը եղել է Երևանում («Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները», էջ 71):

² В. Н. О р л о в, Грибоедов, 1952, стр. 65, իսկ մի այլ գրքում



Հասկանալի է, թե ինչու: Անըմբռնելի է, թե ինչ հիմունքով գոյություն ունեցող փաստաթղթի տվյալների մի մասն ընդունում են, մյուս մասը՝ կամայական կերպով մերժում են: Եթե փորձ անեխն իրենց տեսակետը որևէ շափով հիմնավորել կամ գոնե փորձեխն ապացուցել, թե Գրիբոյեդովն այդ ժամանակ երեանում չի եղել կամ չէր կարող լինել, որ, իհարկե, անհնար է, այլ հարց է:

Միթե բնականաբար հարց չի ծագում, թե ինչու է պրոֆ. Ֆիլիպովը թողել այս փաստաթուղթը, ինչպես և սրան նախորդողը, որոնք համենայն դեպք ժամանակակիցների վկայություններ են, և հենվել է Գրիգենի՛ հիշողությամբ գրածի, ըստ որում ոչ մի փաստով հիմնավորված տեսակետի վրա:

Գրիբոյեդովի հիշատակն այնքան նվիրական է մեղ համար, որ նրա անվան հետ կապված յուրաքանչյուր փաստ պահանջում է հոգատար վերաբերմունք և խորագույն ուշադրություն: Եվ ամեն մի անբարեխողմություն, թեկուղ և աննըշան փաստի նկատմամբ, ոչ միայն վիրավորական է մեծ զրոյի հիշատակի համար, այլև մի որոշ իմաստով խանգարող արգելք նրա թողած ժառանգության և այդ ժառանգության հետ կապված պատմության դիտականորեն հիմնավորված ուսումնասիրության գործում:

Հարցն այն չէ, թե ով ինչ կարծիքի է, ոչ էլ խնդրի դրական լուծումը կախված է այն թվաբանական հաշվից, թե երեանյան բեմադրությունը քանի կողմնակից ունի և որքան հակառակորդ: Վճռողն այստեղ պատմական իրականությունն է, հետևապես՝ ճիշտ և հիմնավոր տեսակետն այն է, որը հիմնվում է իրականության դիտական ուսումնասիրության վրա:

Թվում է, թե արդեն ժամանակն է, որ այս հարցի մեջ մեկընդմիշտ պարզություն և որոշակիություն մտնի և եղած քոլոր կասկածները հայտարարվեն անհիմն, որովհետեւ հօգուտ ճիշտ հակառակն է ասված (տես Ս. Պետրով, Ա. Ս. Գրիбоեդով, 1945, стр. 85).

Փրկանյան բեմադրության են խոսում սկզբնաղբյուրները, որոնց դիմաց կարուցող հեղինակները գոնե մինչեւ այժմ ոչ մի սկզբնաղբյուր չեն կարողացել մատնանշել:

Հարցը չի վերաբերում շարքային մի ներկայացման: «Խելքից պատռհասի» երևանյան բեմադրությունը նշանակալից երևույթ է, որովհետեւ տեղի է ունեցել այն շրջանում, երբ ցարական գրաքննությունն արգելքի տակ էր պահում պիհաը և, վերջապես, նրանով է սկսվում անմահ կոմեդիայի բեմական պատմությունը: Եվ հենց այն հանգամանքը, որ դա տեղի է ունեցել երևանում, այն էլ 1827-ին, նրա պատմական նշանակությունը դարձնում է մի փոքր ավելի լայն, քան ուսաց թատրոնի պատմության շրջանակներն են և մի այլ, հայ կովտորայի այդ շրջանի պատմության տեսակիտից մի նոր իմաստ է տալիս: Այդ բեմադրությունը պատմական դեպքերի բախտավոր բերումով զուգադիմեց լուսավորական շարժման դեմոկրատական իդեաների տարածմանը հայ իրականության մեջ, իսկ այդ շարժումը ենթադրում էր ամենամոտիկ, իսկ ապագայում լայն շփում և ծանոթություն ուսական առաջավոր կովտորայի, նրա ականավոր ներկայացուցիչների հետ, որոնց գերը հայ գրականության և արվեստի զարգացման մեջ անկասկած խոշոր է եղել:

ԴԱՐՁՅԱԼ «ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՀԱՍԻ» ԱՌԱՋԻՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր բանասիրական գրականության մեջ Գրիբոյեդովից սկսված պատուհասի» երկու բնեմադրությունն է հայտնի, երկու ներկայացում, որոնք վերաբերում են նշանավոր կոմեդիայի բնիմական պատության վաղ շրջանին: Առաջինը երեանում, 1827-ին տեղի ունեցած ներկայացումն է, երկրորդը՝ Թիֆլիսում, 1832-ին, Ղամազյանի ղեկավարությամբ, ուստի, վրացի և հայ սիրողների միացյալ չանքերով կազմակերպված բնադրությունը:

Այս երկրորդ ներկայացման փաստը մեր բանասիրական գրականության մեջ հայտնի դարձավ վերջին տարիները միայն¹, իսկ առաջինի մասին խոսվում է վաղուց, մեզնում՝ հիշատակվում ամեն անդամ, երբ տոիթ է ներկայանում Գրիբոյեդովից խոսելու: Այդ մասին հաճախ, բայց ոչ միշտ, կարելի է հանդիպել նաև «Խելքից պատուհասի» բնիմական պատ-

¹ Այդ մասին առաջին անգամ գրվել է 1945-ին, Գրիբոյեդովից ծննդյան 150-ամյակի կատակցությամբ և լույս է տեսել «Սովետական հայաստան» թերթի այն համարում (Հ 10), որի մի էջն ամբողջապես նվիրված էր սուս մեծ գրողին: Այնուհետև, մոտ երկու տարի հետո, 1947-ին լույս տեսավ Վ. Պարսամյանի «Ա. Գրիբոյեդովը և հայուսական հարաբերությունները» խորադրով աշխատությունը որտեղ խոսվում է նաև այդ մասին (էջ 69-70):

մությանը նվիրված ոռոսական հետազոտություններում և ուսումնասիրություններում: Եվ դա հասկանալի է: Այն հանդամանքը, որ «Խելքից պատուհասը» երևուում խաղացվել է պիեսի արգելված շրջանում, հեղինակի ներկայությամբ, ինչպես և այն, որ այդ ներկայացումով է սկսվում «Խելքից պատուհասի» բեմական պատմությունը, բնականաբար, մի առանձին կշիռ է հաղորդում վերոհիշյալ փաստին: Ինչ վերաբերում է 1832-ի ներկայացմանը, ապա այն «Խելքից պատուհասի» բեմական պատմության տեսակետից առանձին հետաքրքրություն չի ներկայացնում: Գրիբոյեդովի կոմեդիան այդ տարիներին, ճիշտ է, դրաքննության կողմից կրծատված, աղավաղված վիճակում, քայց արգեն խաղացվում էր թե՛ Մոսկվայում, թե՛ Պետերբուրգում և այն էլ ոչ թե սիրողների ուժերով, ինչպես վերոհիշյալ երկու դեպքումն է, այլ գերասանների: 1832-ի ներկայացումը շատ ավելի հետաքրքիր է իրբ մի երեսույթ, որ տեղի է ունեցել մեր, հատկապես հայկական և վրացական թատերական կուլտուրայի, դրամատոպեդիայի և թատրոնի նոր շրջանը սոտք դնելու առաջին քայլերի պահին: Կարեռ է և այն, որ վերոհիշյալ ներկայացումն սկզբում ընտանիկան բնույթ է կլոել, ապա, տեղափոխվելով ներսիսյան դպրոցի դահլիճ, ստացել է հասարակական նշանակություն:

«Խելքից պատուհասի» այս երկու ներկայացումները հարկավոր շափով ուսումնասիրված չեն: Որոշ խնդիրներ դեռ լուսաբանության կարու են: Մեր նպատակը չէ այդ ներկայացումների պատմությունը տալ, ոչ էլ հավակնություն ունենք հանձն առնել լուսաբանելու բոլոր շալարդված հարցերը: Մեզ զբաղեցնողն այսուհեղ առաջին բեմադրության հետ կապված երկու խնդիր է միայն:

Մինչև հիմա այնպես է ներկայացվել իրը «Խելքից պատուհաս» երեանյան բեմադրությունը երջանիկ պատահականության հետեանքով տեղի ունեցած մի դեպք է: Այս այնքան էլ ճիշտ չէ, որովհետեւ սկզբնաղբյուրները, ավելի ստույգ՝ նրանցից մեկը, որտեղից քաղված է «Խելքից պատուհասի»

ներկայացման փաստը, այլ վկայություն է պարունակում։ Մինչև հիմա այդ վկայությունը պարզապես նկատի չեն առել անմահ կոմեղիայի անդրանիկ բեմագրությամբ զբաղվողները։ այդ թվում և մենք, որ մի առիթով անդրադարձել ենք այդ ներկայացմանը¹։

Գրիբոյեդովի կոմեղիայի անդրանիկ բեմագրության մասին բավականաշատ շատ է գրվել, սակայն այդ ամբողջ գրականությունն ստեղծվել է երկու փաստաթղթի հիման վրա։ Դրանցից մեկը և ժամանակագրական կարգով առաջինը Դմիտրի Զուբարյովի հոգվածն է, որ գրվել է ու լույս է տեսել 1832-ին, ճիշտ է, այլ առիթով, բայց որտեղ շափականց արժեքավոր հիշատակություն կա «Խելքից պատուհասի» մասին²։ Երկրորդը՝ վերաբերում է ավելի ուշ շրջանի. 1874-ին Ա. Վեսելովսկին հրապարակեց ««Խելքից պատուհասի» սկզբանական պատմության ակնարկներ» վերնագրով ուսումնասիրությունը, որտեղ խոսվում է նաև կոմեղիայի երեանյան բեմագրության մասին, հիմնվելով մի ժամանակցի հաղորդած տեղեկությունների վրա։

Մեզ հետաքրքրուղ վկայությունը գտնում ենք այդ երկրորդ փաստաթղթում. բերում ենք մեզ հետաքրքրող հատվածը։ Ահա թե ինչ է գրում Վեսելովսկին։

«1827 թվականին Երևանի շրջանի օկուպացիոն 20-րդ հետևակ դիվիզիայի պետ Ա. Ի. Կրասովսկին... կազմակերպել էր Երևանում թատրոն, որը սպաները բեմագրում էին ընտիր պիեսներ, որոնց թվում և «Խելքից պատուհասը», որը դեռ տպագրված չէր և տարածված էր ձեռագրերով»³։

Ուրեմն՝ խոսքը վերաբերում է ոչ թե մի ներկայացման, այլ, թեև կարճատե շրջան, բայց մի առժամանակ գործող

1 «Սովետական հայաստան», 1945, № 4:

2 „Тифлисские ведомости“, 1832, № 3.

3 „Русский архив“, 1874, книга VI. Թարգմանությունը բերում էնք Գրիբոյեդովի մասին «Նոր ուղիում» տպագրված Մ[ամկոն] Պ[ետրովյանի] հոդվածից (1929, № 2—3)։

թատրոնի, որտեղ բեմադրվել են մի շարք պիեսներ, այդ թվում
նաև «Խելքից պատուհասը»:

Ահա սրա վրա է, որ մինչև հիմա ոչ մի ուշադրություն չի
դարձվել և այդ կապակցությամբ բոլոր գրողներն էլ այնպես
են ներկայացնում փաստը, թե իր խոսքը մի առանձին և
պատահական ներկայացման մասին է:

Ով փոքրիշատե ծանոթ է այդ շրջանի ուսական գրամա-
տուրիային, վստահ կարող է ասել, որ մյուս, թեկուզ և ըն-
տիր անվանված պիեսները, որ խաղացվել են այդ թատրոնում,
չեն կարող ներկայացնել այն հետաքրքրությունը, ունենալ
այն արժեքն ու նշանակությունը, ինչ «Խելքից պատուհասը»:
Կարեորն այն է, որ Երևանում հիմնվել է թատրոն, որի գործու-
նեությունը ուսական կուլտուրայի պրոպագանդա է հանդի-
սացել: Չենք կասկածում, որ կդա ժամանակ, երբ կպարզվի,
թե բացի «Խելքից պատուհասից» ինչ պիեսներ են խաղացվել
և գործի վլուխն իսկապես ովքեր են կանգնած եղել:

Շատ է կարեոր և այն հարցը, թե ինչն է ուսւ սպաներին
ստիպել բեմադրել «Խելքից պատուհասը»: Արդյոք դա մի
պատահական ընտրություն է, թե դրա տակ թաքնված է Գրի-
բոյենվի պիեսում արտահայտված զաղափարների նկատ-
մամբ ներկայացման մասնակիցների ունեցած համակրությու-
նը, ավելին, գուցե և այդ զաղափարները արտահայտելու, տա-
րածելու նրանց խիզախ ձգտումը:

Այն շրջանում բավականաշափ դեկաբրիստներ էին աք-
սորված Կովկաս: Նրանց թիվը քիչ չէր և Երևանը գրավող զո-
րամասների մեջ: Վրաց տեսաբաններից Վ. Շագուրին իր մի
հետազոտության մեջ, որ կոչվում է «Գրիբոյենվիլ և 1820-
ական թվականների վրաց զբական-հասարակական շրջաննե-
րը»¹, հիշատակում է Կովկաս աքսորված դեկաբրիստների

¹ „Литературное наследство“, 47—48, А. С. Грибоедов,
1946, стр. 276.

բավական մի մեծ խումբ. 1826-ին 6 հոգի, 1827-ին՝ 9 և 1828-ին՝ 4, ավելի ուշ՝ 15. այդ թվում այնպիսի անվանի դեմքեր, ինչպիս զրողներ Բեստովիկ-Մանկիսկին, Օդուսկին, Տեպլյակովը, Շիշկովը (երկրորդ) և ուրիշները¹: Պրոֆ. Պարսամյանը Գրիբոյեդովին նվիրված իր աշխատության մեջ մի շաբաթ հետաքրքրական փաստեր է բերում աքսորցալների նկատմամբ Գրիբոյեդովի ունեցած վերաբերմունքի մասին²: Նա միաժամանակ այն, ճիշտ է հարեւանցի, բայց շատ հավանական միտքն է հայտնում, թե «Խելքից պատուհասի» բեմադրությունը Երևանում կարող է կապված լինել «դեկարտիստների գործունեության, նրանց ձգտումների ու ցանկությունների հետ»³:

Նիկոլայ առաջինը երկյալ ունենալով, որ դեկարտիստների կուտակումը Կովկասում, այն էլ այդպիսի մեծ թվով, կարող է «անցանկալի հետեանքներ» տալ, Կովկասի գլխավոր հրամանատարից պահանջում էր խստագույնս հետևել նրանց: Եվ չնայած ցարական կառավարության ձեռք առած բոլոր միջոցներին, Կովկասում գտնվող դեկարտիստները, ինչպիս և նրանց համախոհները համախմբվելու հնարք գտնում էին: Մեմուարային գրականությունից, հատկապես դեկարտիստ Ա. Ս. Գանգերովի, Միխ. Բեստովիկի և բարոն Տորնառուի հիշողություններից պարզվում է, որ նրանք ընկերական զրուցի պատրվակի տակ հավաքվում էին երբեմն մեկի, երբեմն մի ուրիշի տանը: Շաղուրին ասում է, թե՝ դեկարտիստները Թիֆլիսում և այլուր, որոշ տեղեկությունների համաձայն, 20-ական թվականների երկրորդ կեսին, ունեցել են նույնիսկ կազմակերպված խմբակներ, ուր, ի միջի այլոց, հաճախ կարդացվել

¹ „Литературное наследство“, 47—48, А. С. Грибов, 1946, стр. 283.

² Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, 1947, էջ 66:

³ Նույն տեղում էջ, 68:

է նաև «Խելքից պատուհասը»¹: Այս փաստերը ցույց էն տաւիս, թե իր գաղափարական բովանդակությամբ Գրիբոյեդովի կոմիդիան որքան մոտ էր ու հարազատ դեկարժիստներին: Ավելորդ չենք համարում հիշել նաև այն, որ սովետական գրականագիտական միտքը հանձին Մ. Վ. Նեշկինայի բավական հիմնավոր և խորը կերպով կարողացել է ցույց տալ, որ Գոբրյանքովի կոմիդիան մտահղացվել, աճել ու զարգացել է նրա հետ միաժամանակ ծնունդ առած դեկարժիսմի շրջանում, որը և հանդիսացել է կոմիդիայի ծննդյան հասարակական մթնոլորտը²:

Ահա թե ինչու մեղ թվում է ոչ անհիմն այն հնթագրությունը, թե «Խելքից պատուհասի» բեմադրությունը Երևանում կարող է կատված լինել դեկարժիստների, ընդհանրապես ուստահաջախոր մարդկանց գործունեության հետ Կովկասում:

Նկատենք, սակայն, հետեւյալը. Վեսելովսկու հրապարակած փաստաթղթում, որ այդ հարցով զբաղվող բոլոր բանասերներին հայտնի է, կա մի վկայություն, որի վրա անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել «Խելքից պատուհասի» առաջին բեմադրության մասին գրողները, դրանց թվում և պրոֆ. Պարսամյանը:

Պահպանվել է վկայություն ոչ միայն այն մասին, որ

¹ «Литературное наследство», 47—48, А. С. Грибоедов, 1946, стр. 278. Այսական անհրաժեշտ ենք համարում ասել, որ մեր այս հոդվածի հրապարակումից հետո («Գրական թերթ», 1951, № 10) պըոֆ. Պարսամյանն հանդես եկավ «Դեկարժիստները հայտատանում» խորագիրը կրող նախնական հազորդումով («Գրական թերթ», 1951, № 48), ուր հիշատակում է մի շարք դեկարժիստների անուններ, որոնք իրենց քաջազործություններով աչքի են բնկել ինչպես 1827-ի հուլիսի 5-ին Արաքսի ափին Զեան-Բուլաղի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում, այնպես էլ նույն թվի հոկանմբերի 1-ին Երևանի քերզը զբավելիս: Հոդվածում բերված է հարություն Ալամդարյանի նամակը դեկարժիստ Միխայիլ Իվանովիչը՝ Պուշչինին՝ դրամական օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին: Ալամդարյանը Պուշչինին անվանում է «հանճարեղ երիտասարդ» և այլն:

² М. В. Нечкина, А. С. Грибоедов и декабристы, 1947.

Թատրոն է հիմնվել Երևանում, պիեսներ գն խաղացվել, այդ թվում և «Խելքից պատուհասը», այլև այն, որ այդ ներկայացումները «երկար չեն տևում և փակվում են դրաֆ Պասկեիշ-Երևանսկու հրամանով»¹:

Այն, որ Երևանում կազմակերպված թատրոնի ներկայացումները առիթ են տվել Պասկեիշին այդպիսի կտրուկ միջոցառման դիմել, մի որոշ շափով լույս է սփոռում այն հարցի վրա, թե վերոհիշյալ ներկայացումներն ընդհանուր առմամբ վերցրած ինչ բնույթ են կրել: Այս փաստը վկայում է այն մասին, որ Երևանյան թատրոնը, թեկուղ և իր կարճատև գործունեությամբ, կասկածի տեղիք է տվել, գուցե և դիտվել է որպես պետության կողմից անբարեհույս ճանաչված տարրերի գործունեության հնարավոր մի ձև: Պասկեիշը հազիվ թե ընդհանրապես դեմ լիներ ներկայացումներ տալու, որովհետեւ նրա օրոք և մանավանդ նրանից առաջ, Երմոլովի տարիներին ընտանելիան ներկայացումները, հատկապես Ռիֆլիսով, ընդունված էին, և բավականաշափ տարածված լինելով, կարելի է ասել՝ նույնիսկ կուլտուրական տրադիցիա էին արդեն դարձրել: Իսկ եթե այդ այդպես է, ապա ուրեմն Երևանի թատրոնը նրա կողմից փակելու փաստի մեջ, միանդամայն իրավացի, կարող ենք քաղաքական բովանդակություն դնել: Ասել է թե թատրոնի գործունեության, այդ ներկայացումների մեջ Պասկեիշը տեսնում էր այնպիսի կողմեր, որոնք հակասում էին պետության շահերին, ուուսական ցարիզմի դիրքերի ամբապնդմանը նորանվաճ երկրում:

Ինչպես ասացինք՝ հայտնի չէ, թե բացի «Խելքից պատուհասից» էլ ինչ պիեսներ են խաղացվել: Երևելուսական վոդեվիլներ, որոնք շափաղանց տարածված էին և շատ էին խաղացվում այն ժամանակվա դավառական թատրոններում: Սակայն վստահ կարելի է ասել, որ հազիվ թե թատրոնը փակելու միտքը Պասկեիշը հղանար մի այլ գործի, ասենք վոդեվիլների կապակցությամբ, քան Գրիբոյեդովի կոմեդիայի:

¹ „Русский архив“, 1874, книга VI.

Գերցենն ասում էր թե՝ զայրույթից վրդովված, երազով և պաղափարներով լի Զացկին հանդես եկավ Ալեքսանդր առաջինի թագավորության վերջին պահին և Խսակովյան հրապարակում տեղի ունեցած ապստամբության նախօրյակին: Զացկին դեկարիստ է¹, — եզրակացնում էր նա: Բայց այդ հասկանում էին դարաշրջանի ոչ միայն առաջավոր մարդիկ, այլև ոեակցիոնները, որոնք ամեն չափ դործ էին դնում արգելքի տակ պահելու ուստ զրականության ու թատրոնի երևելի կողովներից մեկը:

Տեղին է այսաեղ հիշել, որ չնայած «Խելքից պատուհանը» լույս չեր տեսել, այլ տարածվել էր միայն ձեռագիր վիճակում, սակայն 1825-ին նրա գնահատության շուրջը ծավալվեց մի այնպիսի պայքար, որը զրույտում էր զրականության մեջ գործող հակագիր ուժերի բախումը:

Պայքարի համար առիթ հանդիսացավ Գրիբոյեդովի վաղեմի հակառակորդի հոդվածը «Խելքից պատուհասի» լեզվի դեմ: Սրան պատասխանեց Ա. Բեստովելը, այնուհետեւ կոմեդիայի պաշտպանությամբ հանդես եկավ Օ. Սոմովը, որին, սակայն, ծաղրեց Ա. Ի. Պիսարել՝ լույս բնձայելով պարզապես մի հայնոյական հոդված «Խելքից պատուհասի» դեմ: Պայքարին մասնակից գարձավ նաև Վ. Ֆ. Օդուսկին, որն ամենաուզու վիճի մեջ մտնելով Մ. Ա. Դմիտրեկի հետ՝ բարձր գնահատեց Գրիբոյեդովի երկը: Վերջինիս դեմ հանդես եկավ նորից Պիսարելը, և ինչպես անցյալ անգամ, նույնպես և այժմ, թարնվելով Պիլցադ-Բելուդին ծածկանվան տակ, հարձակվեց Գրիբոյեդովի և նրա պաշտպանների վրա: Ահա այսաեղ էլ պայքարն ընդհատվեց, որովհետեւ վրա հասավ 1825-ի դեկտեմբերի 24-ը:

«Խելքից պատուհասի» շուրջը սկսված և ընդհատված պայքարի հիմնական հարցն այն էր, թե Գրիբոյեդովը արդյոք ճիշտ է պատկերել իրականությունը: Ռեակցիոն թեր անխնա-

¹ М. В. Нечкина, А. С. Грибоедов и декабристы, 1947, стр. 10.

քննադատության ենթարկելով կոմիզիան, պնդում էր, թե
Նրանում պատկերված իրականությունը հնարված է, ոչինչ
քնդհանուր չունի կյանքի հետ։ Կոմիզիայի պաշտպանները
մեծ մասամբ գեկաբրիստական շարժման ներկայացուցիչներ
էին կամ նրանց համախոհներ։ որանք պնդում էին, թե ընդ-
հակառակը՝ կոմիզիայում ճիշտ է արտացոլված կյանքը և,
եթե հակառակորդներն այսպես կատաղում են, ապա նրա
համար, որ զրիբոյեդովյան հայելու մեջ տեսել են իրենց սե-
փական պատկերը¹։

Մենք չդիտենք Պասկեիչը հասկանում էր արդյոք, որ նոր
միայն զրավլած երեսնում մերկացվում է ֆամուսովյան
Մուկվան, այն սոցիալական ուժը, որի վրա հենվում էր ռազ-
մա-ֆեոդալական ցարիզմը, որ բեմից ներկայացվում է մի
մարդու կերպար, որն ընդուս հակադրվում է հասարակու-
թյանը, ամեն տեսակի բռնության և կրքոտ պաշտպանում է
մարդու ազատությունը, նրա արժանապատվության բարձր
գգացումը։ Մենք չդիտենք, Պասկեիչը հասկանում էր, որ
Զացկու կյանքը բեմի վրա հասարակական-քաղաքացիական
վարքագծի բարձր օրինակներից է։ Պասկեիչը, լայն մտահո-
րիզոնից զուրկ, սահմանափակ Պասկեիչը դժվար թե հասկա-
նար այս ամենը։ Եվ դուքս զրա տուանձին կարիքը չկար ել.
սակայն նրա շրջապատում քիչ չին այնպիսիները, որ հաս-
կանալով և պարզելով զրա վտանգավորությունը կհուշեին
նրան թատրոնն անհապաղ փակելու միտք։

Այդ տեսակետից շափազանց բնորոշ է հետեւյալ փասար։
Կովկասի փոխարքա Վորոնցովի նախաձեռնությամբ,
ինչպես հայտնի է, 1845-ին, Թիֆլիսում ուսաւական թատրոն
հիմնվեց։ Թատրոնի նպատակը պետք է լիներ, ինչպես զրել
է Վորոնցովը ցարին ուղղված զեկուցագրի մեջ, նպաստել
«տեղացիների միաձումանը ուսւներին»։ Այս թատրոնում

¹ М. В. Нечкина, А. С. Грибоедов и декабристы, 1949,
стр. 411—426.

այլ պիեսների հետ միասին ներկայացվել են նաև «Խելքից պատուհասը» և «Ռեփողը»: Անդրադառնալով ռուսական թատրոնի գործունեության հարցերին, Սոլոգուրն իր մի, թեև լրագրային, բայց բավական ընդարձակ հոդվածում, որ կոչվում է «Նոր թատրոն Յիֆլիսում», կասկած է հայտնում, թե որքան արդյոք նովատակահարմար է ներկայացնել այնպիսի պիեսներ, ինչպես «Խելքից պատուհասը» և «Ռեփողը»: «Միթե,— գրում է Սոլոգուրը,— բանալով նրա (այսինքն՝ տեղական ժողովրդի) առաջ թատրոնի գոները, ցույց տալով նրան գործունեության նոր ասպարեզ, մի նոր, մինչեւ օրս նրա համար անհայտ հաճույքը, մենք միայն սովորեցնելու ենք նրան դառը և խելոր ծիծաղել մեղ վրա, ծանոթացնելով նրան «Ռեփողի» և «Խելքից պատուհասի» հետ»¹: Եթի այդպես մտածել են 40-ական թվականներին, ինչու այդպես չեին կարող մտածել նաև 20-ական թվականներին Պասկեիչի շրջապատում գտնվող ցարական պաշտոնյաները, նամանավանդ որ կոմեդիան այդ ժամանակ արդելի տակ էր: Միանգամայն բնական է, որ ցարական պաշտոնեությունը կառավարության և երկրում տիրող դասակարգերի համար միանգամայն անշահավետ և նույնիսկ վտանգվավոր պիտի ճանաչեր Գրիբոյեդովի կոմեդիայի տարածումը, այն ել բեմից և մանավանդ Կովկասում: Հստ որում նկատենք, որ Գրիբոյեդովի մահից հետո նրա կոմեդիան թույլ տրվեց ներկայացնել Մոսկվայում և Պետերբուրգում, բայց ոչ երկրի ծայրամասերում, ուր եղած բեմադրությունները կրել են էպիզոդիկ բնույթ, քանի որ «Խելքից պատուհաս» կոմեդիայի բեմադրությունը զավառական բեմերում «բարձրագույն հրամանով արգելված էր»: Այդ արգելքը վերացել է միայն 1863-ից:

Այսպիսով, ռուսական թատրոնի գործունեությունը երևանում և հատկապես «Խելքից պատուհասի» բեմադրությունը

1. «Կավկազ», 1851, № 29. (Մեջբերումը կատարված է «Տeatr v. Տիֆլիսе с 1845—1856 թթ. աշխատությունից, էջ 71»)

Նրա բեմի վրա, ոչ միայն ուշադրության արժանի փաստ է որպես կոմեդիայի անդրանիկ ներկայացում, ինչպես մինչև Հիմա դիտվել է, այլև որոշ հասարակական-քաղաքական առամադրություններ արտահայտող երևույթ:

1951

ՆՈՐԱՀԱՅՑ ՄԻ Էջ «ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՀԱԾԻ» ՎԱՂ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵջ

«ԽԵԼՔԻՑ պատուհասի» երեանյան բեմադրության կապակցությամբ մի այսպիսի միտք է հայտնված.

«Փաստը մնում է փաստ, որ հայ ժողովրդի լավ բարեկամի անմահ գործի առաջին և հեղինակի կենդանության ժամանակ միակ բեմադրությունը կատարվել է Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևանում»^{1:}

Այս միտքը հայտնվել է և առաջ^{2:} Հիմա էլ հաճախ կրկնվում է: Եվ զարմանալի չէ, որովհետեւ հրապարակի վրա եղած փաստերը այդպիսի վկայություն են տալիս: Մի փոքր այլ կերպ է խորհում պրոֆ. Ֆիլիպովը: Վերջինս «Գրական ժառանգության» դրիբոյեգովյան հատորյակում հրապարակել է մի տեսություն, որ կոչվում է ««Խելքից պատուհասի» վաղ բեմադրությունները», ուր ասում է, թե՝ «հեղինակի կենդանության օրով «Խելքից պատուհասը» բեմադրելու երեք փորձ է կատարվել». առաջինը՝ թատերական ուսումնարանի սաների փորձն է (1824) բեմադրելու առանձին հատվածներ, որ սա-

1 Վ. Ա. Պարսամյան, Ա. Ա. Գրիբոյեդովը և հայուսական հարաբերությունները, 1947, էջ 71:

2 Նույն միտքը կարելի է գտնել և մեր հոդվածում. «Դա եղավ «Խելքից պատուհասի» առաջին և վերջին ներկայացումը հեղինակի կենդանության օրով և նըա ներկայությամբ» («Սովորական հայաստան», 1945, Էջ 4):

կայն, չներկայացված արդելվեց: Երկրորդը՝ երեանյան բեմագրությանն է (1827) և վերջապես՝ որպես երրորդ փորձ նա նշում է Պետերբուրգում տեղի ունեցած մի շրջիկ ներկայացում¹: Վերջինիս թվականը Ֆիլիպովն անհասկանալի պատճառներով չի հիշատակում, թեև մատնանշում է այն ավրյուրը, որտեղից քաղել է նա այդ տեղեկությունը²:

Սակայն խնդիրն այն է, որ նրա մատնանշած ավրյուրը ոչ այլ ինչ է, քայլ եթե հենց այդ ներկայացման մասնակիցներից մեկի հիշողությունները: Հուշերի հեղինակը Մ. Ղամազյանն է, որ այդ ներկայացման մեջ, ինչպես արդեն մի առիթով ասել ենք, կատարել է Խլեստովյայի դերը: Ղամազյանը պատմում է ներկայացման մանրամասնությունները և նշում թվականը: Ղամազյանի ասելով, իսկ մենք նրան շհավատալու ոչ մի հիմք չունենք, այդ ներկայացումը տեղի է ունեցել Պետերբուրգում, 1830-ին³: Ուրեմն՝ ոչ թե Գրիբոյեդովի կենդանության ժամանակ, այլ նրա մահից հետո: Հետաքրիբն այն է, որ «Գրական ժառանգության» գրիբոյեդովյան հատորում Ֆիլիպովի տեսությանը հաշորդում է Լ. Իլինսկու ««Խելքից պատուհասը» գալառական բեմում» վերնագրով տեսությունը, ուր նույնպես խոսվում է պետերբուրգյան ներկայացման մասին, պարզ և որոշ հիշատակելով ժամանակը⁴:

Զնայած այս սոսկ բանասիրական կարգի թյուրիմացությանը, պետք է ասել, որ Գրիբոյեդովի կենդանության ժամանակ «Խելքից պատուհասը» ներկայացնելու, իրոք, երեք փորձ է եղել, առաջին երկուաը հենց այն, որ նշում է պըսփ. Ֆիլիպովը, իսկ երրորդը մի բեմագրություն է, որը վերջերս միայն հայտնի դարձավ:

¹ „Литературное наследство“, 47—48, А. С. Грибоедов, 1946, стр. 299.

² Նույն տեղում, էջ 323:

³ „Вестник Европы“, 1875, книга VII.

⁴ „Литературное наследство“, 47—48, А. С. Грибоедов, 1946, стр. 334.

Այսպես ուրեմն՝ նոր, այս վերջերս միայն գտնված փաստերը ցուց էն տալիս, որ այն պնդումը, թե միակ ներկայացումը, որին ներկա է եղել հեղինակը, երևանյանն է, ճիշտ չէ: Պարզվում է, որ երևանյան ներկայացումը Գրիբոյեդովի անմա՞ճ գործի առաջին բեմադրությունն է, բայց ոչ միակը հեղինակի կենդանության օրով: Նոր փաստերն ու ավալները վկայում են «Խելքից պատուհասի» առաջին ներկայացմանը շատ կարճ ժամանակից հաջորդած մի այլ բեմադրություն Թիֆլիսում, ոչ միայն հեղինակի ներկայությամբ, այլև նրա դիկավարությամբ կազմակերպված ներկայացում, որի պատմա-հասարակական նշանակությունը մեզ համար մի շաբք կողմերով տնշափ հետաքրքիր է:

Այդ ներկայացման մի շաբք մանրամասնությունները գտնում ենք Երևանի Թատերական թանգարանում գտնվող՝ Գարեգին Երիցյանի ձեռադիր մի աշխատության մեջ, որը հայ թատրոնի պատմության նոր շրջանի ուսումնասիրության տեսակետից հետաքրքրական փաստական նյութ է պարունակում:

Գարեգին Երիցյանը անցյալում հայտնի բանասեր և պատմաբան Ալեքսանդր Երիցյանի որդին է: Եվ այս աշխատությունն, ըստ երկուցին, զոված է Հոր Հարուստ արիստիֆի Հիման վրա¹: Իսկ Երիցյանը, ինչպես հայտնի է, կապված է

1 Այս հոգածը հրապարակելուց առաջ, գեռես 1950-ին, նամակով զիմեցինք Անինդրագում ապրող Գարեգին Երիցյանին, խնդրելով պարզել մի քանի արականուանք: Երիցյանից պատասխան շտամալով, ստիպված եղանք հրապարակել հոդվածը («Գրական թերթ», 1951, № 17): Սակայն մոտ եղեք և կհս տարի հետո ստացվեց Երիցյանից նամակ: Պարզգում է հետեւյալը, պատրաստվելով պատասխանել, այնքան է զրել որ ստացվել է Գրիբոյեդովի մասին շուրջ 5 մամուլից բաղկացած մի աշխատություն, որի մեջ, ինչպես ասված է նամակում, ստրվում են մինչև հիմա բոլորովին անհայտ և բանաստեղծի կենսագիրների համար արմեքավոր տեղեկություններ: Այդ նյութերը բարձել եմ, — զրում է Երիցյանը, — Յուրի (Գեորգ) Ալեքսանդրովի տետրերից, որ պահպում էին իմ հոր արիստիֆում: Իր տետրերում Ալեքսանդրովը

հղել հայ թատրոնի հետ, սկզբում որպես դրամատուրգ և ռեժիսոր է աշխատել իր թատրոնի պատմության ուսումնասիրությունների հեղինակ։ Նրա պատմագիտական աշխատությունները գրված են, ճիշտ է, պահպանողական դիրքերից, բայց հագեցած են փաստական հարուստ նյութով։ Արան ավելացնենք և այն, որ Երիցյանը որպես պատմաբան բավական շատ է զբաղվել XIX դարի առաջին հիսնամյակով և իր բանասիրական ջանադիր պրատումների շնորհիվ ահապին փաստաթղթեր է կուտակել այդ շրջանի հասարակական, կուլտուրական անցուդարձի մասին։ Պարզ է, որ նրա արխիվը պետք է հարուստ լինի հետաքրքիր և արժեքավոր վավերագրերով։

Ահա այդ ներկայացման մի քանի մանրամասնությունները:

«Խելքից պատռւհասի» երևանյան բեմադրությունն այնքան է ողերում Գրիբոյեդովին, որ նա որոշում է կազմակերպել իր կոմեդիայի բեմադրությունը նաև Թիֆլիսում։ Տեղ հասնելուն պես նա գործի է անցնում։

Գրիբոյեդովը, ինչպես հայտնի է, մոտիկ հարաբերությունների մեջ էր կովկասյան հրետանու նախկին պետ, հանգուցյալ Հախվերդյանի ընտանիքի հետ։ Հախվերդյանի կինը՝ Պրոսկովյան Նիկոլաևնան, որ Լեռմոնտովի մորաքուցն

դրի է առել ամեն ի՞նչ, որ լսել է Պրոսկովյա Նիկոլաևնա Ախվերդու վայից, արգեն Պետքը բուրգում եղած ժամանակը, և մասամբ էլ նինա Ալեքսանդրովնա Գրիբոյեդովյաից: Այսուեղ մանրամասնորին խսովում է Գրիբոյեդովի զերպերմունքի մասին զեպէ Ախվերդովի, ձայնավաճե և Գրիբոյեդովի զերպերմունքի մասին զեպէ Ախվերդովի, Մադարու և Ֆերուտով ընտանիքները, Մուրավյովի, Շերմազանովի, Մադարու և Ֆերուտով ընտանիքները, Մուրավյովի, Հային նաև տեղեկություններ մի վիշի և Զավիլեյսկու նկատմամբ, կային նաև տեղեկություններ մի վիշի և Զավիլեյսկու նկատմամբ, կային նաև տեղեկություններ մաքանի թիվլիսահայերի հետ բանաստեղծի ունեցած ծանոթության մաքանի թիվլիսահայերի հետ բանաստեղծի ունեցած ծանոթության մասին, շատ մանրամասն նկարագրվում էին և կերպությոց պատուհասիք բեմուն, շատ մանրամասն նկարագրվում էին թիվլիսում, պատումում այն աների մագրությունները Երևանում և Թիվլիսում, պատումում այն աների մասին, ուր ապրել կամ հաճախ լինում էր նա և այն: Հայրս շատ հետաքրքիր տեղեկություններ էր քաղել նաև Եվլախովից Շերմազանիանից, էմին Տեր-Գրիգորյանից, Գ. Զմշկյանից, Մ. Ամրիկյանից և ուրիշներից:

էր, Գրիբոյեդովի հետ ծանոթ էր Պետերբուրգից և մտտիկ բարեկամական կապերի մեջ էր, նամանավանդ որ դրամատուրգը քնքուշ զգացումներ էր տածում գեղի նրա քույրը՝ Դարսիա Խվոստովան: Այս ընտանիքի հետ կապված էին Թիֆլիսի նշանավոր մարդկանցից շատերը, այդ թվում նաև Ճավաճավաճենները: Հայտնի վրաց բանաստեղծ, իշխան Ալեքսանդր Ճավաճավաճեն, իր աղջիկների, այդ թվում և նինայի դաստիարակությունը հանձնել էր Հայսվերդյանի կնոջը: Մտածելով, որ իր կինը՝ Սալոմեն, թեև իշխանութիւն, բայց հաղիվ թե ի վեճակի լինի նրանց դաստիարակելու, ինչպես հարկն է, տալու նրանց այն, թեկուզ արտաքին փայլը, որ այնպես անհրաժեշտ էր բարձրատոհմիկ ընտանիքների, ընդհանրապես ազնվականական շրջանում:

Պրոսկովյան նիկոլուսենան պետերբուրգյան սալոնների օրինակով սիրում էր հավաքույթներ, երեկոներ կազմակերպել, իր շուրջն համախմբելով ինչպես սուս, այնպես էլ վրացական և հայկական բարձրաստիճան պաշտոնյաներին, մայրաքաղաքի ինտելիգենցիայի աշքի ընկնող գեմքերին: Գրիբոյեդովին այդ «սալոնի» մշտական և, իհարկե, սիրված այցելուներից էր. սրամությունը, բազմազան լեզուների խմացությունը, բացառիկ հարուստ էրուպուցիան, գրական համբավը և վերջապես՝ փայլուն դաշնակահարությունը նրան կարճ ժամանակից դարձրել էին սալոնի կենտրոնական գեմքը: Նինայի հետ նշանավոր դրամատուրգը ծանոթացել ու մտերմացել է Հայսվերդյանների տանը:

«Ենելքից պատուհասը» ներկայացնելու իդեան Հայսվերդյանների տանը և նրանց շրջապատում գտնում է ջերմ արձագանք: Դերերը բաշխվում են գլխավորապես նրանց տան այսպես ասած «սալոնի» մշտական համախորդների մեջ:

Փորձերը կատարվում էին Հայսվերդյանների տանը, իսկ ներկայացումը տեղի է ունենում իշխան Բագրատիոնի մոտ: «Ենելքից պատուհասի» բնմադրությանը ներկա դանվելու ցանցացողների թիվն այնքան մեծ է լինում, որ ստիպված էին

ներկայացումը տեղափոխել ներսիսյան դպրոցի շենքը։ Շատ կարևոր է ներկայացման պատմության տեսակեաից այն ժամանքը, որ հայ հոգեոր իշխանությունը դեմ է եղել դպրոցական գահին թատերասրահ դարձնելուն, այդ պատրվակի տակ, ըստ երևուցին, թագանելով պետության կողմից արգելված պիհեսի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքը։ Սակայն ժետ ստիպված է իինում զիջելու հստ երևուցին, այդ հարցում դեր է խաղում Հնդինակի պաշտոնական շրջաններում ունեցած բարձր դիրքը, նրա բարեկամական կապերը երկրի զլխավոր կառավարիչ Պասկեիչի հետ¹։

Ներկայացման մասնակիցների մասին, դժբախտաբար, շատ քիչ տվյալներ են պահպանվել։

Սիցողներին քաջալերելու համար տանտիրուհին հանձն էր առել կատարելու պառավ կոմսուհու դերը։ Նինա Ճավճաւածեն կատարում էր նրա աղջիկներից մեկի դերը։

Ներսիսյան դպրոցի գահինում «Խելքից պատուհասը» մի քանի անգամ խաղալուց հետո, ներկայացումները կրկին տեղափոխվում են իշխան Բագրատիոնի տունը, որովհետեւ արխուտուկատիան և ընդհանրապես հասարակության, այսպես կոշված, արտոնյալ շրջանին պատկանող հանդիսատեսները շենցանկանում շփվել ներսիսյան դպրոցի գահին հաճախող «խառն» հասարակության հետ։

Ահա այս շրջանում Գրիբոյեդովն ամուսնանում է Նինա Ճավճաւածենի հետ։ Հեղինակի և նրա գեռահաս կնող Պարսկաստան մեկնելուց առաջ մի և փաստորեն վերջին անգամ ներկայացվում է «Խելքից պատուհասը», բայց այս անգամ արդեն Ճավճաւածեների տանը։

¹ Մեզ հայտնի աղբյուրներում հաղեղականության դիմադրության մասին ոչ մի հիշատակություն չկատ. Սակայն, կարեռելով վաստակ, մենք բերում ենք, քաղելով այն որով. լ. Քարանթարի ուսուհայկան թատերական կապերի պատմություն հարցին նվիրված զեկուցումից, ենթադրելով, որ մի այսպիսի հայտարարություն անելու համար նա անպայման ունեցել է որևէ հիմք։

Բացի այս տմհնից, Գարեղին Երիցյանը հայտնում է նաև, որ Գեորգ, այն ժամանակ Յուլի Ախվերդյանի ձեռքով կազմված ներկայացման ծրագրի մի օրինակը պահպանվել էր իր Հոր՝ Ալեքսանդր Երիցյանի թատերական արխիվում:

Ահա այսքանով էլ սպառվում են այն տեղեկությունները, որ զանգ Երիցյանի ձեռագիր աշխատության մեջ զրիբոյեթովյան նորահայտ ներկայացման մասին:

Այժմ տեսնենք, թե Գարեղին Երիցյանի հաղորդած ներկայացման մասին զրականության մեջ որևէ այլ հիշատակություն պահպանվե՞լ է, թե ոչ և ընդհանրապես հնարավո՞ր է որևէ այլ հետք գտնել:

Այդ ուղղությամբ մեր հատարած որպտումներն առայժմ տվել են հետեւյալ արդյունքը:

Այդ մասին մի անուղղակի ակնարկ գտնում ենք կոմիդիայի հին հրատարակություններից մեկում:

1875-ին լուս է տեսել «Խելքից պատուհասի» երկու հրատարակություն. մեկը Ա. Վեսելովսկու, մյուսը՝ Ի. Գարուսովի խմբադրությամբ: Վերջին հրատարակությունը կոմիդիայի քառասուներորդ հրատարակությունն է, որին խմբագիրը կցել է բազմաթիվ ծանոթադրություններ: Ահա այդ հրատարակության մեջ Գարուսովը տեքստային մի խնդրի կապակցությամբ առում է, թե՝ այդպիս է եղել «սկզբնական, Գրիբոյեդովի կողմից ուղղված այն օրինակում, որով «Խելքից պատուհասը» խաղացվել է Թիֆլիսում, հեղինակի ներկայությամբ»¹: Այնուհետև, նույն Գարուսովը մատնանշում է, որ տեքստի «70—73 տողերը Գրիբոյեդովի կողմից ուղղվել են 1827-ին Թիֆլիսյան ընտանեկան ներկայացման համար»²:

¹ А. С. Грибоедов, Горе от ума, редакция текста, примечания и объяснения составлены И. Д. Гарусовым, 1875, стр. 244.

² Նույն տեքստ, էջ 250:

է գտնվում թիֆլիսյան թատրոնի համար հեղինակի կողմից
ուղղված ձեռագիրը¹:

Քննադատությունը կշտամբել է Գարուսովին, ասելով, որ
նա փաստերը չփոխում է: Քննադատությունն ասում էր, թի՝
երևի խոսքը վերաբերում է երևանյան բնմադրությանը, որին
իսկապես ներկա է եղել հեղինակը, իսկ Թիֆլիսում «Խելքից
պատուհասը» առաջին անգամ ներկայացվել է 1832-ին, երբ
Գրիգորեան արդեն կենդանի չէր²:

Այժմ պարզվում է, որ քննադատությունը անիրավացի է
կշտամբել, որ Գարուսովը, թեև շփոթել է թվականը, 1828-ի
փոխարեն գրել է 1827, բայց մի որոշ հիմք է ունեցել Թիֆլի-
սում, 1832-ից ավելի վաղ, այն է 1828-ի եղած ներկայացման
կապակցությամբ հեղինակի կողմից փոփոխած տեքստի մա-
սին խոսելու: Գարուսովը, դժբախտաբար, չի հիշել աղբյուրը,
որը կարող էր օգնել երիցյանի հաղորդած փաստի ոչ միայն
հաստատմանը, այլև նրա մի շարք նոր, գուցե և շատ կարեոր
կողմերը լուսաբանելու:

Ահա և մի ուրիշ վկայություն:

Դրականության մեջ գտնում ենք մի անուղղակի հիշա-
տակություն:

Գրականության մեջ այն միտքն է հայտնվել, թե Գրիգո-
րյովի Թիֆլիսում լինելը, ինչպես և նրա ամուսնությունը
Ալ. Ճավախավաճեի աղջկա հետ, շփումը տեղական ազնվակա-
նության և ինտելիգենցիայի հետ, նպաստեցին, որ «Խելքից
պատուհասը» անդրկովկասյան շրջաններում բավական վաղ
տարածվի. «Խելքից պատուհասը» Թիֆլիսում տարածվել է ոչ
միայն ձեռագիր վիճակում, այլև, ինչպես տեսանք, ընտանի-
կան ներկայացումների ձևով: «Թատրոնը Թիֆլիսում 1845—
1856 թթ.» աշխատության մեջ Թիֆլիսում կազմակերպված
առաջին ուսուական ներկայացումների մասին, գրված է.

¹ А. С. Грибоедов, Горе от ума, редакция текста, примечания и объяснения составлены И. Д. Гарусовым, 1875, стр. 410.

² „Вестник Европы“, 1875, книга VII.

«Այն ժամանակ Թիֆլիսում պարբերական մամուլ չկար, որ հետաքրքրական մանրամասնություններ պահպաներ այն շըրջանի գեղարվիստակերների մասնավոր ձեռնարկումների մասին։ Բայց շատերի հիշողության մեջ մնացել են իշխան Պետրե Բաղրատիոնի, Գրիբոյեդովի աներ իշխան Ալեքսանդր Շավալաձեի տանը, ինչպես և Մուսիրանյան փողոցի մոտերքում զտնվող հայկական Ներսիսյան դպրոցում տեղի ունեցած «Խելքից պատուհասի» ներկայացումները»¹։

Թիվականը, դժբախտաբար, չի հիշատակվում, բայց ամենայն հավանականությամբ նկատի է առնված 1828-ի ներկայացումը, որը, ինչպես արգեն տեսանք, իրոք որ տեղի է ունեցել և՛ Բաղրատիոնի, և՛ Շավալաձեի տանը, և՛ ներսիսյան դպրոցում։

Այդ գրքի հեղինակը, ինչպես հայտնի է, Ալեքսանդր Երիցյանն է։ Վերջինս բավականաշափ լավ ծանոթ էր անցյալ դարի առաջին հիմնամյակի պատմաքաղաքական, հասարակական-կուլտուրական անցուղարձին, հետեւապես նա չէր կարող փաստական անիրազեկություն հանդիս բերել, թվականների ակնհայտ շփոթ թույլ տալ։ Ինչ-ինչ, բայց կասկածել, որ Երիցյանը չի իմացել, թե 1832-ին Թիֆլիսում պարբերական հրատարակությունն զոյտթյուն ունե՞ր, թե ոչ, ճիշտ չի լինի, եվ ճենց այն հանդամանքը, որ Երիցյանի նման փաստական նյութի լավատեղյակ պատմարանն ասում է, թե այն ժամանակ պարբերական հրատարակություններ չկային, բավական հիմնավոր վկայություն է, որ խոսքը վերաբերում է մի ներկայացման, որ տեղի է ունեցել մինչև ոչ միայն 1832-ը, այլ 1828-ի երկրորդ կեսից առաջ, որից հետո միայն Թիֆլիսում պարբերական մամուլ է հիմնվել։

Նույն մտքին հանդիպում ենք հայ պարբերական մամուլում լույս տեսած մի հոդվածով ևս
«Խելքից պատուհասի» անմահ կոմեդիայի հեղինակ

¹ «Театр в Тифлисе с 1845—1856», стр. 124.

Ա. Ս. Գրիբոյեդովի կենդանության ժամանակ, որը, ինչպես
հայտնի է, առաջին անգամ թատերասերները ներկայացրին
Թիֆլիսում, Ներոփայան դպրոցի դահլիճում: Թիֆլիսում այն
ժամանակ չկային պարբերական հրատարակություններ և այս
իրադարձությունները մնացին միայն ժամանակակիցների հի-
շողությունների մեջ¹:

Ասված է նաև, որ այս անգեկությունները «քաղված ևն
դիվանական փոշոտ քրոնիկոններից»²:

Հեղինակը, որ հայտնի չէ, թե ով է, որովհետեւ հոգվածը
լուս է տեսել անստրադիր, դժբախտաբար, թիվ չի մատնա-
նշել: Գուցե խոսքը 1832-ի ներկայացման մասին է, որը
նույնպես խաղացվել է Ներոփայան դպրոցում: Սակայն փաս-
տաթղթից քաղված բոլոր տվյալները լիովին համընկնում են
այն ամենի հետ, որ հաղորդվում է Երիցյանին վերազրվող
զրքում: Նախ՝ այստեղ խոսվում է այն մասին, որ պիեսը խա-
ղացվել է Հեղինակի կենդանության ժամանակ, ուրիմ՝
1832-ից առաջ: Հետո, ասվում է, որ դա եղել է այն ժամա-
նակ, երբ Թիֆլիսում մամուլ չկար, իսկ 1832-ին լուս
էր տեսնում «Տիֆլիսկie վեճություն»:

Շատ ցավալի է, որ Հոգվածի անհայտ հեղինակը փաս-
տաթուղթը բերելու փոխարեն, նրա բովանդակությունն է շա-
բագրել: Սակայն այն հանդամանքը, որ իր ասած տվյալները
նա վերցրել է, ինչպես ինքն է ասում՝ «գիվանական փոշոտ
քրոնիկոններից», իրավունք է տալիս մտածելու, որ մի օր
հնարավոր կլինի հայտաբերել այս հաղորդման բուն աղ-
բյուրը³:

¹ «Հուշաբարե», 1908, № 2:

² Կույն անգում:

³ 1828-ի ներկայացումը հաստատող մի նոր վկայություն էլ
դատնում ենք Երիցյանի համակներից մեկում: «Խելքից պատուհասի»
դարձուավոյն հրատարակության ծանոթագրությունների հերքումով
ժամանակին, ինչպես հայտնի է, հանգես է եկել Զամաղյանը, երբ
դրում էր իր հիշողությունները պետերբուրգյան և Թիֆլիսյան ներ-

* * *

Ի՞նչ արժեք և պատմական հետաքրքրություն է ներկա-
յացնում այս նոր տվյալը:

Նախ, այս ներկայացման փաստը վկայում է, որ «Խելքից
պատուհասի» բնմական պատմություն վաղ շրջանը հաստա-
տապես կապված է Անդրկովկասի հետ: Նշանակում է երե-
վանյան բնմագրությունը մի եղակի փաստ չէ և «Խելքից պա-
տուհասի» նկատմամբ անդրկովկասյան ժողովուրդների առա-
ջավոր ինտելիգենցիայի հետաքրքրությունը՝ մի օրդանական
երևույթ է:

«Խելքից պատուհասի» բնմական պատմության մեջ երե-
վանյան ներկայացումը, բացի անդրանիկը լինելուց, առանձ-
նապես կարեռլում է և նրանով, որ հեղինակը դիտել է ներ-
կայացումը: Թիֆլիսյան բնմագրությունը այդ իմաստով ավե-
լի կարեռ է, որովհետև ներկայացման զաղափարը պատկա-
նում է իրեն՝ Գրիբոյեդովին: Փորձերը զեկավարել է հեղինա-
կը, ընդհանրապես զլխավորելով սկսած գործը սկզբից մինչև
մերը:

Ինչպես 1827-ի բնմագրությունը, այնպես էլ 1828 և ապա
1832 թվերի բնմագրությունները կարեռ են և այն տեսա-
կետից, որ վկայում են սուսական առաջավոր կուտուրայի
ժուտքը անդրկովկասյան իրականություն: Ուրիմն՝ դեռ 20-ա-
կան թվականներին մեր ինտելիգենցիան ստացավ հնարավո-

կայացումների մասին: Դամաղյանի ելույթը Գարուսովի գեմ, որով
բացասվում էր 1828-ի ներկայացման փաստը, երիցյանը բացարում
է «Խելքից պատուհասը» Թիֆլիսում առաջին անգամ ներկայացնելու
նախաձեռնության պատիվը իրեն վերագրելու ցանկությամբ: «Եյժմ
ևս զտել եմ տեսր, որտեղ Գամազովը,—զբում է երիցյանը,—իր հոգ-
վածից երկու տարի անց, սեփական ձեռքով զրում է Թիֆլիսի 1828
թվականի ներկայացման փորձի մասին, որ կատարվել է հեղինակի
ներկայությամբ: Այդ տեսրը զտնվել է Գամազովի արխիվում, որն
անհրաժեշտ չի համարել հրատարակել նորույթը, որպեսզի չհակառի
իր արգեն տպագրած հողվածինք:

բություն ոչ միայն շփվելու ռուսական կուլտուրայի ականավոր դեմքերի հետ, այլև ծանոթանալու նրանց ստեղծագործությանը: Եվ հայկական ու վրացական, ինչպես և աղբբեջանական կուլտուրաների զարգացման տեսակետից շատ է կարենու այն, որ մեր ժողովուրդները բախտ ունեցան հենց սկզբից ուստի թատրոնի և գրականության ամենառաջավոր երեսությունների հետ ծանոթանալու:

Այսուհետեւ այս բեմադրության կարևորագույն կողմերից մեկն էլ այն է, որ մի քանի անգամ ներկայացվել է Ներսիսյան դպրոցի դահլիճում: Այս հանդամանքը ներկայացմանը տալիս է առանձին արժեք: Թէ՛ 1828-ին, թէ՛ 1832-ին Ներսիսյան դպրոցի դահլիճում «Խելքից պատուհասի» ներկայացմանը ներկա է եղել ու դիտել հայ ինտելիգենցիան, այն ուսանող երիտասարդությունը, որն այդ շրջանում արդեն խանդավառված էր հայկական թատրոն ստեղծելու գաղափառվ: Եվ պարզ է, թե «Խելքից պատուհասն» իր առաջավոր գաղափարներով ինչ մեծ ազդեցություն պետք է գործեր նրանց վրա, որոնք հետագայում զարձան հայ թատրոնի գործն առաջ մղողներից:

Հայ թատրոնի վաղ շրջանի գործիչների ծանոթությունը ուսանական կուլտուրայի և մանավանդ մի այնպիսի առաջավոր երեսութիւններ, ինչպիսին Գրիբոյեդովի կոմեդիան է, վճռական նշանակություն ունեցավ մեր թատրոնի ու դրամատուրգիայի զարգացման համար, առաջին իսկ քայլերից կողմնուշելով նրան դեպի սթափ և եալիզմը:

Կա և մի այլ կարևոր հանդամանք: «Խելքից պատուհասի» 1828 և 1832 թվականների բեմադրությունները, որ կազմուերապելի են ուսաների, հայերի և վրացիների միացյալ ջանքերով, ամբազնդել են ժողովուրդների բարեկամության զաղափարը, հաստատելով եվրայրական համագործակցության այն երևելի արագիցիան, որը շարունակվեց նաև հետո, վրաց և հայ թատրոնների պատմության մեջ գրելով փայլուն էջեր:

Երևանի թատերական ինստիտուտի դիտական սեսիա-

յում պլոտիք. Հետոն Քաղանթարի կողմից, Մոսկվայում համա-
միութենական թատերագիտական կոնֆերանսում հայ թատ-
րոնի պատմության ուսումնասիրության հարցերին նվիրված
զեկուցման ժամանակ՝ մեր կողմից «Խելքից պատուհասի»
1828-ի ներկայացման փաստի հիշատակությունը, որպես նո-
րություն մեծ հետաքրքրություն առաջ բերեց ինչպես թատե-
րական, այնպես էլ գրական հասարակայնության մեջ։ Այս
փաստի նկատմամբ եղած նման հետաքրքրությունը կրկնա-
պատկում է մեր բանասիրական մտքի պատասխանատվու-
թյունը լրջորեն զբաղվելու այս հարցով, շարունակելու
պրատումները՝ փաստը հաստառղ, տարակուսանքի առիթ
տվող կետերը (ինչպես, ասենք՝ Գեորգ Ախլերդյանի մասնակ-
ցությունը և այլն) ճշգրտող, նրա այլ կողմերի վրա լույա-
սփռող նոր վկայություններ գտնելու համար։

ՄԻ ԻՉ «ԽԵԼՔԻՑ ՊԱՏՌԻՆԱՍԻ» ԲԵՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գրիբոյեդովի կյանքի այն բոլոր կողմերը, որ այս կամ այն շափով կապվում են հայ իրականության հետ՝ մեզ համար առանձնապես հետաքրքիր են, թեկուզ առաջին պահ նրանք աննշան երևան: Ճիշտ է, ժամանակը, որ մեզ բաժանում է Գրիբոյեդովի ապրած օրերից՝ շատ տվյալներ է կուտակել նրա մասին: Բայց կարելի է կապերի մի ամբողջ շարք հիշել, որ մինչև այսօր ուսումնասիրված չէ: Մի մասի էլ հետքն է միայն դտնված: Եթե մի խանդավառ բանասեր փորձի պրատեհ՝ անշուշտ նոր և անհայտ կապեր մեջտեղ կրերի, որոնք շատ բան կարող են պարզել՝ խոսեցնել տալով մի շարք լուր մնացած փաստերի: Զանասեր պրատեհը Գրիբոյեդովին մեր կյանքի հետ կապող դեռ շատ դրվագներ երևան կրերի: Թող լինեն դրանք կցկտուր տեղեկություններ, առանձին փաստեր: Այդ ամենը ի մի բերվելով մի օր կամբողչացնեն հայ ժողովրդի ազնիվ բարեկամի պատկերագիծը:

* * *

Աւելքսանդր Սերգեյի Գրիբոյեդովը Թիֆլիսում եղած ժամանակները կապված է եղել ներսիսյան դպրոցի հետ: Ասում են, որ Ալամդարյանի օրոք Գրիբոյեդովը մի քանի անգամ դըպ-

բոց է եկել, նույնիսկ դաս է լսել: Գալուստ Շերմաղանյանը, որ այն ժամանակ աշակերտ էր Ներսիսյան դպրոցում, ըստ որում Ալամդարյանին շատ մոտ կանգնած, սիրելի և վստահված աշակերտ, վկայում է, որ ինքը հաճախ է տեսել Գրիբոյեդովին Ներսես արքեպիսկոպոսի հետ իրենց դպրոցը գալիս¹:

Մի պահ կամենում ենք շեղվել բուն նյութից և կանգ առնել Հարակից մի խնդրի վրա:

Գրիբոյեդովը, ինչպես պարզվել է նրա մահից բավական անց, մտադիր էր գրելու մի ողբերգություն, նյութ ունենալով Հայաստանի և Վրաստանի պատմական անցյալը, մոտավորապես առաջին թվականը՝ մեր թվարկությունից հետո: Ողբերգությունը կոչվելու էր «Родамист и Зенония»: Նրա թղթերի մեջ գտնվել է ապագա ողբերգության առաջին և երկրորդ գործողությունների ծրագիրը²:

Գրիբոյեդովագետները ենթադրում են, որ գրամատուրգին որպես հիմնական աղբյուր ծառայել են Հոռմենական պատմաբան Տակիտոսի «Տարեգրությունները»³: Միաժամանակ հնարավոր են Համարում, որ Գրիբոյեդովը ծանոթ էր նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը», որի առաջին ուսուական թարգմանությունը լույս է տեսել 1809-ին⁴: Այդ նույն թեման

¹ Գալուստ Շերմաղանյան, «Նյութեր աղջային պատմության համար երեկի Հայկագունքը ի Պարսկաստան», 1890, էջ 21:

² Грибоедов. Сочинения, редакция, вступительная статья и примечания Вл. Орлова, 1945, стр. 311.

³ Նույն տեղում, էջ 598: Այդ տեսակետից ուշագրավ հիշատակություն կա Մ. Վ. Նեչինայի «Ա. Ս. Գրիբոյեդովը և զեկարրիստները» գրքում, հեղինակը շատ հավանական է համարում, որ Գրիբոյեդովին օգտված լինի Տակիտոսից, որի «Տարեգրությունները» Պլուտարքոսի «Կենսադրականների» հետ միասին եթեմովի համար սեղանի գրքերն էին կովկասում, իսկ գրամատուրգը, ինչպես հայտնի է, աղաս մուտք ուներ նշանագոր գեներալի տունը: Այնուհետև, նեչինայն մի այլ թերիս շատ ավելի կարենոր հիշեցում է անում, ասելով, որ զեկարրիստների շրջանում Տակիտոսն ընդհանրապես ոգեշնչողի գեր է կատարել (1951, էջ 535 - 536):

⁴ Նույն տեղում:

մշակել է նաև ֆիսանսիական զդրամատուրիդ Կրեքիլիոն-ավագը, գրելով «Հրամիզդ և Զենորիա» ողբերգությունը, որի ռուսական թարգմանությունը լույս է տեսել 1810-ին և խաղացվել ռուսական բեմում: Ենթադրվում է, որ զբան նույնակես ծանոթ էր, թեև Գրիբոյեդովի «Ճրագիրը նրա հետ ընդհանուր ոչինչ չունի, բացի վերնագրից և մի քանի գործող անձերի անուններից»¹²:

Այս բոլոր ենթադրությունները շատ մոտ են հավանականության։ Դրանց վրա կուղեինք ավելացնել մի այլ, մեր կարծիքով, ոչ պակաս հավանական ենթադրություն։

Նույն թեմայով ողբերգություն է գրել նաև Հարություն Ալամդարյանը, որ Գրիբոյեդովի Թիֆլիսում եղած ժամանակը Ներսիսյան դպրոցի տեսուչըն էր: Այն մասին, որ Ալամդարյանը «Հրամիզգ և Զենոբիա» անունով դրամատիկական երկ է գրել՝ հայտնի է դարձել բավականաշատ ուշ, շուրջ մեկ հարյուրամյակ հետո²: Ալամդարյանի գործը, թեև ասում են, որ ժամանակին տպագրվել է առանձին գրքով, չի պահպանվել³, հետևապես այժմ դատել նրա մասին բավականաշատ դժվար է, է՛լ ավելի դժվար համեմատել այն Գրիբոյեդովի գրելիքի հետ, թեկուղ և մեղ հասած ծրագրի հիման վրա: Սակայն տըլցալ դեպում մեզ հետաքրքրողը հարցի այդ կողմը չէ, նամանավանդ որ Ալամդարյանը և Գրիբոյեդովը, լինելով ժամանակի առաջավոր մարդկանցից, այնուամենայնիվ տարրեր աշխարհայցքի տեր էին, և մենք շատ բնական ենք համարում, որ նրանց մոտեցումն էլ դեպի միենույն պատմական իրադարձությունը, սկառմական նյութի զգացողությունը էապես պետք է որ զանազան եղած լինի:

1 Եռլին տեղում:

2 «*Энциклопедия*, 1925, № 1:

ՅԱՅՆ ՀՈՂՎԱԺԻ ՀՐԱՄԱՔԱԽՈՎՄԵԼԻ յոթ տարի անց ՏՏԵՂԵԿԱՋՐԱՎՈՒՄ՝
յուսու է տեսել Շ. Նաղարյանի հաջորդումը 1846 թվականին Գանձա-
կում քեմազրված մի պիեսի մասին վերնագրով, ուր, և միջի այլոց,
հշշառակիում է այն փաստը, որ Արամգարյանը ցըրել է մի պիես
«Հրամիդդ և Զենորիա» պատմական ողբերգությունը, որի ձեռագիր
թերի մի օրինակը պահպատմ է Պետ. Մատենագարանի արխիվում:

Մեղ զրավեցնող հարցն այն է, թե չէր կարող առդյոք
Ալամդարյանը աղբյուր ծառայած լինել Գրիբոյեդովին:

Եթե ճիշտ է, որ նրանք ծանոթ են եղել, հանդիպամեր են
ունեցել, իսկ ոտք, ըստ երեսով թին, ճիշտ է, որովհետև մինչև
Հիմա ոչ ոքի կողմից չի հերթվել, ինչու ուրեմն ապա Ալամդար-
յանը, տեսնելով ուստ գրողի խևական հետաքրքրությունը դե-
պի հայոց պատմովիցունը, չեր կարող զրուցի ժամանակ պատ-
մել նաև այդ իրադարձության մասին։ Կամ ինչո՞ւ չեր կարող
նա առել, թե այսինչ պատմական նյութի շուրջն ինքը դրամա է
գրում, որով նրան ևս միտք տված լինի անդրադառնալու դրան։
Այս վերջինն այն ժամանակ կարելի լինի պնդել, եթե ճշտվի,
թե երբ է Ալամդարյանը գրել իր ողբերգությունը և պարզվի, որ
գրել է 1828-ին կամ մանավանդ՝ մինչ այդ¹։ Կարող է և հակա-
ռակը եղած լինել, բայց բոլոր դեպքերում անկասկած է, որ
Գրիբոյեդովի և Ալամդարյանի միջև այդ մասին խոսք ու զրուց
եղել է։ Ենթադրվում է, որ Գրիբոյեդովն իր «զրամայի ծրագիրը
կազմել է 1828-ի հունիսից ոչ ուշ»²։ Կարո՞ղ է պատահել, որ
այդ շրջանում կամ դրանից հետո, երբ նա շատ է եղել Թիֆլի-
սում, հանդիպած լինի Ալամդարյանին և զրա մասին հետը
խոսած շինի, նամանավանդ որ Ալամդարյանը լուսավորված,
զարգացած հայի համբավ ուներ քաղաքում։ Այս փաստը ևս,
անկախ նրանից, թե մեր առաջ քաշած ենթադրությունն ինչ
շափով ճիշտ կհանաչվի, միևնույն է, մի ավելորդ անդամ
վկայում է այն մասին, որ Գրիբոյեդովն խևական կապված էր

¹ Բանասիրական զրականության մեջ հետեւյալ միտքն է հայտ-
նելքել այդ մասին։ «Ալամդարյանը վախճանվել (սպանվել) է Նոր-
Նախիջևանում 34 թվականի կեսին», ուրեմն և նա իր պիեսը զրած
ողեաբ է լիներ ամենաուշը 30-ականի առաջին երկու-երեք տարին,
ողեաբ է լիներ ամենաուշը 30-ականի առաջին երկու-երեք տարին,
թեև մենք չունենք ապացույցներ, թե իր թատերական գործը նա
ավելի շուտ—Թիֆլիսի Ներսիսյան գորոցի տեսչության ժամանակ ար-
ավելի շուտ—Թիֆլիսի Ներսիսյան գորոցի տեսչության ժամանակ ար-

² Грибоедов, Сочинения, редакция, вступительная статья
и примечания Вл. Орлова, 1945, стр. 598.

Ներսիսյան դպրոցի հետ և մոտիկից զիտեր նրա տեսչին՝
Ալամդարյանին:

Որ Գրիբոյեդովը իսկապես ճանաչում էր այդ դպրոցը, նրա
սաներին բարձր գնահատում՝ անկասկած է: Մի օրինակ:

1827-ի սկզբին Պարսկաստանի գեմ ուղղված ռազմական
գործողությունները տեղի էին ունենում Երևանյան խանության
տերիտորիալում: Իսկ պահանջոր ուժերը, որ գտնվում էին Պաս-
կեիչի Հրամանատարության տակ, կենտրոնացած էին Թիֆլի-
սում և պատրաստվում էին արշավանքի: Պատրաստվում էր
արշավանքի նաև Գրիբոյեդովը, որի տրամադրության տակ
բավական մեծ թվով թարգմանիչներ կային, մեծ մասը ներ-
սիսյան դպրոցի շրջանավարտներից:

Գրիբոյեդովը, կազմակերպելով Հայերի գաղթը Պարսկաս-
տանից՝ մտահոգված էր նրանց աղաւա հոգամասեր հատկացնե-
լով, ապա նրանց գույքի պահպանումով՝ գաղթած վայրերում:

Գրիբոյեդովը Պասկեիչին ուղարկած իր մի գրության մեջ
պատմում է գաղթականների թշվառությունը, պաշտոնյաների
անկարողությունը, զեղծումները և խնդրում է մի քանի պաշ-
տոնյաներ ուղարկել «գոնե Թիֆլիսի Հայոց դպրոցի աշակերտ-
ներից»:

Այս ցուց է տալիս Գրիբոյեդովի վերաբերմունքը զեպի
դպրոցի հայերը մի կողմից՝ և այն մեծ նշանակությունը, որ
նա տալիս էր ներսիսյան դպրոցի աշակերտներին՝ որպես
կյանքում անկաշառ զործելու ընդունակ հայրենանք երիտա-
սարդության՝ մյուս կողմից: Գրիբոյեդովի մյուս և ամենածանր
հոգու եղավ այն գերի բնակիչներին աղաւակը, որոնց պատե-
րազմի սկզբում Հայաստանից և ուրիշ տեղերից պարսկական
զորքերը բռնի կերպով քշել-տարել էին: Դրա հետեւանքները
շատ ծանր եղան: Պարսկաստանը դիմագրում էր, իսկ Գրիբոյ-
յեդովը, որպես Ռուսաստանի լիազոր դեսպան Պարսկաստա-
նում՝ համառում, պնդում: Պասկեիչին ուղարկած այդ գրու-
թյունից մի քանի ամիս անց Գրիբոյեդովը շարաշար սպանվեց
պարսիկ ամբոխի ձեռքով՝ հայրենիք վերադառնալու համար

Գրիբոյեդովի պատսպարությունը գտած գերիներին պաշտպանելիս:

Գրիբոյեդովի մահից երեք տարի հետո, 1832-ի հունվարի 21-ին, Ներսիսյան ուսումնարանի սաները իրենց դպրոցական բեմի վրա դիտում էին «Խելքից պատուհանը»՝ երախտագիտությամբ մտարելով նրա հեղինակի անկաշառ սերը գեպի հայ ժողովուրդը:

Այս այդ ներկայացման մանրամասնություններից,

Այդ ներկայացման մասին, որքան մեղ հայտնի է, երեք վկայություն է պահպանվել: Նախ՝ այդ ներկայացման մասնակիցներից մեկը, Զուբարյով¹ ազգանունով ծածկանվամբ՝ 1832 թվականին հոդված է տպագրել, ապա մի քանի տասնամյակ անց նույն ներկայացման մի այլ մասնակից, որն իր ասելով, միաժամանակ, եղել է զրա նախաձեռնողը, հրապարակել է իր հիշողությունները: Դրա մասին գրել է նաև Յուրի Կորյակովը Թիֆլիսի թատրոնի անցյալին նվիրված իր հոդվածաշարքում, որը, ի միջի այլոց, զրված է վերոհիշյալ աղբյուրների հիման վրա²:

Որքան էլ տարօրինակ է, բայց փաստ է, որ այդ ներկայացման մասին հայ բանասիրական գրականության մեջ չեղ գրվել, թեև պետք է որ մի առանձին հետաքրքրություն ներկայացներ այն հայ թատրոնի պատմության համար, նրա սկզբնավորման շրջանի տեսակետից:

Այն հանգամանքը, որ Գրիբոյեդովը ոչ միայն ապրել, այլև պարզապես տանու մարդ է եղել Թիֆլիսի բազմաթիվ աշխիքներուն ընտանիքներում՝ այն արդյունավետ հետևանքն ունե-

1 Զուբարյովը, ինչպես պարզվում է, պալատի խորհրդական է եղել, խելոք և կրթված մարդ, սիրված բոլորի կողմից, „Տիֆլիսские ведомости“-ի խմբագիրներից մեկը, որ, սովորաբար, հանդես էր գալիս ծածկանվամբ: Այդ նույն Զուբարյովը է զրել «Խելքից պատուհան» առաջին բեմագրության մասին՝ երկանում:

2 Юрий Кобяков, Очерк из прошлого Тифлисского театра („Библиотека театра и искусства“, 1913, книга V).

ցավ, որ, ինչպես բազմիցս նշվել է գիտականության մեջ, «Խելքից պատուհասին» Թիֆլիսում ավելի վաղ ծանոթացան, քան Ռուսաստանի շատ և շատ քաղաքներում: «Խելքից պատուհասը» ձեռագիր վիճակում շրջել է Թիֆլիսում, ձեռքից-ձեռք անցել՝ արգելված պատուղի ամենազոր հմայքով:

Մի երիտասարդ գինվորական, Մ. Ղամազյան¹ անունով Պետերբուրգում եղած ժամանակ շատ տարված է եղել թատրոնով:

Ղամազյանն ասում է, որ դժվար էր որոշել, թե ինքն ինչով էր ավելի զբաղվում՝ իր անմիջական պարտականությամբ, թե թատրոնով: Նա ոչ միայն թատրոնի մշտական հաճախորդներից էր, այլև մեկը, որ սերտ կապերի մեջ էր թատերական աշխարհի ու նրանց մարդկանց հետ: Եվ աշա 1830-ին, Պետերբուրգում «մի քանի երիտասարդ անգիր են անում «Խելքից պատուհասի» երրորդ գործողությունը, համապատասխան դգեստավորումով և դիմակներով, այդ թվում և ես, որ կատարում էի Խելքստովայի գերը — պատմում է Ղամազյանը, — կարեններով շրջում ենք քաղաքը, ունենալով հետներս վեց թե յոթ երաժիշտ: Կանգ առնելով շքեղ տների լուսավորված պատուհանների դիմաց, տանտերերին ուղարկում էինք այցետումս, վրան գրած՝ «Խելքից պատուհասի» երրորդ գործողությունը: «Մեզ հրավիրում էին ներս, մենք ներկայացնում էինք մեր նվազախմբով, խաղում նրորդ գործողությունը, որը վերջացնում էինք կատակ-կադրիլով, ես պառակ Խելքստովայի գերում պարում էի Ֆամուսովի, Սկոլովուրը կոմսուհի Խրյոսինայի, խոզիշխանը նատալիա Դմիտրևնայի, Մոլչալինը՝ իշխանուհու հետ»²: Ղամազյանն իր հիշողություններում ասում է, որ ինքը Խելքստովայի կերպարը մարմնավորելիս աչքի առաջ ուներ

¹ Արդյոր այս Ղամազյանը ազգականը չէ այն Ղամազյանի, որի մասին հիշատակություն կա Պասկելչին դրած Գրիբոյեդովի նամակում՝ զաղթի գործում իշխան Արդությանի հետ աչքի ընկնելու կապակցությում:

² „Вестник Европы“, 1875, книга VII.

պետերուրդյան թատրոնի դերասանուհի Եժովայի խաղն այդ դերում¹:

Ահա այս Ղամազյանը պաշտոնի բերումով, տեղափոխվում է Թիֆլիս, ուր ընկերանում է իշխան Ռ. Ի. Բագրատիոնին, որ հայտնի զորավարի եղբայրն էր: Վերջինիս միջոցով մուտք ձեռք բերելով բարձրատոհմիկ շրջանները, Ղամազյանը սկսում է սիրողների ուժերով ներկայացումներ կազմակերպել: Մի օր էլ վճռում են խաղալ «Խելքից պատուհասը»: Դժվար էր հաղթահարել նախապաշտումը — «Վերջը էին կատարելու կանացի դերերը: «Երբեմն ստիպված էինք, — պատմում է նա, — ծնկաշոք խնդրել իշխանուհիներին՝ հանձն առնել որին դեր այս անսովոր գործում, որի սկիզբը Թիֆլիսում այս տարի միայն զրվեց»²: Այդ գժվարությունը պատճառ է դառնում, որ «Խելքից պատուհասի» սկիզբը և վերջը կրամատվի, սկսվի յոթերորդ տեսարանից՝ Զացկու մուտքից և ավարտվի Ռեպետի-

¹ „Вестник Европы“, 1875, книга VII.

² Նույն տեղում: Նկատենք, որ Ղամազյանի ասոծը, թե թատերական կյանքի սկիզբը Թիֆլիսում գրվել է այդ ներկայացումից ըստ կըսած, այսինքն՝ 1832-ից, ճեշտ չէ: Կորյակովը արգեն մի առիթով հիշված իր հոդվածաշարքում ասում է, թե «գրամատիկական ներկայացումների սկիզբը Թիֆլիսում վերաբերում է անցյալ գարի 20-ական թվականներին»: Այն ժամանակ Վրաստանի զիւսավոր հրամանատարը երմոլովն էր, որի տանը ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում ընտանեկան ներկայացումներ, ըստ որում այդ ներկայացումների մասնակիցներն էին սպաները և նրանց ընտանիքները („Библиотека театра и искусства“, 1911, книга V): Բացի այդ, հրապարակվել է Միքայել Գատկանյանի արխիվում զտնված մի փաստաթուղթ, որի համաձայն, հրապարակողի տևելով, ներսիսյան դպրոցում, գեռես 1824 (—) 1828 թվականներին ներկայացումներ են կազմակերպվել: «Հս ցուցակը, — կարդում ենք այդ փաստաթուղթում, — ցույց է տալիս էն անձանց, որոնք ներսիսյան շեոլի թեատրոնական բեմի վրա լուսահողի Ալամգարյանի օրոք խաղացել են հատվածներ (սկիսներ: Ռ. Զ.): Ահա էդ պատվական անձինքը — Սահակյան, Գրիգորի Միքոյան, Գողոստ Շերմաղանյանց և այլք («Բաղմագեսլ», 1934, № 1):

լովի գնալով։ Յամուսովի և ապա Մոլչալինի սիրաբանությունը կիզայի հետ, կոմեդիայի սկզբում, Սոֆիայի գիշերային ժամադրությունը վերջում — անպատճե՞մ մի բան էր այն ժամանակվա բարբերի համար, և ոչ մի կին, անդամ իշխանական-ազնվական գաստիարակությամբ, հոժար չէր այդ տեսարան-ները ներկայացնելու բեմից՝ հասարակության առաջ։

Ոչ ոք չէր ուղղում հավատալ, որ հասարակոր կլինի այդպիսի ուժերով հաղթահարել պիեսը։ Բայց ներկայացումը, որ տեղի ունեցավ սկզբում իշխան Բագրատիոնի տանը, հետո ներսիս-յան գպրոցի դահլիճում, խոշոր հաջողությամբ է անցել։ Ժամանակին մամուլը, արձագանքելով ներկայացմանը, գրում է, թե «ընդհանրապես պիեսը խաղացվեց որբան հնարավոր եր լավ», «գերակատարումը գերազանցեց հանդիսականների սպասելիքը»¹ և այլն։

Դամադյանը կատարել է Յամուսովի դերը և աշքի է ընկել՝ արժանանալով բուռն ծափահարությունների։ Դամադյանի հաշողությունը պայմանավորված էր և նրանով, որ պիտերբուրգցան բեմի վրա տեսել էր Վ. Ի. Ռյազանցի փայլուն խաղը Յամուսովի դերում, մի գերակատարում, ուր նա, «զիշում էր թերես միայն կոմեդիայի տիտանին՝ Շշեպկինին, որի գպրոցում, զարգացել էր նրա տաղանդը»²։ Աշքի է ընկել նաև Ռեպետիտիովի դերակատար Սևաստյանովը։ «Յամուսովը և Ռեպետիտիովը, — զրում է ներկայացման քննադատը, — գրեթե կատարելության հասան»³։ Մի վրաց իշխանութիւն, որի անունը, հասկանալի պատճառներով շի տրված լրագրում, նատալիա Դմիտրևնայի դերը «կատարել է սքանչելի», խաղի ընթացքում արժանանալով ծափահարության⁴։ Հետագայում հրապարակված նյութերից պարզվել է, որ այդ իշխանութիւն եղել է Օբրելյանին, որի խաղի մասին մեմուարային գրականության մեջ

¹ „Տիֆլիսские ведомости“, 1832, № 3.

² „Вестник Европы“, 1871, книга VII.

³ „Տիֆլիսские ведомости“, 1832, № 3.

⁴ Նույն տեղում։

ասված է, թե «Հրաշալի էր և ինքնատիպ»¹: «Մնացած անձինք,— զրում է ներկայացման ժամանակակից քննադատը, — նույնպես հասկացել էին իրենց գերերը և հաջողությամբ էին կատարում»²: Նատալիա Գմիտրենայի ամուսնու գերը կատարում էր Լավրովսկին, Մոլչալինի կերպարը՝ Օլեսկին: Դամապյանն իր հիշողություններում ասում է, թե վերջինս Մոլչալինի գերը կատարում էր «բավականին ճիշտ», ներկայացնելով նրան՝ խարսյաշ, ոչ բարձրահասակ, բարակ-բարակ ոտքերով և համեստատես արտաքինով»³: Շատ լավ է եղել, Դամապյանի տակով, Մկոլոզուրը: «Մկոլոզուրն անզուրական էր, — զրում է նա, — այդպիսի՝ Մկոլոզուրը չի եղել և ոչ մի հրապարակային թատրոնում. իշխան Ռոմանը, որ կատարում էր այդ գերը, բարձրահասակ էր և ծիգ, ինչպես լար, հաստ սև հոնքերով և բեղերով, հոյակապ բասով, դեմքն արտահայտիչ»⁴: Սոֆիայի գերը կատարել է տանտիրուհու քույրը և ինչպես ասում են՝ ոչ վատ: Լիդայի գերը խաղացել է իշխանի տղան:

Զացկու գերը հանձնված է եղել Գմիտրի Զուբարյովին: Խաղը ստացվել է անզույն: Գեղեցիկ արտաքինը պատշաճ էր Սոֆիայի սիրով տարված Զացկու համար, բայց բեմական ձիրքից խսպառ զուրկ լինելով Զուբարյովը չի կարողացել արտահայտել զրիբոյեզովյան հերոսի փոթորկահուզդ հոգին: Զուբարյովն ինքն էլ էր զգում այդ: Թաքնվելով «Գորեառուրանսկի պուստիննիկ»⁵ տարօրինակ ծածկանվան տակ՝ Զուբարյովը մի հոգված է զրել իրենց ներկայացման մասին՝ մեկիկ-մեկիկ վեր հանելով ամեն մեկի խաղը, բոլորի համար դրվատանքի խոսքեր գտնելով, բացի Զացկու գերակատարից,

¹ „Тифлисские ведомости“, 1832, № 3.

² Նույն տեղում:

³ „Вестник Европы“, 1875, книга VII.

⁴ Նույն տեղում:

⁵ Մինչև Դամապյանի հիշողությունների հրապարակումը հայտնի չեր, թե ով է թաքնված «Գորեառուրանսկի պուստիննիկ» ծածկանվան տակ:

որի մասին բացասաբար է արտահայտվել: «Միայն Զացկին էր ոչ բոլոր դեպքերում հաջող,— զբում է նա ինքն իր մասին,— սիրո բացատրության պահերին շափաղանց սառն էր»^{1:}

Հստ որոշ տվյալների այս ներկայացումը խաղացվել է երեք անգամ. մեկ Բագրատիոնի տանը, մեկ Ալեքսանդր Շամաձեի տանը, մեկ էլ՝ Ներսիսյան դպրոցում^{2:}

Այս ներկայացումը մեծ ազդեցություն ունեցավ Թիֆլիսի հայ և վրացի երիտասարդության վրա: Բոլորը, անշուշտ, հիշում էին կոմեդիայի հեղինակին, իրենց ժամանակակից Գրիգորյենովին, որ այժմ մի այլ կյանք առած՝ ապրում էր նրանց մեջ ովեկոչելով դեպի գործ: Թե՛ հայերը, թե՛ վրացիները երևի «Խելքից պատուհասի» այդ ներկայացման ազդեցության տակ՝ մտահոգվեցին աղջային թատրոն ստեղծելու գաղափարով: Դրա ապացուցը Աբել Գուրգենի նամակն է՝ գրված 1832-ի փետրվարի 10-ին՝ Ալամդարյանի անունով, որը վազուց հետացված էր ոչ միայն ներսիսյան գպրոցի ղեկավարությունից, այլև Թիֆլիսից և այդ ժամանակ գտնվում էր Քիշինևում: Այդ նամակում ասված է, թե վրացիները մտադիր են վրաց լեզվով ներկայացումներ կազմակերպել և լավ կլինի, որ նույն արվի և հայերեն լեզվով «ուսումնարանի (խոսքը ներսիսյան գպրոցի մասին է — Ռ. Զ.) աշակերտների և Վասիլեի պանսիոնում ուսանող հայ աշակերտուհիների ձեռքով և այսուհետև շարունակել այդ քանը»^{3:}

Այս նամակը գրված է «Խելքից պատուհասի» ներկայացումից մոտ քսան օր հետո:


1945

1 „Тифлисские ведомости“, 1832, № 3.

2 „Театр в Тифлисе в 1845—1856 г.“, 1888, стр. 124.

3 Ալեքսանդր Երկուանց, Պատմություն 75-ամյա գոյության ներսիսյան հայոց հոգևոր գպրոցի, հատոր V. (1824—1850)* 1938, էջ 256:

ՈՌԵՍԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅԻ
ԱՊԱՋԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ



ՄԻ ՄՈՌԱՅՎԱՆ ԱՆՌԻՆ ԿԱՄ ՌՈՒՍ-ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՇՈՒԲԶԸ

Ուստ գրականության մուտքը հայ իրականություն, նրա պերը մեր կովառուրայի զարդացման գործում և վերջապես հայ հասարակական մտքի վերաբերմունքը դեպի ուստ գրականությունն ու նրա լավագույն դեմքերը, մի թիմա է, որի բաղմակողմանի ուսումնասիրությունը սովորահայ քննադատության անհետաձգելի դործն է:

Այս խնդիրների ուսումնասիրությունն առանձնապես մեծ պատմություն չունի: Եվ դա հասկանալի է: Թեև անցյալումն էլ այս հարցերը երբեմն շոշափվել են հայ և ուստ գրականությունների մեջ, բայց մեր օրերում միայն կարեոր նշանակություն ստացան նրանք: Եվ այն էլ զլսավորապես այս վերջին տասնամյակում: Եվ, չնայած դրան, բավականաշափ փաստական նյութ է հավաքված, առանձին հարցերի շուրջը հետաքրքրական մտքեր են արձարձվել, որոշ երկույթների ընդհանրացման ուշագրավ փորձեր էլ արգեն կան:

Այս հարցը լուսաբանող ամեն մի նոր նյութ, հետազոտողների տեսադաշտից գուրս մնացած յուրաքանչյուր փաստ, ամեն մի մոռացված էջ, որ կարող է պարզություն մտցնել, ճշգրտել կամ լրացնել, պետք է ասպարեզ հանվի: Այս ձևով միայն աստիճանաբար կարելի է ընդհուպ մոտենալ այդ մեծ պրոբլեմի ամբողջական ուսումնասիրությանը:

Ահա մի այդպիսի մոռացված, հետազոտողների ուշադրությանը շարժանացած, բայց անշափի ուշադրավ մի փաստի է վերաբերում մեր խոսքը, որը ոչ միայն նորություն է, այլև որպես այդպիսին, հնարավորություն է տալիս ուղղելու մի ոչ ճիշտ եղբակացություն:

Մեր գրականության մեջ այն հարցն է արծարծվել, թե ե՞րբ, որտե՛ղ, ո՞վ և ինչպես է առաջին անգամ հայ իրականության մեջ արտահայտվել ուստի գրականության մասին, գրել, ենթարկելով այն տեսական գնահատության¹:

Մինչև վերջին ժամանակներն այնպես էր հայտնի, թե 30-ական թվականների վերջերին, 40-ական թվականների սկզբներին Մկրտիչ Էմինը, լինելով Լազարյան ճեմարանի դասատու, իր դասերին խոսել է ուստի գրականության, հատկապես Պուշկինի և Լերմոնտովի մասին, հայերեն թարգմանելով նրանց որոշ գործերը:

Այս տվյալի հիմքը Ռաֆայել Պատկանյանի վկայությունն է, ուր ասված է, թե Էմինը «այդ կերպով մեր մեջ սեր և ճաշակ էր ձգում այդ (այսինքն՝ Պուշկինի և Լերմոնտովի—Ռ. Զ.) և ուրիշ հեղինակների մասին»², ինչպես և Յուրի Վեսելովսկու մի հոդվածը, որ հիմնվում է Մսկովյանցի հայտնած տվյալների վրա³:

Չանտեսելով այս փաստը, պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը «Խուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ» աշխատության մեջ ձգտել է այդ հարցի մեջ ավելի որոշակիություն և պարզություն մտցնել: Եվ դրա համար ել նա չի հիմնվել մեմուարային գրականության մեջ պահպանված վկայությունների վրա, այլ պարզապես նկատի է առել, թե մեր գրականության մեջ ե՛րբ և ո՞վ է առաջինը հոդված

¹ Սուբեն Հայությունայան, Պուշկինի հարյուրամյակյանը հայ գրականության մեջ, 1935, էջ 5—6:

² «Մկրտիչ էմինի երկասիրությունները», 1897, էջ 210:

³ Юрий Веселовский, Литературные очерки, 1904, էջ 402—407:

կամ ուսումնասիրություն տպագրել ոռու գրականության մասին:

«Բազմավելիպը» 1845-ին տպագրել է «Քոիլով ոռու բանաստեղծը» վերնագրով մի անստորագիր հոդված: Նույն պարբերականը 1846-ին լույս է ընծայել մի այլ հոդված, այս անգամ արդեն առակագիր ի. ի. Դմիտրեի մասին:

Հովհաննիսյանը հիշատակում է այս հոդվածները, վերլուծում նրանցում արծարծված մտքերը, ասելով, որ դրանք, այդ հոդվածներն «առաջին ինքնուրույն քննադատական տպագրված տեսական գնահատումներն են ոռու գրողների մատին հայ գրականության մեջ»¹:

Հովհաննիսյանի այս եղբակացությունը կարոտ է ճշտման և լրացման:

Այս ճշտումը կարևոր է ոչ միայն այն տեսակետից, որ ոռու գրականության գնահատությունը հայ իրականության մեջ տեղի է ունեցել մի 10—12 տարով ավելի վաղ, քան այդ մատնանշում է Հովհաննիսյանը: Կարեոր է այսուղի խնդրի մի այլ կողմէ: Այս հարցի ճշդրումը կարող է օգնել հայ հասարակական մտքի կողմից ոռու գրականությունը գնահատելու փաստերի պարզ ժամանակագրության հետեւ տեսնելու դարձացման, զարգացման տարրեր աստիճաններ: Այն ժամանակաշրջանը, որ Հովհաննիսյանը ցուց է տալիս որպես ոռու գրականության գնահատության առաջին փորձ հայ իրականության մեջ, ընդհակառակը, նշանավորում է մի նոր և ավելի բարձր փուլ՝ այդ հարցում: Այդ տարիներին Արովյանը այն միտքն է հայտնել, թե ոռու ժողովրդի գերը մարդկության պատմության մեջ գուրս է գալիս մի երկրի ազգային սահմաններից, ձեռք է բերում ավելի լայն, ընդհանրական բնույթ: Ոռու ժողովրդի պատմական դերի այսպիսի գիտակցության լույսի տակ Արովյանը, բնականարար, ոռուաց լեզվին, ընդհանրապես ոռուական կուլտուրային տալիս է ոչ

1 Պատփ. Ծուռե թ Հովհաննիսյան, Ոռու գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ, 1949, էջ 50:

միայն բարձր գնահատություն, այլև խոշոր դեր, որ վերապահված է նրան խաղալու ուրիշ ժողովուրդների կյանքում: Աբովյանը ոռուսական կուտարացի արժեվորման խնդրում բարձրացավ ոչ միայն «Բազմավեպի» անհայտ հոգվածագրից, այլև կանխեց նույնիսկ իր շատ հեռավոր հաջորդներին:

Մոսկվայում, 1834-ին, լուս է տեսել Ռասինի «Գոթողիա» ողբերդության հայերին թարգմանությունը: Թարգմանությունը կցված է մի ընդարձակ առաջարան, շուրջ հարյուր էջից բաղկացած մի հետազոտություն: Ինչպես թարգմանության, այնպես էլ այդ ընդարձակ առաջարանի հեղինակը Մոսկվայի համալսարանի լեզվաբանական բաժնի գեռ բոլորովին երիտասարդ, հաղիվ բաններկուամյա ուսանող Սարգիս Տիգրանյանն էր:

Տիգրանյանի մասին հայ զրականության մեջ քիչ է խոսվել: Նրա անվան հիշատակությանը հանդիպում ենք նալրանդյանի նամակներից մեկում¹, «Հիշատակարանում»² և այդ կապակցությամբ էլ նամակների մասին զրված ծանոթություններում: Անցյալում մի կենսագրական հոգված է զրվել³, իսկ ընդհանրապես անարժան կերպով մոռացված անուն է: Մեր օրերում էլ, եթե զրվել է նրա մասին, ապա, մեր կարծիքով, ոչ ճիշտ դիրքերից⁴: Այն միտքն է հայտնվել, թե Տիգրանյանն իր այդ առաջարանը, որ կոչվում է «Ինչ ինչ զեղերերգութենէ», գրել է «ոռուսական արիստոկրատիայի շարքերում տեղ բռնած հայ աղնվականների գեղադիտական պահանջների տեսակետից», որ իրը նա կեղծ կասիցիզմի էսթե-

¹ Միքայել Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հատոր Հորրորդ, 1949, էջ 189:

² Նույն տեղում, հատոր առաջին, 1945, էջ 392:

³ «Արձագանը», 1891, № 10:

⁴ Այդ տեսակետից բացառություն է կազմում Նալբանդյանի երկերի գիտական հատարակության առաջին հատորում եղած ծանոթադրական հիշատակությունը, թե «Երա դրական աշխատանքներից հիշատակության արժանի է «Ռասինի «Գոթողիայի» թարգմանությունը, ընդարձակ և խիստ արծեքավոր մի ներածականով» (1945, էջ 551):

տիկայի ներկայացուցիչ լինելով, մհծարում է Ռասինին և
ընդհակառակը, պախարակում Շեքսպիրին և այլն^{1:}

Ինչ վերաբերում է Տիգրանյանի հասարակական հայացք-
ների գնահատությանը, ապա վերոհիշյալ բնութագրությունը
ոչ այլ ինչ է, բայց եթե մի շմտածված տուրք վուզպար սոցիո-
լոգիզմին: Գալով Շեքսպիրին, պետք է նկատենք, որ Տիգրան-
յանի քննադատը, եթե շասենք աղավաղել է, ապա չի հասկա-
ցել նրա գրածը: Դրա պատճառը թերեւ այն է, որ Տիգրան-
յանը գրել է գրաքար, ճիշտ է, բավական խրթին գրաքարով,
որը նա ծալլրանքով անվանում է «Ճոռոմ»:

Տիգրանյանի բննադատը գրում է. «Շեքսպիրին թեպետ
անվանում է «շնորհաշուր», բայց գտնում է, որ «զուրկ էր սա-
ամենին երկուց զլիավոր խթանացն հանձարոյ օրինակաց
և ի նախանձորդաց»^{2:} Այո՛, ճիշտ այդպես էլ գրված է Տիգ-
րանյանի մոտ, բայց գրանից բնավ էլ չի բխում այն եղրա-
կացությունը, որին հանգել է քննադատը: Տիգրանյանի
միտքն այն է, թե Շեքսպիրը ծաղկում էր, թեև զուրկ էր այն
երկու պարմաններից, որոնք, սովորաբար, խթանում են հան-
ձարի գործին: Որո՞նք էին այդ երկու պայմանները: Տիգրան-
յանն ուզում է պաել, որ նա չուներ նախորդ, որի փորձի վրա
հենվեր և Անդիայում շկային նրա գործին նպաստող պայ-
մաններ և այլն: Միայն այսպես պետք է բացատրել Տիգրան-
յանի միտքը: Եվ դա ճիշտ կլինի, որովհետեւ հաստատվում է
այն բոլորով, ինչ որ Տիգրանյանն ասում է Շեքսպիրի մասին
ընդհանրապես:

Տեսնենք, թե ի՞նչպես է Տիգրանյանը գնահատել Շեքս-
պիրին:

Տիգրանյանն ասում է, թե Շեքսպիրը, չնայած վերոհիշ-
յալ երկու խանդարով հանդամանքներին, «նվիրվելով բնածին
տուրքին, հումկու և ընդունավոր սպուն, և լինելով ազատ ամե-

¹ «Հայ գրականության պատմություն», երկրորդ հատոր, 1933-ը.
էջ 22—23:

² Նույն տեղում:

հայն կանոններից, բարձրացավ մինչև բարձրության և գերազանցության վայրը, մինչև որ անշափ հեռավորություն թողեցիր և իր ապրած դարի մեջ»^{1:} Տիգրանյանի ասելով, դեռևս ոչ ոք չի հասել նրան «լեզվի քաջավարժության մեջ գերազուն աստիճանի, դեռևս ոչ ոք չի կարողացել մարդկային ոգին արտահայտել այդպիսի բազմակողմանիությամբ, ցուց տալով և՛ կիրք, և՛ վսիմությունը, և՛ թախծագինը, և՛ զվարթը»:

Այս բոլորից հետո կարիվ՝ է ասել, որ Տիգրանյանը Շեքսպիրին չի գնահատել: Խսովառ ոչ: Տիգրանյանը, ընդհակառակը, ծաղրում է, «անզուգական եղերգությն» քննադատելու հանդգնություն ունեցողներին: «Չնաշխարհիկ բանաստեղծիս երկերի վրա անաշառ և ողջախոհ դատաստան անելու համար,— գրում է նա,— անհրաժեշտ է նրա նման ունենալ լեզվի հաստահիմն գիտություն, երևակայության խոյանքներ, մեկնաբանությունների ընթացք, պատկերների գեղեցիկ գունավորություն և այլազանություն, անօրինակ քաջավարժություն զանազան բնավորությունների նկարագրությունների մեջ և այն հավետ բնիկ հեղինակությունը, որով նա գերազանցում է այլ եղերերգուներին»^{2:} Եվ, իհարկե, ամենին զարմանալի չէ, որ այսպիսի բարձր և ջերմ գնահատությունից հետո Տիգրանյանը կրկնում է անգլիական շեքսպիրագետներից մեկի այն միտքը, թե Շեքսպիրը «արժանի է նախագահության ելլոպայի բոլոր թատրոնական բանաստեղծների մեջ»^{3:}

Այս մի օրինակը թվում է թե լիովին բավական է Տիգրանյանին վերագրված հակաշեքսպիրականության տեհնդենցը մերժելու համար:

Մենք երկար կանդ առանք այս խնդրի վրա և այդ ոչ միայն այն պատճառով, որ Շեքսպիրին տրված գնահատականը դրական կողմից է բնութագրում Տիգրանյանին, այլև

¹ «Գոթողիա», եղերերգություն, թարգմանեաց ի Գաղղիականէ Սարդիս Տիգրանյան նախիջնանցի, Մոսկվա, 1834, Էջ 57—60:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

նրա համար, որ Շեքսպիրին նվիրված հատվածը Տիգրանյանի առաջարանում մեծ դրամատուրգին նվիրված անդրանիկ պրավոր խոսքն է¹ Հայ գրականության մեջ, ոչ միայն լիովին դրական, դրված միանդամայն առաջավոր դիրքերից, այլև ըստ էության գեղի նրա գրամատուրգիան կողմնորոշող:

Այժմ վերագրանանք մեզ հետաքրքրող հարցին:

Տիգրանյանի հետազոտությունը հայ գրական-թատերական քննադատական մտքի ուշագրավ էջերից է: Դա հայ թատերագիտական անդրանիկ աշխատությունն է: Այստեղ երիտասարդ հեղինակը ուրվագծել է դրամայի, ավելի ճիշտ՝ ողբերգության պատմական ուղին հնագույն դարերից մինչև XIX դարի սկզբները, ընդհուպ մինչև 1812 թվականի Հայրենական պատերազմի շրջանի գրականությունը: Նա նկատի ունի դրեթե բոլոր երկրները: Պետք է ասել, որ հեղինակը, չնայած իր երիտասարդ հասակին, հանդես է բերել նյութի բավական հմուտ իմացություն: Անտեկ դրամատուրգներից Տիգրանյանը կանգ է առնում էսքիլեսի, Սոփոլիսի, Եվրիափիդեսի վրա, իսպանականից՝ Լուպե դը-Վեդոյի, անգլիականից՝ Շեքսպիրի, ֆրանսիականից՝ Կունելի և Ռասինի, գերմանականից՝ Իեսինգի, Շիլլերի և Գյոթեի վրա: Խոսում է նաև Վոլտերի, Մուշենի, Արիստոֆանի և ուրիշների մասին, բայց ավելի շուտ

¹ Հստ Մ. Աղամովի «Հայերը և Շեքսպիրը» հոդվածի անդամական մեծ դրամատուրգի երկերը հայ իրականության մեջ շատ ավելի վաղ են հայտնի եղել: Այդ հոդվածում ասված է, որ Լոնդոնում Շեքսպիրին նվիրված մի գրականական հավաքութիւն ժամանակ, մի շարք մարդիկ ելույթներ են ունեցել, այդ թվում նաև Հովհաննես Մասեհյան ու Արամ Բագֆին: Վերջինս հայտարարել է, թե... «տառնայոթերորդ զարի վերջում լույս տեսած մի հայկական գրքում («Իմացության ծաղիկ») դանում ենք հիշատակություն Շեքսպիրի պիեսների մասին» („Արմանակ աշխատակիցների աշխատակիցների մասին“ („Արմանակ աշխատակիցների աշխատակիցների մասին“), 1916, № 21): Թե որքան սուրյու է այդ հայտարարությունը, գժվարանում ենք ասել, որովհետեւ վերընթաց զիրքը („Ավետոկ ոզնանիա“) մինչև այժմ հայոնաբերված չէ, հետեւազիս նրա մասին արված հայտարարությունը, որքան էլ հետաքրքիր լինի, մինչև հիմա էլ շարունակվում է մնալ ոչ փաստարկածած:

Հիշատակում է նրանց, քան վերլուծում ու բնութագրում: Տիգրանյանը խոսում է նաև ոռւս գրամատուրգիական գրականության մասին, և, թեև շատ համառոտ, բայց կանգ է առնաւ նաև հայ թատրոնի՝ կուլում կաւզմակերպված հայկական ներկայացումների վրա, հիշում է Դավիթ Անհաղթին, «Գիրք պիտոյիցը» և պարզում, թե մի շարք հասկացողություններ ինչպես են ըմբռնված եղել հայ հին գրականության մեջ:

Տիգրանյանի այս աշխատությունն ընդհանրապես տրժանի է հատուկ ուշադրության, խնամքու և մանրամասն ուսումնասիրության: Թողնելով այդ ազագային՝ պետք է նկատել, որ թատրոնի և գրամատուրգիայի, ավելի ճիշտ՝ ողբերգական գրականության մասին՝ Տիգրանյանի գրած այս ներածական ուսումնասիրությունը սնունդ է տոել ոռւս հասարակական-տեսական մտքի ազդեցության մթնոլորտում: Սովորելով Մոսկվայի համալսարանում, երիտասարդ Տիգրանյանի տեսական պատկերացումները խմորվել ու ձևակերպվել են այն շրջանում ոռւս հասարակության մեջ տարածված գրքերի, ինչպես և համալսարանական ամբիոնից ոռւս պրոֆեսորների արտահայտած մտքերի ազդեցության ներքո:

Ի միջի այլոց ասենք, որ Տիգրանյանի թատերագիտական այս աշխատությունը գրվել է ավելի վաղ (1832), բայց լույս է տեսել 1834-ին, այսինքն՝ այն տարին, երբ տպագրվեց Բելինսկու առաջին ծավալուն քննադատական հոդվածաշարը՝ «Գրական երազանքները», որից և սկիզբ առավ ոռւս մեծ քննադատի ժողովրդականությունը:

Զափազանց հետաքրքիր կլիներ զբաղվել թատրոնի և գրամատուրգիայի վերաբերյալ Բելինսկու վաղ շրջանի հայցքներով, որոնք արտահայտվել են զլիսավորապես «Գրական երազանքներում», ինչպես և դրանից առաջ նամակներում, ժամանակակիցների հիշողություններում և այն, համեմատելով Տիգրանյանի արծարժած մտքերի հետ: Չէ՝ որ նրանք միտմամանակ են սովորել Մոսկվայի համալսարանում: Տիգրանյանը Մոսկվայի համալսարանն ընդունվել է 1829-ին,

այսինքն՝ ճիշտ այն տարին, երբ Թէլինսկին, թողնելով պենզինսկյան գիմնազիան, մտել է Մոսկվայի համալսարանի բանահյուսական բաժինը: Ուրեմն՝ մինչև 1832-ը, այն թվականը, երբ Թէլինսկին հեռացվում է համալսարանից, այսինքն՝ իրեք տարի շարունակ Տիգրանյանը և ապագա մեծ քննադատը սովորել են միենույն քաֆնում, շնչել են նույն գրական-հասարակական մթնոլորտը, լսել են նույն դասախոսությունները: Շատ հնարավոր է, որ նրանք ճանաչել են միմյանց, հանդիպել, զրուցել, գուցեն նույնիսկ ընկերական կապերի մեջ եղել: Բոլոր հիմքերը կան հուսալու, որ գալիք ժրաջան պրատումները շատ ուրիշ մութ կողմերի հետ միասին կարող են լույս սփռել նաև Թէլինսկու և Տիգրանյանի կապերի վրա¹:

Ի՞նչ է ասել Տիգրանյանը ուսուական դրամատուրգիայի մասին:

1 Մեր այս հոգվածից հետո լույս տեսավ պրոֆ. Ա. Արշարունու գրախոսությունը «Ըստս զրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ» աշխատության մասին, ուր, ի միջի այլոց, ասված էր նաև հետեւյալը: «Լազարյան ճեմարանում 1832—1835 թվականներին որպես ոռուսաց և հայոց լեզուների դասառու աշխատել է Սարգսի Տիգրանյանը: Այդ նույն զքջանում նա Մոսկվայի համալսարանի ուսանող էր և իր ուսանողական կյանքի ողջ բնթացքում ուերա բարեկամության մեջ է եղել Վ. Գ. Բէլինսկու հետ: ...Հետաքրքիր է մատնանշել որ միենույն տարին, այսինքն 1834 թ. հրատարակվեց Վ. Գ. Բէլինսկու և «Գրական երազանքները», և Սարգսի Տիգրանյանի «Գրամայի պատմության և տեսության» մասին ուրույն զրվածքը, որը հայ թատերագիտության հիմքը զրեց...Հայ երիտասարդ տեսարանի աշխատության վերը, որից է տալիս, որ նա արտահայտում է հենց այն մտքերը, ինչ-որ Բէլինսկին իր «Գրական երազանքների» մեջ («Дружба народов», 1950, № 4): Ի գեալ է ասել, որ «Գրական ժառանգության» Բէլինսկուն նվիրված հասորյակում հրապարակված է Մ. Պոլյակովի հետազոտությունը «Բէլինսկու ուսանողական տարիներ» վերնագրով, որին կը ված են մեծ քննադատի հետ սովորած ուսանողների և ունկնդիրների ցուցակները: Դրանցից մեկում այլ հայ ուսանողների հետ միասին հիշված է նաև Տիգրանյանը. «Тигранов Сергей, из армян, 1829» («Литературное наследство», 56, В. Г. Белинский, II, 1950, стр. 249).

Ռուս գրամատուգներից Տիգրանյանը Հիշատակում է Տրեղյակովսկուն, Լոմոնոսովին, Կնյաժնինին: Նա նույնիսկ Հիշատակում է Խերասկովին, Մայկովին, Նիկոլեին և ասում, որ սրանք ողբերգության մեջ չունեցան այն հաջողությունը, ինչ-որ ուրիշ ժանրերում:

Պարզ է, որ այս շարքից չեր կարող դուրս մնալ Սումարոկովը: Տիգրանյանը Հիշում է նրա գրվածքները, մեջ է բերում այնուհետև Մերզլյակովի կարծիքը նրա մասին:

Ի դեպ, նկատենք, որ այս անունները Տիգրանյանը չերավականանում թվարկելով, նա Հիշատակում է նրանց կարեռը գործերը, ճիշտ է, շատ համառոտ, հաղիվ մի երկու խոսքով, բայց բնութագրում է նրանց, արժեկորում, երբեմն հեղինակներին համեմատում իրար հետ, ցուց տալիս մեկի առավելությունը մյուսի նկատմամբ և այլն:

Ռուս գրամատուգիային նվիրված հատվածը Տիգրանյանն ավարտել է Օղերովով: Վերջինս զբաղեցնում է հատվածի ամենազդակ մասը, նույնիսկ կարելի է ասել, որ նրա մասին Տիգրանյանը խոսում է եթե ոչ ավելի, ապա զբերենույնքան, որքան բոլորի մասին գրվածը միասին վերցրած:

Տիգրանյանը Հիշում է Օղերովի երախացրիքը — «Դրելեանաց իշխան Օլեգի մահը»: Նա ասում է, թե այդ բավական էր, որպեսզի Օղերովի հետ բոլորը մեծ հույսեր կապեն: Այնուհետև ասում է, թե «Էղիպտոսը Աթինքում» գրամատիկական դրվածքը «հատուցեց հասարակության ակնկալությունը»: Ել ապա թվում է Օղերովի գրած գրամատիկական երկերը՝ «Փինդալը», «Դմիտրի Գոնսկոյը», «Պողիքսենեն»: Այս վերջինը նա համարում է նյութի կառուցվածքի տեսակետից ընտիր գործ: Տիգրանյանը նկատում է, որ այստեղ առանձնապես է փայլում «կանացի բնավորությունը կենդանագրելու» Օղերովի ճարտար ձիրքը:

Օղերովին Տիգրանյանը համեմատում է Սումարոկովի և մյուսների հետ և բոլորից բարձր գասում: Ի՞նչն է սրա պատճառը: Արդյո՞ք միայն այն, որ իր նախորդների համեմատու-

թյամբ Օղերովն ավելի հմուտ էր տիրում գրամատիկական Տիգրանյանը պետք է շատ ավելի ժանրակշխո հիմքեր ունեմէ 10-ական և 20-ական թվականներին ահազին պայքար կար:

Օղերովի ստեղծագործության շուրջը սուս գրականության արվեստին: Խճարկե, ոչ: Այդպիսի գնահատության համար նար:

Օղերովի ստեղծագործությունը ծնունդ է առել ու կազմագործել նապոլեոնյան պատերազմների ժամանակաշրջանում, Հայրենական պատերազմի կատակցությամբ առաջացած, իր նախընթացը չունեցող հայրենասիրական խանդավառության տարիներին, ինչպես և դրան հաջորդած ռեակցիայի խմբումների հետևանքով, խմբումներ, որոնք հող նախապատրաստեցին դեկարտիզմի համար:

Օղերովի նախորդները շատ էին կարևորում ճակատագիրը. Օղերովն առաջ քաշեց զգացմունքը, որով և ողբերգության հերոսի կերպարին բոլորովին այլ լուծում տվեց: Նա այն համոզմանն էր, որ զգացմունքները մարդուն ազատ են պահում կրտնական նախապաշարումների անձուկ շրջանակներից, Կրոնական նախապաշարմունքի դեմ արտահայտված բոլորքը Օղերովի ստեղծագործության մեջ հենվում էր պանթեիզմի վրա, հասնելով երբեմն այնպիսի ընդհանրացման, թե նահապետական հետամնաց բարյականության, ինչպես և եկեղեցու սահմանած պարտականության սկզբունքը ծանր ու հնաշված դրության մեջ է դնում մարդուն, մանավանդ կնոջը: Եվ ամենեին պատահական չէ, որ պահպանողականները դատապարտում էին Օղերովին, հարձակվում նրա վրա, այն ժամանակ, երբ «Արզամասի» շուրջը համախմբված առաջավոր դրողներն ու դրծիչները պաշտպանում էին Օղերովին, երբ մեմն նույնիսկ դրոշ դարձնում նրան:

Օղերովը կլասիկներից հեռանալու առաջին փորձն արավագիայն, սակայն, հաղթահարել ամբողջովին չկարողացավ: Այնինչ նրա պաշտպանները մի որոշ ժամանակից կլասիցիզմի

Ժխտման գործում շատ առաջ գնացին: Օզերովը գրականության վարդացման հետ աճել անկարող եղավ, հետ մնաց, ուստի դրամատուրգիայի պատմության մեջ ներկայացնելով փոխանցման շրջանը:

Օզերովը սուս գրականության մեջ սիրվել ու գնահատվել է իր քարձր ազգային զգացումի, ինչպես և այն հանդուժն քայլի համար, որով նա փորձ արեց, պահելով կլասիցիզմի արտաքին ձևերը, նոր բովանդակություն արտահայտել:

Տիգրանյանը գնահատելով Օզերովին, նկատի ուներ նրա ստեղծագործության առաջավոր հասարակական-հայրենասիրական նշանակությունը: Տիգրանյանին ամենից ավելի գրավում է Օզերովի վառ հայրենասիրությունը, որով տողորված է նրա գրած ողբերգություններից «Դմիտրի Դոնսկովյը»:

«Այն ժամանակ,— գրում է Տիգրանյանը,— երբ Ռուսաստանը պատերազմ էր մղում Եվրոպայի նեղիչի գեմ, Օզերովն իր «Դմիտրի Դանասիեանով» հիշեցրեց հայրենիքի վաղեմի փառքը: Երբ մհծամհծների սքանչելվակա դաշտերում, որոնք ողողում է Դանասիը, անհնարին հարվածների մատնվեց խրիստականծ Մամայը: Այս եղերերգության մեջ վառ փայլում է հայրենիքի սերը, որը կենդանի և ազդողագույն անդրաշողում է բոլորի սրտի մեջ»:

Օզերովի դրամատուրգիական ստեղծագործության մեջ՝ այսպիսով, ըստ Տիգրանյանի, ամենանշանակալիցն իր բնույթով հայրենասիրական գործն է, մի երկ, որը սուսների հայրենասիրական զգացումները, ազատագրական ոգին բորբքել է մի նոր ուժով:

Ռուս թատրոնի պատմությունից հայտնի է, թե Օզերովի «Դմիտրի Դոնսկովը» ինչ մեծ հաջողություն է ունեցել: Ոչ մի գործ այդ շրջանում հասարակության կողմից այդպիսի չերտ ընդունելության չի արժանացել:

Там Озеров невольна дани
Народных слез, рукоплесакний
С младой Семеновой делил...

Այսպիս է արձանագրել Պուշկինը «Եվգենի Օնեգինում» Ծղերովի ողբերգությունների հաջողությունը թատրոնում: «Դմիտրի Դոնսկովի» ամեն մի ներկայացում, ժամանակակիցների վկայությամբ, վերածվում էր հասարակական-քաղաքական իրադարձության: Եվ, իհարկե, դրա պատճառը ողբերգության հայրենասիրական բնույթն էր Հանդիսականները զուգահեռ էին անցկացնում պատմական և ժամանակակից դեպքերի միջև:

Եվ այս միանգամայն հասկոնալի է:

Օգերովի հայրենասիրությամբ ոգեսովելու մի պատճառն էլ երիտասարդ թատերագետի իր հայրենի երկրի ու ժողովրդի պատմական ձականագրի նկատմամբ ունեցած վերաբերմունքն է: Տիգրանյանն իր քաղաքական համակրություններով կանգնած է նապոլեոնի զավթողական արշավանքի դեմ ուսների մղած պատարական պայքարի դիրքերի վրա: Պարզ է, որ նա չէր կարող աշք փակել այն ամենի վրա, որ շատ մոտիկ անցյալում տեղի էր ունեցել իր սեփական հայրենիքում: Ռուսների մուտքը Հայաստան, ոռուական զենքի հաղթանակը պարսկական վայրագ տիրապետության դեմ, բնական է, որ Տիգրանյանը պետք է դիտեր իրեւ մի նոր կյանքի սկիզբ հայրենի ժողովրդի պատմական կյանքում: Այս տեսակետից էլ պատմական թեման, անցյալի հերոսական զըրպագները պատկերող պատմական գրվածքները նրա աշքում առանձին կարևորություն էին ձեռք բերում:

Օգերովին նվիրած այս հատվածը հնարավորություն է տալիս հասկանալու, թե մի շարք խնդիրների ինչպես էր մուտքենում Տիգրանյանը: Զափազանց բնորոշ է, օրինակ, այն դնահատականը, որ նա տալիս է նապոլեոնի դեմ ոռուների մղած պայքարին: Դրան նա տալիս է շատ ավելի լայն նշանակություն և բնավորություն, քան միայն հայրենիքի պաշտպանության համար մղված պատերազմն է: Բնորոշ է Տիգրանյանի համար նաև այն, որ նա տարբեր ժամանակներում տեղի ունեցած պատմական դեպքերը և դեմքերը կարողանում է

կապել իրար հետ։ Այսպես, օրինակ, նա Մամայի մեջ տեսնում է Նապոլեոնի նախորդին։ Խարկե, Տիգրանյանը չի նույնացնում նրանց, հավասարության նշան չի գնում նրանց միջև, բայց գիտե և լավ է հասկանում, որ դրանք, թե՛ մեկը, թե՛ մյուսը, օտար զավթիչներ են, որոնք գալիս են իրենց բռնության կապանքների մեջ պահելու ժողովրդի ազատահենչ ոգին։ Եվ ամեն անգամ, երբ թշնամին սպառնում է, Տիգրանյանի կարծիքով պետք է ժողովրդին հիշեցնել նրա հերոսական անցյալը, օտար զավթիչների դեմ քաջարի նախնիների տարած փառահեղ հաղթանակները։

Հենց այս հանգամանքն էլ մի որոշ շափով պարզում է, թե Տիգրանյանն ինչու է իր նախասիրություններով հակված գետի ողբերգական ժանրը։ Նա միանգամայն բնական է համարում ողբերգակ հեղինակների պատմական նյութի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը։ Սակայն նա կանգնած էր այն տեսակետի վրա, թե պատմության պատկերումը դրամատուրգիայում ինքնանպատակ չէ, որ այդ պատկերումը ծառայելու է արդիականությանը։

Այդ տեսակետից անշուշտ ուշադրության արժանի է այն հարցը, թե Տիգրանյանն ինչու է անպայման «Գոթողիան» թարգմանել։ Արդյոք այս ևս մի ձև չէ՞ր, որ նրան հնարավորություն էր տալիս, գուցե և քողարկված ձևով, ընթերցողին մղելու գետի համեմատությունն այն դեպքերի, որ տեղի են ունենում «Գոթողիայում» և իր հայրենի երկրի հակատագրի միջև¹։

¹ Այս հարցի սկարզաբանումը տվել է պրոֆ. Ա. Արշարունին «Արարագիս Տիգրանյան» հոդվածում, որ լույս է տեսել 1954-ին «Սովետական հայաստան» ամսագրում (№ 2)։ «Մեր դրականության և թատրոնի պատմաբանները պնդում են, — զրում է նա, — թե «Գոթողիայի» հայերեն թարգմանիչը այն շրջանում, երբ նա հրատարակել է իր գիրքը, կանգնած է եղել կլասիցիզմի տեսակետի վրա։ Որպես ազագույց այդ հայացքի նրանք բերում են թարգմանության նյութը, ասելով, որ Ռասինը կլասիցիզմի ականավոր ներկայացուցիչն է, հետեւը նրա ողբերգությունը այդ աղջության արտահայտությունն է։

Տիգրանյանի աշխատովյանն ընդհանրապես, ուստի գրականությանը նվիրված էջերը մասնավորապես, պետք է գնահատել, նկատի ունենալով կոնկրետ պատմական իրադրությունը, հայ հասարակական մտքի զարդացման աստիճանը:

Իսկ ի՞նչ ժամանակ է նա գրել իր այդ գործը:

Աբովյանի կյանքի գորպատյան շրջանն է այդ, որի գալիք գործունեությունը գոականության և թատրոնի հարցերում նոր, անհամեմատ բարձր աստիճան էր նշանավորելու: Այս շրջանում Ներսիսյան գլոբոցում այլևս չկար այն հայրենասիրական շիկացած միջնորդը, որ ծանոթ է Ալամդարյանի զվարացած տարիներից, այս այն շրջանն է, երբ Աբել Գուրգենբեկյանի նամակը հայ թատրոն կազմակերպելու մասին,

Սակայն, այսպես գատողները միանգամայն սխոլ կարծիքի են և ահա թե ինչու:

Ռասինի «Գոթողիա» ողբերգությունը, որ հեղինակի կենտանության ժամանակ հաջողություն չտափ և նույնիսկ ֆրանսիացի դրամատուրգի փառքի շիշման պարագաներից մեկը դարձավ, կլասիցիզմի կանոնների խոնաման նշանակալից երկերից մեկն է: Ռասինը «Գոթողիայում» հանգես է զալիս որպես կլասիցիզմի հիմունքները զերանայող:

Ռասինի «Գոթողիա» ողբերգության մեջ հեղինակը արտահայտում է հետեւյալ կարեռը քաղաքական զաղափարները,

ա) Բոլոր թագավորները, բոնակայնները, ինչ հասակի և ինչ սեփի էլ պատկանելու լինեն, ժաղովրդի շահերի թշնամիներն են,

բ) Ժողովություն է, որ գերջին հաշվով պիտի անի նրանց դատաստանը:

Այս քաղաքական հայացքները, որ հայ ազդի երիտասարդ թագերական արտահայտել էիր ուսումնակիրության մեջ, դատել է Ռասինի «Գոթողիա» ողբերգության էջերում:

Մի էական կետ կա, որ լուսաբանության կարիք է զգում:

Ռուսական բեմից հանված էր Ռասինի «Գոթողիա» ողբերգությունը զեկուրբիստների ապաստմբության անհաջող փորձերից հետո՝ նրանում հակամիւսպետական զաղափարներ արտահայտելու առնչությամբ: Հանգույզն երիտասարդն իր թարգմանությամբ ցույցի է զուրս զալիս, քողարկելով իր իսկական նպատակը: Հրատարակիչն ու զբանական բնիւթեւ չեն հասկացել հարցի բուն իմաստը: Պիեսի նյութը վերցված է հին հրեական կյանքից, իսկ հեղինակը՝ անվանի ֆրանսիական դրամատուրգ է: Այս է եղել քողարկման միջոցներից մեկը, որի շնորհիվ զերքը լույս է տեսել (էջ 23—24):

Ներսիսյան դպրոցի ղեկավարները թողնում են անպատճառախան¹: Առավել վատթար էր դրությունն էջմիածնում: Այս այն շրջանն է, երբ հազիվ մի երկու ամիս ժրաջան գործունեություն ծավալած Թաղիադրանը հալածանքներից նեղվելով, ստիլված է լինում էջմիածնից մի գիշեր փախուստի դիմել:

Այս նույն ժամանակները Սարգիս Տիգրանյանն իր վերոհիշյալ աշխատությունն է գրում: Սարգիս Տիգրանյանը որպես մտածող նախարարովանական շրջանի գրական-թատերական մտքի արտահայտությունն է: Ուստի դրամատուրգիայի մասին նրա գրածը ոչ թե միայն ուսւագական մասին առաջին տպագրված տեսական գնահատությունն է, այլև այն տարիներին, երբ Հայաստանը նոր էր միայն մտել ուսւական պետության կազմի մեջ, ուսւա և հայ ժողովուրդների բարեկամությունը ամրապնդող մի օղակ:

Ուստական կուլտուրայի ամեն մի պրոպագանդա առաջավոր դիրքերից, ուսւական կուլտուրայի առողջ տրադիցիաները հայ իրականության մեջ պատվաստելու ամեն մի ձգուս, նպաստելով մեր կուլտուրայի առաջխաղացմանը, կողմնորոշող դեր խաղալով նրա գարգացման մեջ, օգնել է հայ ժողովրդին ընդհուպ մոտենալու Ռուսաստանին, մասնակից դառնալու նրա քաղաքական, իդեական կյանքին և ի վերջո իր բախտն անվերադարձ կերպով կապելու ուսւական ազատագրական շարժումների հետ:

Ահա այս լուսի տակ էլ պետք է գնահատվի հայ իրականության մեջ ուսւա գրականության մասին ասված առաջին խոսքը:

Եվ մի՞թե կարելի է ձեռքի տակ այսպիսի փաստեր ունենալուց հետո Տիգրանյանի մասին գրել, թե նա «հակադրում էր իրեն ուսւական ազատամտությանը և դեմոկրատիային»²:

¹ Ա. Դ. Երիցյանց, Պատմություն 75-ամյա գոյության ներսիսյան հայոց հոգևոր գպրոցի, հատոր Ա (1824—1850 թ.), 1898, էջ 256:

² «Հայ գրականության պատմություն», երկրորդ հատոր, 1933, էջ 23:

Այդ արտառոց, ոչնչով չկիմնավորված տեսակետը արտահայտվել է այն տարիներին, երբ վուգար-սոցիոլոգիզմի զոհն էին դառնում հայ գրողները Արովլյանից սկսած։ Օրինակ, Արովլյանը հայտարարվում էր ոռուսական ինքնակալության տուաջ գլուխ խոնարհած գրող, Պոռշյանը մեկնաբանվում էր որպես մանրբութուական գյուղացիական պահպանողական հոսանքի ներկայացուցիչ, որ դավանում է կղերաֆեոդական հայացքներ, Սունդուկյանը և նրա հերոս Պեպոն՝ լիբերալ բուժուազիայի շահերի արտահայտիչ և այլն։ Միթե պարզ չէ, որ դրական մտածողության այս մթնոլորտում ինչ դնահատության կարող էր արժանանալ Տիգրանյանը։ Սակայն զարմանալի է, որ դրանից հետո էլ, մինչև վերջին ժամանակներս ոչ մի փորձ չի արմել Տիգրանյանի վրայից վերցնելու վուգար-սոցիոլոգների փակցրած պիտակը, մի դործիչ, որի ճակատագիրը ժամանակին զբաղեցրել է ուսուցչունուկներաւ Միքայել Նալբանդյանին¹:


1 Նալբանդյանն իր եղբորը՝ Դաղարին գրած նամակում ցավ է հայտնում, որ Տիգրանյանին մերժել են թե ինչ կտղակցությամբ է Տիգրանյանը մերժում ստացել հայտնի չէ։ Գետք է հուսար, որ նալբանդյանով զբաղվող մեր բանստեղները ժամանակին կկարողանան պարզել այս հարցը։ Պետք է, որ հասարակական նշանակություն ունեցող մի խնդիր լինի այդ, որ մտահոգել է Նալբանդյանին, նույնիսկ բանտում եղած ժամանակը։ Նամակի այդ կետի պարզաբանմանը, զժբախտարար, չի անդրադառնել նաև Նալբանդյանի երկերի դիտական հրատարակության ծանուցազրողը (անս չորրորդ հատոր, 1949, էջ 378)։ Նալբանդյանագետների ուշադրությանն ենք հանձնում հետեւյալ ենթադրությունը։ Պրոֆ. Արշարունին զրախոսելով պրոֆ. Ռ. Հովհաննեսյանի արգեն հիշված աշխատությունը, հիշատակում է մի փաստ նրա զործունեությունից, որ մինչև հիմա անհայտ էր։ Ս. Տիգրանյանը 19-րդ դարի 60-ական թվականներին թեոդոխայում փորձել է կազմակերպել «Հայրենավելով» („Отечественные записки“) անունով ամսագրի հրատարակություն։ Նկատի ունենալով հրատարակելիք պարբերականի անունը, Արշարունին ասում է, թե զրանով գործի նախաձեռնողները կամենում էին բնդդեմ իրենց կազը ոռուսական ժուռնալի հետ, ոռուսական դեմոկրատական մտքի փառավոր տրադիցիա-

Մեր նպատակը չէ քննել և լուսաբանել Սարգիս Տիգրանի գրական-թատերագիտական հայացքները: Դա, ինչպես ասացինք, առանձին խնդիր է: Մեր նպատակն էր մի ուշագրավ փաստով լրացնել և ճշգրտել պրոֆ. Ռ. Հովհաննիսյանի աշխատության այն թեղը, թե ե՞րբ, որտե՛ղ և ինչպե՛ս է առաջին անդամ գնահատվել ոռու գրականությունը հայ հասրակական մտքի կողմից: Վերոհիշյալ փաստը իրավունք է տալիս պնդելու, որ ոռու գրականության մասին առաջին տպագրված տեսական գնահատությունը եղել է ոչ թե 1845—46 թթ., այլ դրանից 10—12 տարի առաջ, 1834-ին, ոչ թե Վենետիկում, այլ Մոսկվայում, Սարգիս Տիգրանյանի կողմից:

1950

Ները շարունակելու ձգառումը: «Հավանական է,—զբում է նա,—որ այդ հանգամանքն էլ խանգարել է ժուռնալի լույս տեսնելուն» („Дружба народов“, 1950, № 4): Արշարունու ասածից երեսում է, որ Տիգրանյանի զիմումը ամսագիր հրատարակելու մասին մերժվել է: Ի՞նչ հետեւթյուն կարելի է անել սրանից: Նալբանդյանն իր նամակը գրել է 1863 ապրիլ 8-ին: Տիգրանյանի այս մտագրությունը վերաբերում է 60-ական թվականներին: Եթե պարզվի, որ Տիգրանյանն ամսագրի հրատարակության համար զիմել է թույլտվություն ստանալու այդ նույն թվականին, մինչև ապրիլ ամիսը, կամ նրանից առաջ՝ անհավանական չէ, որ Նալբանդյանի նամակում Տիգրանյանի մատին եղած խոսքը վերաբերում է գերոհիշյալ ամսագրի մերժմանը կտակարության կողմից:

ՊԱՅՔԱՐ ՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ
ՈՒԽԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅԻ
ՀԱՄԱՐ




ՊԱՅՔԱՐ ՕՍՏՐՈՎԱԿՈՒ ՀԱՄԱՐ

Ալեքսանդր Նիկոլաևիչ Օստրովսկին առաջին ոռու խոշոր պրողն է, որի դրամատուրգիան մուտք է գործել հայ թատրոն:

Նրա դրամատուրգիայի դերը մեր կյանքում պետք է գնահատվի հայ թատրոնի առաջ ծառացած խնդիրների լուսնակակ, ոչ մեր թատրոնի պատմության ընթացքից դուրս և անկախ, ինչպես երբեմն արվում է, այլ այն պրոգրեսիվ նշանակության տեսակետից, որ ոռու դրամատուրգիան ունեցել է ունալիստական տրադիցիաների ընդերման ու ամրապնդման իմաստով, այն տեսակետից, թե որքա՞ն և ինչպե՞ս է տվյալ դեպքում, ասենք, Օստրովսկին նպաստել ունալիստական թատրոնի գարգացմանը:

Այն պայքարը, որ եղել է մեզնում Օստրովսկու շուրջը, նրա գեմ և նրա համար, ոչ այլ ինչ էր, բայց եթե մի անբաժան մասը թատրոնի շուրջը ծավալված այն գաղափարական պայքարի, որի մեջ իր պարզ արտացոլումը գտավ մի ազգի մեջ երկու ազգային կուլտուրաների՝ դեմոկրատական և լիբերալ-պահպանողական կուլտուրաների՝ բախումը:

Ռուսական կլասիկ դրամատուրգիայի բեմադրությունը, ինի դա Օստրովսկու «Եկամտավոր պաշտոնը», թե Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը», Գոդովի «Ռեկուրը», թե Սովորովի «Կրեչինսկու հարսանիքը», Տուլսովյի «Կենդանի-



ՊԱՅՔԱՐ ՕՍՏՐՈՎՆԿՈՒ ՀԱՄԱՐ

ԱՀԿԲԱՄԴՐ ՆԻԿՈԼԱԵԽԸ ՕՍՏՐՈՎՆԿԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՌԱ ԽՈՉՈՐ-
ՔՐՈՂՆ է, որի դրամատուրգիան մուտք է գործել հայ թատրոն:

Նրա դրամատուրգիայի դերը մեր կյանքում պետք է գնա-
ցատվի հայ թատրոնի առաջ ծառացած խնդիրների լուսի-
տակ, ոչ թե մեր թատրոնի պատմության ընթացքից դուրս և
անկախ, ինչպես երբեմն արվում է, այլ այն պրոդրեսիվ նշա-
նակության տեսակետից, որ ուսու դրամատուրգիան ունեցել է
ոեալիստական տրադիցիաների ընդերման ու ամրապնդման
իմաստով, այն տեսակետից, թե որքա՞ն և ինչպե՞ս է տվյալ
դեպքում, ասենք, Օստրովնկին նպաստել ոեալիստական
թատրոնի զարգացմանը:

Այն պայքարը, որ եղել է միզնում Օստրովնկու շուրջը,
նրա դեմ և նրա համար, ոչ այլ ինչ էր, բայց եթե մի անբա-
ժան մասը թատրոնի շուրջը ծավալված այն դադարական
պայքարի, որի մեջ իր պարզ արտացոլումը գտավ մի ազգի-
մեջ երկու ազգային կուլտուրաների՝ դեմոկրատական և լի-
բերակ-պահպանողական կուլտուրաների՝ բախումը:

Ռուսական կյանքի դրամատուրգիայի բեմադրությունը,
լինի դա Օստրովնկու «Եկամտավոր պաշտոնը», թե Գրիբոյե-
դովի «Խելքից պատուհասը», Գոգովի «Մկնեղորը», թե Սովորով-
Կորիլինի «Կրեչինսկու հարսանիքը», Տուլսովի «Կենդանի-

դիակը», թե Գորկու «Հատակումը», միևնույն է, օգնել ու մեծ շափով օժանդակել է հայ թատրոնի դեմոկրատական ուժերին՝ բեմարվեստը կողմնորոշելու դեպի ռեալիստական տրադիցիան, ամուր և հաստատ պահելու թատրոնի կազմը ժողովրդի ու կյանքի հետ և ընդհանրապես բարձր պահելու թատրոնի հասարակական-կրթական նշանակությունը:

Այսպիսով, ռուսական դրամատուրգիան մեծապես օդնել է այն պայքարին, որ հայ առաջավոր դերասանները մղել են կղերա-պահպանողական, լիբերալ-բուրժուական աղղեցությունների դեմ՝ հանուն թատրոնի պրոգրեսիվ-դեմոկրատական ուղղության պաշտպանության:

* * *

Անցյալ դարի 60-ական թվականների սկզբներին հայ ռեալիստական թատրոնը նոր էր միայն ձևավորվում: Այդ թատրոնի գլուխ անցած առաջավոր գործիչները՝ Գևորգ Չմշկյանը, Միհրդատ Ամրիկյանը և մյուսները՝ շատ լավ էին ըմբռնում այն ղեկավար սկզբունքը, թե ռեալիստական թատրոնի հիմքը ռեալիստական դրամատուրգիան է: Նրանք հասկանում էին, որ միայն ռեալիստական դրամատուրգիան կարող է թատրոնի և ժողովրդի միջև հաստատուն կազ ստեղծել և ընդհանրապես թատրոնը դարձնել կյանքի վրա ռեալ աղղեցություն ունեցող մի գործոն:

Վաթունական թվականների սկզբներին հայ ինքնուրույն դրամատուրգիան իր առաջին և, կարելի է ասել, գեռ բավականաշափ թուզ քայլերն էր անում: Բացի Միքայել Պատկանյանի պիեսներից, այդ շրջանում հրապարակի վրա էր Նիկողայոսի Փուղինյանի հայտնի, ընդհանուր առմամբ հաջողություն գտած կոմեդիան («Դալալ Զաղո»): Իր վողեկիլներով նոր էր միայն հրապարակ գալիս Միքայել Տեր-Գրիգորյանը: Ասպարեզի վրա էր Գաբրիել Սունդուկյանի անդրանիկ պիես՝ «Գիշիրվան սաբրը խեր է», ինչպես ինքն է անվանել՝

կատակը, որը շատ կողմերով դեռևս կապված էր նախասունդուկյանական դրամատուրգիայի տրադիցիաների հետ:

Այդ դրամատուրգիայի կատարած պատմական դերն անկատած է: Ժամանակին նա փորձ կատարեց և հող նախապատրաստեց ոեալիստական լայնակտավ դրամատուրգիայի զարգացման համար: Սակայն այդ դրամատուրգիան թե՛ իր գեղարվեստական դեռևս ցածր մակարդակով և թե՛, մանավանդ, զաղափարական բովանդակությամբ՝ չէր կարող, իհարկե, լուծել թատրոնի առաջ կանգնած խնդիրները: Բանն այն է, որ այդ շրջանում մենք գործ ունեինք ոեալիզմի բավականաշատ նախիլ արագացայտությունների հետ: Դրամատուրգիայի շոշափած հարցերի շրջանակը սահմանափակ էր, այլ կերպ ասած՝ արդիական թեմատիկան դրեթե դուրս չէր զալիս կենցաղային իրականությունը պատկերելու ոլորտից:

Որքան էլ հասարակությունը, հատկապես նրա դեմոկրատական հաստվածը չերմ էր ընդունում հայ ոեալիստական դրամատուրգիայի վաղ շրջանի այդ երկերը, որքան էլ ժամանակի առաջադիմական դործիչները իրավացի կերպով պաշտպանում էին դա, միևնույն է, այդ դրամատուրգիան չեր կարող վերջնական հաղթանակ շահել պատմական ողբերգությունների դեմ: Սխալ կլինի կարծել, թե նրանք ընդհանրապես ժխտում էին պատմական թեման: Սակայն նրանք դեմ էին ոեալիստուարում պատմական ողբերգությունների տիրապետությանը, ինչպես իրենց հակառակորդների թատրոնումն էր, մանավանդ որ հրապարակի վրա եղած՝ անցյալի իդեալականացմամբ տոկորված պատմական ողբերգությունների մեծ մասը լիսրժեք դրամատուրգիա չէին համարում: Պատմական ողբերգությունների թեմադրությունը համարվում էր ոչ առաջնահերթ, մի որոշ իմաստով նույնիսկ ակամա գործ: Թե՛ թատրոնի դեկալարները, թե՛ հասարակության դեմոկրատական հատվածը, թե՛ առաջավոր քննադատությունը պատմական ողբերգությունները համարում էին «անհամ ու անլի», «ձիճառաշարժ և միմոսական»: ...«Մենք խորհուրդ կտայինք մեր

հարդու գերասաններին, որ շատ հազիվ և այն էլ մեծ ընտրությամբ ներկայացնեն որևիցեւ ողբերդական խաղարկություն»¹, — գրում է Օստրովսկու պիեսի ներկայացման քննադասը:

Նկատի ունենալով հակառակորդ թատրոնի նախորդ տարվա փորձը՝ Զմշկյանը և նրա ընկերները գրում էին՝ «Թատրոնն անցյալ տարի էնակս հեռացավ իր ճշմարիտ ուղղությունից, որ կարծես թե դի առողիտորիա դառավ, որտեղ կարդում են հայոց պատմությունը»²; Նույն տեսակետը պաշտպանում էին նաև քննադատության պրոգրեսիվ դեմքերը: Նրանք խորհուրդ էին տալիս հրաժարվել «անհամ և անբնական նոր հայկական ողբերդություններից, որոնք թատրոնական բեմի վրա դառնում են կատակերգություններ»³:

Ահա այս շրջանում էլ դեմոկրատական թատրոնի դեկավարների, առաջին հերթին Գևորգ Զմշկյանի առաջ, որ 60-ական թվականների հայ ուսալիստական թատրոնի իդեալական պարագլուխն էր, ծառանում է ուսպերտուարի հարցը: Եվ բնական է, որ թարգմանական ուսպերտուարը կազմելիս նրանք իրենց հայացքը պետք է դարձնեին դեպի Մոսկվայի Փոքր թատրոնը: Զմշկյանի ու նրա համախոհների համար այդ թատրոնը կողմնորոշող փարոսի նշանակություն ուներ: Ինքը՝ Զմշկյանը Մոչալովով էր ոգևորված: Փոքր թատրոնի ներկայացումները հայ թատրոնի դերասաններից մի քանիսի համար առաջին ստեղծադադրական դպրոցն են եղել: Ինչպիս, և ամենենին պատահական շենք համարում, որ Սովորովյանը, թեև իր ուսանողական տարիներն անց էր կացրել Պետերբուրգում, բայց Մոսկվայի Փոքր թատրոնի դերասաններից էր: Զմշկյանի և մյուսների համար ոչ մի թատրոն չուներ այն անառարկելի հեղինակությունը, ինչ որ Փոքր թատրոնն իր դեմոկրատական հիմ-

¹ «Մեղու Հայաստանի», 1864, № 40:

² Նույն տեղում, 1865, № 4:

³ Նույն տեղում, № 49:

քով և խորը ժողովրդայնությամբ։ Ուստի միանգամայն հասկանալի է, որ նրանք պետք է աշքի առաջ ունենային այդ թատրոնի փորձը, ունպերտուարի բնագավառում վարած նրա քաղաքականությունը։

Առաջին ոռւս հայինակը, որի վրա կանգ առավ Զմշկյանի ու նրա ընկերների հայացքը, Օստրովսկին էր, որի պիեսները, ինչպես հայտնի է, իրենց բեմական կատարյալ մարմնավորումն էին գտել Մուսկվայի Փոքր թատրոնում։

1864 թվականի դեկտեմբերի 7-ին հայ բեմ է բարձրանում Օստրովսկին։ Ներկայացվում է նրա «Ուրիշի սահնակին մի նստիք» կոմմեդիան, թարգմանված Գևորգ Տեր-Աղեքսանդրյանի կողմից թիֆլիսահայ բարբառով («Ով որ քու բարը չէ՝ նրա հիդ մի ձգվե»)։

Մինչ այդ Օստրովսկին երբեք չէր բեմադրվել հայ թատրոնում։ Նրա պիեսների բեմական պատմությունը մեզնում սկսվում է այս ներկայացումից։ Այս ներկայացումը մի նշանակալից էջ է հայ թատրոնի պատմության մեջ։ «Ուրիշի սահնակին մի նստիք» պիեսը ոչ միայն Օստրովսկու՝ հայ բեմում խաղացված առաջին գործն է, այլև ընդհանրապես ուստական դրամատուրգիայից վերցված անդրանիկ պիեսը, որ բեմադրվել է հայ թատրոնում¹։ Հաջորդ գործը, որ ընտրվում է սուսական պիեսներից՝ Սովորված-Կոբիլինի «Երեշնակու հարսանիքը» կոմմեդիան է, որը նույնպես թարգմանվել է թիֆլիսահայ բարբառով։

«Ուրիշի սահնակին մի նստիք» ներկայացմանը մասնակցում էին 60-ական թվականներիի հայ թատրոնի ամենալավագույն ուժերը՝ Գևորգ Զմշկյան, Միհրդատ Ամրիկյան,

1 Նկատենք, սովորյան, որ գրանից առաջ ներկայացվել են պիեսներ, որոնք սուսականից են հայացված։ Այդպիսի պիեսների թվին է պատկանում, օրինակ, Նիկողայոս Ալաղաթյանի «Վայ իմ կորած հիսուն սակին»՝ վերնագրով վողելլը։ Պիեսը տպադրության հանձնելիս հեղինակն իր պարտքն է համարել զգուշացնել, որ շնորհը քաղված է սուսականից («Հայէկան Աշխարհ», 1866, № 7)։

Քեթևան Արամյան, օրիորդ Գայանե, Սեղբակ Մանդինյան, Արտաշես Սուքիասյան և ուրիշներ¹:

Ներկայացովը, ինչպես վկայում է ժամանակակից մամուլը, անցել է բացառիկ հաջողությամբ, ոինչպես ոչ մի պիես դեռ հայնքն լեզվով չեր ներկայացվել Թիֆլիսի մեջ²: «Բոլոր գլխավոր գերեր խաղացող գերասանները և գերասանուհիք, — զրում է ներկայացման քննադատը, — այնքան կատարյալ և լավ էին, որքան միայն հնար էր նրանցից պահանջել, մինչև անդամ շատ տեղ հուսացածներից էլ վեր էին»³:

Պատահական չէ, իհարկե, «Ուրիշի սահնակին մի նստիր» պիեսի ընտրությունը: Զմշկյանի և նրա համախոհների աշքից չեին կարող վրիպել պիեսի սոցիալական բովանդակությունը, նրա գեղարվեստական արժանիքները:

Անդրադառնալով Օստրովսկու «Ուրիշի սահնակին մի նստիր» պիեսին՝ Դորրոլյուբովը, հակառակ լիբերալ-բուրժուական քննադատության բռնած դիրքին, չի թարցնում դրամատուրգի առանձին շեղումները կյանքի ոհալիստական

¹ Անցյալ գրականությունից գիտենք, որ Ավոտիայի գերը կատարել է օրիորդ Գայանեն (տես Զմշկյանի «Թատրոնական հիշողությունները» «Փորձի» 1876-ի № 2-ում): Ենելով Զմշկյանի մյուս գերակատարությունը, նրա հակումներից և անհատականությունից մինքայն համոզմանն ենք եկել, որ նա պետք է մարմավորված լինի Վիխորնի գերը (տես մեր հոգվածը Գևորգ Զմշկյանի մասին «Ասովետական գրականություն և արվեստ ամսագրի 1951-ի № 5-ում): Իսկ թե ընդհանրապես ով ինչ գեր է խաղացել մինչև վերջին ժամանակներս հայտնի չեր, Գևորգ Զմշկյանի «Իմ հիշատակարանի» ծանոթագրություններում բերված է հետեւյալ զերարաշխումը. Գ. Զմշկյան՝ Վիկոր Վիխարե, Ա. Սուքիասյան՝ Բուսակով, Ս. Մանդինյան՝ Բարդոկին, Մ. Ամբիկյան՝ Մալուկի, օրիորդ Գայանե՝ Ավոտիա Մաքսիմովսու, Ք. Արամյան՝ Արինա, Ա. Գավթյան՝ Աննա և այլն (Երևան, 1953, էջ 183): Ծանոթագրությունների հեղինակը, որ Ա. Մելքոնիթյան է, զգրախարար, չի մատնանշել, թե ինչ ազբյուրից են քաղված վերոհիշյալ տեղեկությունները:

² «Մեղու Հայաստանի», 1864, № 49:

³ Նույն տեղում:

պատկերման սկզբունքից, սակայն երկը, նրա դադախարական բովանդակությունը գնահատելիս, նկատի է առել զլիավորը՝ կոմեդիայի առողջ հատիկը: «Մրա իմաստն այն է, — զրոմ է նա, — որ սամոզուրությունը, ինչպիսի բարի խնամակալության բնույթ էլ ընդունի, այնուամենայնիվ, նրան ենթարկված մարդկանց հասցնում է, առնվազն դիմադրկության, իսկ դիմադրկությունը բոլորովին հակառակ է ամեն մի ազատ ու խելացի գործունեության. Հետևաբար իր վրա ծանրացած սամոզուրության աղեցության տակ դիմադրել դարձած մարդք կարող է, հակառակ իր կամքի, անդիտակցաբար ամեն տեսակ ոճրադրություն կատարել և կործանվել լոկ հիմարությունից և ինքնուրուցնովիյան պակասությունից»¹:

Դեմոկրատական լայն խավերին, լինեն զրանք ուստական, թե հայկական, միենուզն է, Օստրովսկու այդ կոմեդիան մոտ էր ու հարազատ այն չերմ համակրանքով ու զդայուն կարեկցանքով, որ զրամատուրդը ցուցաբերել է դեպի ցավի ու վիրավորանքի մեջ ընկձված մարդը: Օստրովսկու կոմեդիայում հայ հանդիսատեսներին չեր կարող խորապես չհուզել պիհսի հերոսների հակատափիրը, չեր կարող մղում ու ասիթ շտալ մտածելու կյանքի սոցիալական անարդարության մասին:

Օստրովսկու այս կոմեդիան հայ գերասանների համար թանկ էր իր խորը մարդկայնությամբ, հումանիստական այն գաղափարներով, որոնք կարճ ժամանակից հետո, ինչպես հայտնի է, զարձան նաև Սունդուկյանի զրամատուրդիայի զլիավոր առանցքը:

Այսպիսով, Գևորգ Չմշկյանի և ընդհանրապես դեմոկրատական առաջավոր գերասանների գործունեությամբ մեր թատրոնը կարողացավ հայ բնում հաստատել ուստական դրամատուրգիայի տրադիցիան:

¹ „Ա. Խ. Островский в русской критике“, 1948, № 113—114 (տես ն. Ա. Գաբրուլյուսի, Քննադատական հոդվածներ, 1947, № 138):

Նույն այդ շրջանում Զմշկյանի գլխավորած թատրոնի ռեպերտուարը, բացի թարգմանական պիեսներից, հարստանումէ է նաև Սունդուկյանի կոմեդիաներով, որոնք ինչպես հայտնի է, հայ հասարակական-տնտեսական կյանքի հարազատ ծնունդը լինելով՝ սերտորեն կապված էին ուստական կուտուրայի ռեալիստական տրադիցիաների ստեղծագործական յուրացման հետ:

Օստրովսկին և մյուս խոշորագույն ռուս գրամատուրգները ոչ միայն սեր են զորացրել Սունդուկյանի մեջ գեպի թատրոնը, այլև իրենց հարուստ փորձով՝ նրան օգնել են ձիշակողմնորոշվելու հայ ռեալիստական ազգային գրամատուրգիան ստեղծելիս, որի առաջին հաստատուն հիմնաքարտը «Խաթարալա» կոմեդիան եղավ: Իսկ Օստրովսկու և Սունդուկյանի միջև եղած նմանությունները ոչ թե փոխառություն են, ինչպես ճգնել են հաստատել բոլորուական քննադատության ներկայացուցիչները, վկայակողելով՝ առանձին արտահայտությունների և սյուժենային գծերի զուգադիպություններ, այլ ռուս և հայ իրականությունների, սոցիալ-տնտեսական պայմանների, դրանցից բխող հարցերի և նրանց զաղափարական լուծման ընդհանրության արդյունք:

Զմշկյանի գլխավորած թատրոնը ներկայացրեց «Խաթարալան»: Այս բեմադրությունը ևս իր հաջողությամբ աննախընթաց էր: «Խաթարալայի» ներկայացումը, — գրում է Զմշկյանն իր հաշողականություններում, — այնպիսի մեծ հաջողություն ունեցավ, որ ոչ մեկ պիես, թե գորանից առաջ և թե գորանից հետո՝ երբեք չէ ունեցել»¹: «Խաթարալան» լայնակտավ սոցիալական կոմեդիայի առաջին փորձն էր հայ գրամատուրգիայում:

«Խաթարալան» ամբազնդեց «Ռուիշի սահնակին մի նըստիր» ներկայացումով՝ նվաճված հաջողությունը, հանդիսանա-

¹ «Փորձ», 1876, № 2:

Հայ թատրոնի հասարակական-մերկացնող գծի դրսեռապմբ:

Թէ՛ Օստրովսկու պիեսի, թէ՛ «Խաթաքալայի» ներկայացման քննադատությունը շեշտել է դերասանական կատարման բարձր որակը: Մամովը ճիշտ է բացատրել այդ. երկու դեպքումն էլ պիեսի նյութը քաղված է ժամանակակից կյանքից, որ դրանց մէջ գծադրված կերպարները կենդանի են, դիաչողը՝ հյութեղ, մարդկային հարաբերությունները՝ բնական ու պարզ, ինչպես կյանքում: Քննադատությունը նշել է, կարելի է ասել՝ նույնիսկ հատկապես ընդգծել այն ճիշտ միտքը, թե ուսալիստական դրամատուրգիան ինչպիսի լայն հնարավորություններ է ընձևում գերասաններին՝ իրենց ստեղծագործական կարողությունները դրսերելու համար¹:

Վստահ կարելի է պնդել, որ մեր ազգային թատրոնի գերասանական անդրանիկ սերունդը Օստրովսկու, Սովորովյանի և Առևոլո-Կորիկինի դրամատուրգիայի հիման վրա դաստիարակեց ուսալիզմի ողով:

Այսպիսով, Օստրովսկու և Սովորովյանի դրամատուրգիան վճռական գեր խալաց ոչ միայն նոր ուսեղերտուարի ստեղծման, այլև ուսալիստական բնարկեստի զարգացման գործում, ոչ միայն կեղծ հայրենասիրական ոգով գրված պատմական ողբերգությունների դեմ մղվող պայքարում, այլև բնդիմ փրուն, ճոռոմ կատարման, շինծու և արհեստական այն խաղակերպի, որ հաստատվել էր Հայ թատրոնում՝ պատմական ողբերգությունների աղղոցությամբ: Պատկերայնությունը (картинаность) փոխարինվեց անպաճույն պարզությամբ, զոռում գոշունը, հոեստրական ինտոնացիան բնական, հյութեղ խոսքով, անարյուն կերպարները՝ կենդանի բնավորություններով, ուսմանտիկ վերացականությունը՝ կյանքի ճանաշղությամբ, միջավայրի, կենցաղի սուր զգացողությամբ:

1 «Մեղու Հայաստանի», 1864, № 49:

Եթե թատրոնը և նրա շուրջը համախմբված հասարակության դեմոկրատական հատվածը ոգևորված էր Օստրովսկու կոմեդիայի բեմադրությամբ և պաշտպանում էր դա, ապա թի՛ կղերական-պահպանողական, թե՛ լիրերալ-բուրժուական շրջանները, դժողով թատրոնի դեմոկրատական ուղղուց, հարձակվեցին Զմշկյանի ու նրա ընկերների վրա՝ անխնա քննադատության ենթարկելով Օստրովսկու պիեսի բեմադրության դադափարը:

Դեմոկրատական թատրոնի դադափարական հակառակորդներն օգտագործում էին այն միտքը, թե «մենք աղջի համար հասկանալին անհասկանալի է ուրիշ ազգերին»։ Այս սխալ, վնասակար, ըստ էության ազգայնական սկզբունքն առաջ քաշելով՝ նրանք փաստորեն ուզում էին մի անանցանելի պարսպով իրարից անջատել ժողովուրդներին և դրանով ոչ միայն հակադրվել ուսւ կուլտուրային, այլև կանխել, թույլ շտալ, որ զարգանա ուսական դրամատուրգիայի ու թատրոնի աղղեցությունը հայ թատերական կուլտուրայի վրա։

Որպես մի անհաղթահարելի դժվարություն, որպես մի անկարելի բան՝ նրանք առաջ էին քաշում թարգմանական արվեստի այն սկզբունքը, թե ազգային կոլորիտով հագեցած երկերը դժվար թարգմանելի են։ «Այս պիեսայի ամեն մի խոսքը, — կարդում ենք «Ուրիշի սահնակին մի նստիր» կոմեդիայի հայկական ներկայացման առթիվ գրված մի հոդվածում, — ամեն մի խոսքի արտաքերությունը ուսւաց լեզվով՝ հասկանալի է ուսւաց համար և ունի նոցա լեզվում նշանակություն, բայց տալ այս պիեսային ուսւի ազգային կերպարանք և հայոց լեզու՝ ծիծաղիլի մի գործ է, որով կարող են հաղարտանալ Զմշկյանցի նման ընտրյալ անձինք և նրա համախմբ ընկերները»¹։

Բստ էության, դա ուսական բուրժուական քննադատու-

¹ «Մեզու Հայաստանի», 1865, № 6։

թյան այն անձիշտ գրուվիթի փոխակերպումն էր, թե Օստրովսկու նշանակությունը նեղ, միայն ազգային լինելով՝ պարփակվում է տեղական անձունկ շրջանակներում, նույնիսկ մատչելի չէ ռուսական լայն հասարակացնությանը: Այդպիսի հայացք հետադայում մշակվեց նաև Սունդուկյանի նկատմամբ, որը երեկի նկատի ունենալով դրամատուրգը՝ ասաց, թե ինքը պատկերել է «ընդհանուր մարդկային դգացմունքները և դադարիարներ»¹:

Այս և նման հարձակումների հասարակական-դասակարգային հիմքերը շատ որոշ էին: Դեմոկրատական թատրոնի հակառակորդներն այսքան կարերություն էին տալիս Օստրովսկու բնմադրության հարցին, որովհետեւ դա դուրս էր գտնիս թատերական սեպերտուարի շրջանակներից և ստանում ընդհանուր գաղափարական նշանակություն:

Հայ դեմոկրատական թատրոնի իդեական պարագլուխները նպատակ էին դրել ստեղծել հասարակական-կրթական նշանակություն ունեցող թատրոն, որը, ինչպես Փոքր թատրոնը Մուսկայում, պետք է կտպված լիներ կյանքի հետ, խորանար ժամանակակից իրականության սոցիալական հարցերի էության մեջ, մերկացներ «փողի թագավորությունը», առաջքաշեր դեմոկրատական-հումանիստական գաղափարներ, ծառանար կող ստրկական վիճակի դեմ, սլաշտապաներ մարդկային արժանապատվությունն ընդգեմ՝ բռնության, նախապաշտարմունքի, լճացման, ընդհանրապես խավարամոլության:

Փոքր թատրոնի դերասաններն ու Օստրովսկին իրենց հասարակական-քաղաքական հայացքներով ունեցուցիսներներ չեին: Նույնը՝ և Զմշկյանը, Ամրիկյանն ու Սունդուկյանը: Երանք դեմոկրատներ էին, լուսավորիչ դեմոկրատներ: Ո՛չ Օստրովսկին, ո՛չ էլ Շշեակինը շբարձրացան մինչև Զերնիշևիու ունեցուցիսն դեմոկրատիզմը, Նույնը նաև մեր իրականության մեջ. թե՛ Սունդուկյանը, և թե՛ Զմշկյանն ու Ամրիկյանը անկարող եղան հասնելու նալբանդանին, բայց նրա դեմոկրատա-

¹ «Մշակ», 1901, № 96:

Սակայն դա զարժանալի չէ, որովհետև «Հայկական Աշխարհը» Նալբանդյանին համարում էր «աշխալցի, թեթևագրիչ երիտասարդ»։ Հակագրվելով Նալբանդյանի անվան շուրջը եղած ամենաշատիավոր ոգմարտիքանն անդամ, նրանով Համբաշտակվելը անմատություն համարելով՝ «Հայկական Աշխարհը» պարզ և որոշակի ասում է. «Նալբանդյանը հաստարձատ ուղղություն մի կարող չէր ունենալ և չըներ»¹:

Մի՞թե պարզ չէ, թե այդպիսի հայացքներով դեկավարվող ամսագիրն ինչպես պետք է դիրքորոշվեր դեպի թատերական հարցերը։ Երբեմն թեև հակասելով, այնուամենայնիվ, պարզ է, որ նա պետք է հակառակ լիներ այն տվյալները, որի առաջին պաշտպանը հայ իրականության մեջ Նալբանդյանն է եղել։ Հասկանալի է, որ նա պետք է բացասեր այն թատրոնը, որ Նալբանդյանի նախագծած շավով էր ընթառում։

«Հայկական Աշխարհը» մեղադրում է Զմշկյանին և նրա համախոհներին, որ հրապարակով հայտարարել են, թե «Թատրոնը ազգային դաստիարակության ատյան է» և հանկարծ... Սունդուկյանի «Խաթաբալան» են բեմադրում։ Նրա կարծիքով «Խաթաբալանի» բեմադրությունը հակառակն է հաստատում։ «Դուք, — զիմում է «Հայկական Աշխարհը» թատրոնի դեկավարներին, — հրապարակով անդամ քարոզում էիք, որ թատրոնը ազգային դաստիարակության ատյան է, բայց ցավալին այն է, որ ամենայն բանում ձեր խոսքը և գործը մի չեն»²։ Եթե աղքային դաստիարակություն տևելով՝ թատրոնը հասկանում է ժամանակակից կյանքի արտացոլում, քննադատական վերաբերմունք դեպի իրականությունը, ապա նրա, այսպես կոչված՝ քննադատը մերժելով դա՝ դանում էր, որ ժողովրդին պետք է կրթել, դաստիարակել անցյալի հիշատակներով։

«Մեր ժողովրդի պես ժողովրդի համար, — զրում է Թիֆլիսիցի Հայը «Հայկական Աշխարհում», — պետք է խաղացվին

¹ «Հայկական Աշխարհ», 1867, № 9:

² Նույն տեղում, 1866, №№ 6—7:

կան-ունալիստական էսթետիկայի կիրառովները հանդիսացան: Թե՛ Օստրովսկին, թե՛ Սունդուկյանն ու Զմշկյանը կապված էին ժողովրդի աշխատավորական խավերի հետ և արտահայտում էին նրա տրամադրությունները: Ժողովրդայնությունն ու գեմոկրատիզմը նրանց օգնեց սուր քննադատության հնաթարկել աղնվական բուրժուական միջավայրը: Եվ այն խորն ատելությունը, որ առաջացնում էին Օստրովսկու ու Սունդուկյանի արիեսները և Փոքր թատրոնի ու Զմշկյանի զլխավորած թատրոնի ներկայացումները ընդդեմ սոցիալական ձնչման, կամայականության, քարացածության, ինչ խոսք, նողաստում էին ուելլուցիոն-ազատազրական շարժման գործին: Բուրժուա-պահպանողական շրջանները, հասկանալով դա և նստատակ ունենալով թատրոնը ենթարկել իրենց ազդեցությանը, այն միտքն էին հայտնուամ, թե իբր հայ և ոռւս ժողովրդիների կենսական հետաքրքրությունները զանազան են և նրանց իրար հետ միացնող ընդհանուր շահեր չկան: Այսպիսով, նրանք կամենում էին մեր թատերական գործիչներին թիւլադրել Փոքր թատրոնից մի այլ, բոլորովին տարբեր ուղի:

Պատահական չէ, անշուշտ, որ «Հայկական Աշխարհ» ամսադիրը նույնպես անդրադարձել է այդ հարցերին:

«Հայկական Աշխարհը», ինչպես հայտնի է, բուրժուապահպանողական ուղղության էր պատկանում: Ամսագրի բնույթի մասին գաղափար կազմելու համար բավական է հիշել, որ հակադրվելով այն առողջ հայացքին, թե «ազատությունը և կրոնը անբավելի են միասին, կարող չեն միասին լինել», նա պնդում է ճիշտ հակառակը՝ ասելով, թե «ազատությունը բարվորացնում է բարքը և կրոնասիրությունը է տարածում»¹: Եվ այս կրոնապահպանողական անհեթեթությունն արտահայտվել ու պաշտպանվել է 60-ական թվականներին, երբ հայ իրականության մեջ Միքայել Նալբանդյանի զլխավորությամբ վաղուց արդեն ձեւավորվել էր ուելլուցիոն-դեմոկրատական հոսանքը:

¹ «Հայկական Աշխարհ», 1867, №№ 6, 7, 8:

ազգային ողբերգություններ, որովհետև մեր անկիրթ ժողովությունը պետք է հնովն ապրի և հպարտանամ իր առաջլա աղքային հերոսներով, երևելի մարդկանցով»¹:

«Հայկական Աշխարհը» ոչ մի նշանակություն չի տալիս այն հաջողությանը, որ Սունդուկյանի կոմիզիան գտել է ժողովրդի մեջ: «Հայկական Աշխարհը» խոստովանում է մի առիթով, թե իրեն հանդիմանողներ կան, իր հետ վիճողներ, որոնք ասում են, թե «Խաթաբալան» արժանի է ամենայն գովասանության, վասն դի նա գտել է ժողովրդի հավանությունը»², մի այլ կապակցությամբ, դարձյալ «Խաթաբալայի» մասին արտահայտվելիս, զրում է. «ասենք մեր կարծիքը այդ պիեսի վերա, որովհետև գա արդեն փառք է ստացել»³:

Այս հայտարարությունները հարցի քննության տեսակետից հետաքրքիր են, որովհետև նախ՝ պարզ ցուց են տալիս ամսադրի բռնած հակաֆոլովական դիրքը և երկրորդ՝ Սունդուկյանի պիեսի ունեցած հաջողության լայն շափերը:

«Խաթաբալայի» մասին «Հայկական Աշխարհը» հրապարակել է Թիֆլիսի Հայի քննադատական դիտողությունները: «Դա մերը չէ, ուստի բազազ խանինն է»⁴, — զրում է նա «Խաթաբալայի» մասին: «Մենք մերժում ենք, հերքում ենք»⁵, — հայտարարում է դարձյալ նա: Եվ, ահա, նպատակ ունենալով թատրոնի վրա ազգել՝ ասում է. «Պետք է հուսալ, որ թե պ. Սունդուկյանցի և թե պ. պ. խաղացողների ինքնասիրությունը, եթե չենք սիսալլում, ներելու չէ նոցա կրկնելու այդ պիեսը ամբողջապես...»⁶:

Սակայն, թատրոնը, հաշվի չառնելով այդ զդուշացումը՝ մի քանի անդամ կրկնեց «Խաթաբալան». «Հայկական Աշ-

¹ «Հայկական Աշխարհ», 1865, №№ 3, 4:

² Նույն տեղում, 1866, №№ 6, 7:

³ Նույն տեղում, №№ 1, 2:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

իսարհը» կրկին հանդես եկավ՝ այս անգամ արդեն իր զիտուղությունները հրապարակելով Հայասեր ստորագրությամբ: «Թիֆլիսի հայկական թատրոնը, — գրում է նա, — նույն անձիսիթար գրությունումն է, նույն անմիսիթար պիեսներն է ներկայացնում»¹: Այսուհետև, ոգեստությամբ խոսելով Ֆասուլաճյանի ներկայացրած «Կույրի զավակ» մելոդրամայի մասին, առիթն օգտագործում է՝ կրկին անդրադառնալու «Խաթաբալայի» գնահատությանը: «Այս պիեսը, — գրում է Հայասերը: «Կույրի զավակի» մասին, — բավական ընդունելություն գտավ ժողովրդի կողմից, ավելի, իհարկե, քան թե «Նինոյի նշնվիլը», «Խաթաբալա» և սոցա նման բազարային պիեսները»²:

Եվ «Հայկական Աշխարհը» ծրագիր է առաջադրում:

«Այս պիեսի սցենական հաջողությունը, — շարունակում է նա, — գոնե թող ասկացուցանե մեր պատվելի պարոններին «Հայկական Աշխարհ» միտքը, թե հնաբավոր է թարգմանություններ ներկայացնել, և այն ևս խիստ ընտրությամբ թարգմանված պիեսները. վերջապես գրող դառնալու համար հարկավոր է տալանտ ունենալ, պարոններ»³:

Թարգմանական ուեպերտուար ասելով «Հայկական Աշխարհը», ինչպես քիչ հետո կտեսնենք, նկատի շուներ Օստրովսկու և Սովոսով-Կորիլինի այն պիեսները, որ բնագրվել էին հայ թատրոնում, ընդհանրապես ուհալիստական կլասիկ դրամատուրգիան, այլ «Կույրի զավակը» և նման ուրիշ մելոդրամաներ:

Սակայն «Հայկական Աշխարհը» սրանով շրավականացավ և մի առժամանակ հետո այդ նույն հարցերի շուրջը հրապարակեց Մոսկվայից ուղարկած մի հոդված՝ ոմն եղիազարյանի ստորագրությամբ:

Նկատի ունենալով Մոսկվայում հայ ուսանողների ջանքերով կազմակերպվող ներկայացումները՝ «Հայկական Աշ-

¹ «Հայկական Աշխարհ», 1867, №№ 4, 5:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

Հարհի» մոսկովյան թղթակիցը ևս ամսագրի էջերից հարձակումներ է գործում Սունդուկյանի «Խաթաբալայի» վրա, այն մարդկանց դեմ, որոնք զրվատում կամ իրենց պաշտպանության տակ էին առնում այն պիեսը: «Ի՞նչ խաղ է, — հարցը՝ նում է Եղիազարյանը և շարունակում, — ...գոված «Խաթաբալա» կոմեդիան, որ մեծ առաջադիմություն է ունեցել Թիֆլիսի քեմի վրա: Բայց մեր կարծիքով՝ ավելի լավ է խաղալ «Ապրիլի 1-ը» կամ սրա նման մի ուրիշ կոմեդիա, քան թե «Խաթաբալայի» նման մի պիեսը, որից մեր հասարակությունը կարող է միայն վնաս քաշել: Ավելորդ ենք համարում հիշել և մյուս գրված պիեսների մասին, երբ ամենագովելի պիեսը չունե բարձր արժանավորություններ»¹:

Եղիազարյանի հարվածները միայն «Խաթաբալայի» դեմ չեն ուղղված. իր նամակում նա հեղնանքով է նշում, որ քեմադրիող պիեսների մեծ մասը վաճառականների կյանքից է, «որտեղ, բացի միշտ փող կրկնել բառից և մարդ ու կնոջ կովելուց, աղջկան մարդի շտալու կամ մի ուրիշ պատճառով, ուրիշ ոչինչ միտք չկա»²:

Նրա կարծիքով, ավելի լավ է «Խաթաբալայի» փոխարեն ներկայացնել «Ապրիլի 1-ը» կամ զրա նման մի այլ կոմեդիա: Եվ դա այն ժամանակ, երբ Հոդվածագրի գերադասած «Ապրիլի 1-ը», հենց իր իսկ ասկելով, չունի «ոչ մի իդեա և չի կտրող մինչև անգամ կրիտիկայի տակ ընկնել»³:

Տիակետը, ինչպես տեսնում ենք, նույնն է. մեկը Յանձնարում է անբովանդակ «Ապրիլի 1-ը», մյուսը՝ զգայացունց «Կույրի զավակը»: Խաղաթղթերը նույնն են, տարբեր է միայն զարկը. մեկը խաղում է թաքուն, խորամանկելով, ճառելով այն մասին, որ «թատրոնը ազգային դաստիարակության առյան է», իսկ մյուսը իր կեղծ խաղաթղութը սեղսն է նետում անպատկառ անկեղծությամբ:

¹ «Հայկական Աշխարհ», 1867, № 1:

² նույն տեղում:

³ նույն տեղում:

Եկ մի՞թե զարմանալի է զրանից հետո, որ «Հայկական Աշխարհ» մուկովյան թղթակիցը Սունդուկյանի հետ միասին մերժում է նաև Օստրովսկուն և Սովովլո-Կորիլինին:

Ահա թե ինչ է զրում նա հայ թատրոնի թարգմանական ռեպերտուրի մասին.

«Իսկ թարգմանություններ պիտի ընտրությամբ անել.—օրինակ, մենք չենք հասկանում, թե ի՞նչ նշանակություն կարող է ունենալ հայերի համար ...«Նե в свои сани не садись», «Свадьба Кречинск.» և ուրիշ նման պիեսների թարգմանությունները»¹:

Ամեն ինչ պարզ ասված է: Այստեղ շատ որոշակի և բավական հետեւղական մի տեսակետ է արտահայտված, մի կազմակերպված մտայնություն, որի նպատակն էր շեղել թատրոնի ուղիղ ճանապարհից, զաղափարազրկել, հեռացնել այն մերկացնող ուղղությունից, որն հայ թատրոնում այդ ժամանակ կապված էր Սունդուկյանի, Օստրովսկու և Սովովլո-Կորիլինի անվան հետ:

Վերոհիշյալ մեջքերումը կրկին հաստատում է, որ «Խարավայի» մերժումը մի պատահական ու կամայական քըննադասության փորձ չէ, այլ մի ամբողջական հայացքի արտահայտություն: Քննադատի մերժման ելակետը նույնն է,— եթե նա մերժում է Օստրովսկուն, պետք է մերժի նաև Սունդուկյանին, եթե մերժում է Սունդուկյանին, պարզ է, որ պետք է մերժի և Սովովլո-Կորիլինին: Եվ ուրիշ կերպ չեր էլ կարող լինել, որովհետեւ սրան հետաքրքրուն այս կամ այն պիեսը չէ և ոչ էլ այս կամ այն հեղինակը, այլ սկզբունքը, էսթետիկան, ուղղությունը, այսինքն՝ հենց այն, որ երեք զբանաւուրդի մոտ էլ նույնը լինելով, միավորում էր նրանց:

Ռհավիստական թատրոնի գաղափարական հակառակորդներն երբեմն այնքան հեռուն էին զնում, որ մերժում էին ամեն ինչ: Օստրովսկու, Սունդուկյանի, Սովովլո-Կորիլինի պիեսների հետ միասին նրանք բացասում էին նաև Վիկտոր-

1 «Հայկական Աշխարհ», 1867, № 1:

Հյուգոյի դրամաները. «մենք չենք հասկանում, — զբում է մի քննադատ, — թե ինչ նշանակություն կարող է ունենալ «կոնսնի», «լուկրեցի Բորջիան»¹ և այլն: Կային և այնպիսիները, որ դեմ էին նույնիսկ Շեքսպիրի բնմադրությանը. օրինակ՝ քննադատներից մեկը զբում է. «Այս պարոնները ինչպես լսում ենք կամ ենալ մինչև անգամ Շեքսպիրի խաղերին մերձենալ»²: Մի դեպքում վարկաբեկվում էր դրամատուրգը, մի այլ դեպքում՝ դերասանները: Սրա վրա չէին կարող ուշադրություն շղարձնել թատրոնի պաշտպանները: «Առաջ ասում են, թե մենք կամ ենում ենք, որ անպատճառ թատրոնի վիճի և շարունակվի, — զբում է նրանցից մեկը թատրոնի հակառակորդների մասին, — և միենույն ժամանակ ասում են թե ոչինչ մի ներկայացրեք, որովհետև մեր պիհսները կամ կոնանին նմաններ են, կամ Խաթաբալայի նմաններն են կամ Նեալ Չեոն սան ու սածուս-ի նմանները, ուրիշ շոնենք դեռևս: Եթի Օթելլոն էլ խաղան, ինչպես կարծես ժամադիր են խաղալ, ես հավաստի գիտեմ, որ էն ժամանակ կասին թե էդ էլ պիտք չէ խաղալ, որովհետև մենք դու չենք կարող հասկանալ հայր բանաստեղծին... Ուզեմն թատրոնը կողմիվ՝, չէ, ասում են թող շարունակվի, ապա ի՞նչ խաղան եթե թատրոնը շարունակվի»...³

Այսպիսով, ոեակցիոն դիրքերում կանգնած քննադատներն իրենց հարվածներն ուղղում էին դրամատուրգիայի այն բոլոր երեսությունների դեմ, որոնք 60-ական թվականներին մեր թատրոնի զարգացման ամենաառողջ, ամենադեմոկրատական հատիկն էին կազմում:

* * *

Օստրովսկու կոմեդիայի բնմադրությունից անմիջապես հետո Գեորգ Զմշկյանը, Միհրդատ Ամրիկյանը, Սեդրակ Ման-

¹ «Հայկական Աշխարհ», 1867, № 1:

² «Մեղու Հայաստանի», 1863, № 38:

³ Նույն տեղում, 1867, № 10:

գինյանը և Արտաշես Սուքիասյանը հրապարակեցին մի դեկտարացիա, որով գծեցին նոր թատրոնի զարգացման հեռանկարները՝ շոշափելով նրա հետ առնչվող մի շարք հարցեր:

Հիմնական հարցերից մեկը թատրոնի գեմոլրատացումն էր: Դեկլարացիայի հեղինակներն ասում էին, թե չի կարելի ժողովրդին ստիպել, որ սիրի թատրոնը «պետք է, որ ինքը, թատրոնը ապացուցանե, թե ինքը սիրելի է»¹: Ուրեմն՝ թատրոնը պետք է այնպիսին լինի, որ ժողովուրդը պահանջ դդահախնելու, իսկ սա այդպիսին կարող է դառնալ, երբ ժամանակի հուզող հարցերը արծարծի: Դրա համար, նրանց կարծիքով, թատրոնի ուսպերտուարում տիրապետողը արդիական դրամատուրգիան պետք է լինի: Օսորովսկու կոմեդիայի բիմադրությունը, ինչպիս արդեն տեսանք, պայմանավորված էր թատրոնի առաջ կանգնած հենց այդ խնդրի լուծման կենսական անհրաժեշտությամբ: Նույն նպատակն էր հետապնդում թատրոնը Սունդուկյանին և Սովորվո-Կորիլինին բեմից ներկայացնելով:

Քաջալերելով թատրոնին հասարակական-կրթական հշանակություն հաղորդելու սկզբունքը՝ առաջադիմական դիրքերի վրա կանգնած քննադատությունը զրում է. «Ժողովուրդը միշտ ուրախությամբ է ընդունում ինչ-որ իրա ներկա կյանքիցն է վեր առած, և այս ձևով միայն թատրոնական խաղարկությունը, հարձակելով հասարակությանը մեջ եղած վատ սովորությանց վերա և ջատագովելով լավ հատկությունքը, կարող են հասնել իրանց նպատակին, որ է՝ կրթել ժողովուրդը»²:

Օսորովսկու կոմեդիայի բեմադրության առթիվ եղած քննադատությունը նկատի առնելով՝ դեկլարացիայի հեղինակները պարզ ու որոշակի ասացին, թե իրենց կարծիքով, Օսորովսկին ավելի հասկանալի է ու մոտ ժամանակակից հանդիսատեսին, քան հայ պատմական անցյալին նվիրված ող-

1 «Մեղու. Հայաստանի», 1865, № 4:

2 Նույն տեղում, 1866, № 13:

բերգությունները։ Դրանք այն հանդիսատեսներն էին, որոնց
մասին նրանք ասում էին — «թատրոնը դրանց համար մտա-
վորական կերակուր է»։ Եվ չորս դերասանները հայտարարում
էին, թե «զրանց համար ենք ներկայացրել Օստրովսկի...
Դրանց համար ենք պատրաստում «Կրեշինսկու հարսանիքը»¹։

Դեկտեմբերի հեղինակները չեին կասկածում, որ հեռու
չէ և շուտով կդա այն ժամանակը, երբ ամեն մի հանդիսատես
«կսիրի մեր թարգմանած պիեսները և հեռու կբռնի իրան ան-
հասկանալի տրագեդիաներից»²։

Նրանք չեին սխալվում։ Պատմությունը հաստատեց
Զմշկյանի և նրա ընկերների իրավացիությունը։ Ինչպես
պարզվում է պահպանված տեղեկություններից, պատմական
ողբերգությունները հիշյալ շրջանում չեն ունեցել այն հաշո-
ղությունը, ինչպես դա ներկայացրել է բուրժուական պատ-
մագրությունը։ Ավելին, մամուլում խոսվել է, որ «անցյալ
տրագեդիաների տիսուր և անախորժ տպավորությունը» հան-
դիսատես հասարակությանը կտրել է թատրոնից³։

Անպատասխան շմնաց նաև «Հայկական Աշխարհը»։

Մամուլում հանդես եկավ Սեղբակ Մանդինյանը, որ այն
ժամանակ կանգնած էր առաջաւոր դիրքերի վրա, և պաշտ-
պանեց Զմշկյանի գլխավորած թատրոնը «Հայկական Աշխար-
հի» հարձակումներից։ Նա խիստ զարմացած էր և տարրական
տրամաբանություն անդամ չէր գտնում հակառակորդների
պնդումների մեջ։ Մանդինյանն ասում է, որ ինքը չի հասկա-
նում, թե ինչո՞ւ են պահանջում Սունդուկյանի, Օստրովսկու,
Սովորով-Կորիլինի պիեսները շթարպմանել, չբեմադրել»...

...«Ինչու Օստրովսկուն չի կարելի թարգմանել, — ասում է
Մանդինյանը, — ...էդ անհասկանալի է»։ Եվ ապա վճռակա-
նորեն հայտարարում է. «Իսկ իմ կարծիքով, եթի պետք է
պիեսներ թարգմանվի, նախ և առաջ Օստրովսկին պիտի թարգ-

¹ «Մեղու. Հայաստանի», 1865, № 4։

² Նույն ակդում։

³ Նույն ակդում, 1866, № 13։

մանկի»: Մանդինյանն այս հարցին տալիս է հետեւալ բացարությունը. «Մեր վաճառականաց կյանքը և ոռւսաց վաճառականների կյանքը շատ քիչ զանազանություն ունին, և ուրեմն մեզ հասկանալի կլինի և ախորժելի կլինի տեսնել մեր քեմի վրա մեր կյանքը»¹,

Իսկ մի այլ առիթով էլ անդրադառնալով «Հայկական Աշխարհի» էջերում փառաբանված «Կուրի զավակը» մելոդրամային, նույն Մանդինյանը ասում է, թե «ամաշում ենք և, կարմրում ենք պ. Ստեփանեի ցեմինս Հայասերի տեղ, որ դա համարանի դիպում ունենալով, էղակս ճաշակ ունի և քարոզում է: Ով որ չի տեսել էդ պիեսան, ո՞վ գիտե ճշմարիտ կարծե, թե մի աննման գրություն է»... և ապա վերլուծելով պիեսի մելոդրամատիկ բովանդակությունը, ցույց տալով նրա գեղարվեստական խեղճությունը, բացազանչում է. «Ով ամենապարօւնակ «Աշխարհ», ինչու չեք ասում, թե «Կուրին զավակը» էֆեկտներով լիքն է, բայց անպիտան գրություն է, արքայության զվարճացնելու դրություն է, ինչու դրան իրա տեղը չեք տալի: ...ինչպես եք համարձակվում հանդինարար աղաղակել, թե «Կուրին զավակը» բարձր է, քան «Նինոյի նշնվիւր» և «Խաթարալան»²:

Այսպիսով, Մանդինյանը պաշտպանում է Օստրովսկու պիեսները թարգմանելու նախաձեռնությունը, «Խաթարալայի» բեմադրության գաղափարը: Նա սկզբունքային նշանակություն է տալիս Օստրովսկու թարգմանությանը, որովհետեւ մեծ ընդհանրություն է տեսնում նրա պիեսներում պատկերված կյանքի և հայ իրականության միջև:

Անդրադառնալով ուսալիստական թատրոնի նկատմամբ «Հայկական Աշխարհ» և նրա խմբագրի բռնած գիրքին՝ Զմշկյանը ծաղրում է նրան, անվանում «Հայ լեղվի ինքնակոչ ուժքորմատոր»³, հեգնում, որ մեկ թիֆլիսցի Հայ, մեկ Հայա-

¹ «Մեղու. Հայաստանի», 1876, № 8:

² Նույն տեղում, № 28:

³ «Փորձ», 1877, № 3:

սեր ստորագրությունների տակ թաքնվելով, չնշին հարցեր քննելու վրա «ահագին քանակությամբ մեղան է վատնում», քայց չի տեսնում թատերական աշխարհում կատարվող իրադրածությունները, և եթե նույնիսկ անդրադառնում է՝ գրում է այդ մասին, ապա դրանք կազմված են «մեկ քանի նիհար և յուր լրագրի պես մաշված նախադասություններից»¹, նամանավանդ, որ մեծ մասամբ, դա եղել է վեճ հայ թատրոնի և դրամատորդիայի մասին արտահայտված ճիշտ մտքերի դեմ:

* * *

Ամփոփենք: Առաջին հարվածը, ինչպես տեսանք, բուրժուական քննադատությունն ուղղեց Օստրովսկու պիեսի բեմագրության դեմ: Սակայն թատրոնի զեկավարները՝ Զմշկյանն ու նրա ընկերները իրենց տեսակետի մեջ անդրդվելի մնացին: Նրանք, հավատարիմ իրենց սկզբունքներին, մի տարի անց բեմագրեցին Սովորվո-Կոբիլինի «Կրեշինսկու հարսանիքը»: Ռեակցիոն քննադատությունը նորից բարձրացրեց իր ձայնը: Դեմոկրատական թատրոնի պատասխանը եղավ այն, որ ուղիղ մի տարի հետո բեմ բարձրացավ Սովորվյանի «Խաթարաւան»: «Խաթարաւայի» բեմագրությունից հետո հարձակումներն ավելի սաստկացան: Սակայն թատրոնը, ողերոված պիեսի աննախընթաց հաջողությունից, շարունակեց իր գործը նույն ողով:

Սակայն Զմշկյանը և սրա ընկերները չբավականացան միայն դրանով և Օստրովսկու ու մյուս հեղինակների համար մղվող պայքարը տեղափոխեցին նաև մամուկի էջերը:

Ինչ է վկայում պայքարի այս ամբողջ պատմությունը:

Զմշկյանի և նրա ընկերների թատերական գործի դեմոկրատական ծրագիրն ու այդ ծրագրի իրականացման համար մղվող պայքարը լուսավորեց թատերական առաջավոր կու-

1 «Փորձ», 1877, № 3:

տուրայի զարգացման հետագա ընթացքը: Ազգային-ռեալիստական թատերական տրադիցիան հայ իրականության մեջ ծնունդ առավ ու կազմակերպվեց, աճեց ու ամրապնդվեց այն պայքարում, որ դեմոկրատական ուժերը մղում էին բուրժուական շրջանների դեմ:

Օստրովսկու դրամատուրգիայի մուտքը հայ իրականություն՝ համընկավ ազգային-ռեալիստական թատրոնի կազմավորման շրջանին:

Սակայն սիսակ կլինի կարծել, թե 80-ական թվականների գենուկրատական թատրոնի տարած հաղթանակով ավարտվում է այդ պայքարի սրատմությունը: Օստրովսկու համար սկսված պայքարն այդ պատմության առաջին էջերից է: Այդ պայքարը շարունակվեց նաև հետո, և' 80-ական թվականներին, և' 90-ական թվականներին, և' Գրիբոյեդովի շուրջը, և' Գորկու դեմ:

Օստրովսկու համար մղվող այս պայքարը, ինչպես տեսանք, դուրս է գալիս մի դրամատուրգի դնահատման հարցի սահմաններից: Դա հայ թատրոնում ռեալիզմն ընդերելու համար, թատրոնի հասարակական-մերկացնող ուղղությունը հաստատելու համար, ինչպես նաև հայ ռեալիստական դրամատուրգիայի և ազգային թատրոնի ասլանա բախտի համար մղվող պայքար էր: Պայքարն Օստրովսկու համար՝ պայքար էր ընդհանրապես ուսա կլասիկ դրամատուրգիայի համար, սկզբար էր ազգային սահմանափակության դեմ, պաշտպանություն այն դերի ու նշանակության, որ ուներ և պետք է տմանար ուսական կուտուրան հայ ժողովրդի կյանքում:

ՄԱՐՄԻՄ ԳՈՐԿՈՒ ՄՈՒՏԲԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆ ԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱ ՀԱՄԱՐ

1

Մաքսիմ Գորկու դրամատուրգիայի նկատմամբ հայ իրականության մեջ քավական վաղ է հետաքրքրություն ծագել։ Կարելի է ասել, որ այդ հետաքրքրությունը համընկել է Գորկու պիեսների բնմական անդրանիկ մարմնավորմանը՝ ոռւասկան թատրոնում։

Ել ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։

Գորկու «Թաղքենիները» և «Հատակումը» նշանավորում էին զարգացման մի նոր փուլ ոռւասկան դրամատուրգիայում։ Այդ պիեսները նոր խոսք էին ոչ միայն դրամատուրգիական առանձնահատկության տեսակետից, այն խիզախությամբ, որով զրոյք ծառացավ դրամատուրգիայում դարերով մշակված կանոնների դեմ, այլև իրենց գաղափարական բռվանդակությամբ, պատկերված աշխարհով ու մարդկանցով, առաջ քաշած հարցերով ու մտքերով։

Գորկու դրամատուրգիան ծնունդ առավ այն հուզումների և խմորումների շրջանում, որոնք նախորդեցին ոռւասկան առաջին ռեռլյուցիային։ Ել բնական է, որ հասարակության դեմոկրատական հատվածները, հատկապես ռեռլյուցիոն տրամադրությամբ համակված շրջաններն իրենց հուզող հարցերի պատասխանը գեղարվեստական դրականության մեջ պետք է որոնին նախ և առաջ Գորկու ստեղծագործության, այդ թվում և նրա դրամատուրգիայի մեջ։

Գորկին պատկերեց ռևոլյուցիոն ժամանակների Ռուսաստանը, որու ժողովրդի այն մեծ պատմական անցումը, որ նա կատարում էր կամայականության, դրամի թագավորության, նրա գայլացին օրենքների, հուշ-հնագանդության, ասիսական հետամնացության աշխարհից դեպի հոգեկան ուժերի արթնացում ու վերելք, դեպի սոցիալական աղատություն, դեպի մարդկացին պրոգրես, դեպի գասակարգացին պայքար՝ տառապանքների ու ճնշվածների բախտի համար:

Դեպի հայրենի երկիրն ու ժողովրդը ունեցած մեծ սերը, այն բարձր ու նոր մարդկայնությունը, որով հանդես էր գալիս Գորկին, նրա խոսքը զարձնում էին շիկացած, մերկացումն անխնա, ոչ միայն կալվածատիրության և բորժուազիայի նկատմամբ, այլև քաղքենիության, ընդհանրապես ամեն մի կեղտի դեմ, որ լճացնում էր կյանքը, քարացնում այն, բորբոքությունը մարդկանց միտքն ու հոգին: Թերևս ոչ մի գրող ռուս մարդու բարոյական մաքրությունը, նրա հումանիստական բնույթը, ճշմարիտ ու մեծ կյանքով ապրելու մշտական ձգումն այնպես խոր շի արտահայտել, ինչպես Գորկին, բայց և ոչ մի գրող այնպիսի ցնցող ուժով շի ցուց տվել, թի ինչպես է մարդկն այլանդակվում սեփականատիրական հասարակության մեջ, հոգեպես ընկնում, ինչպես Գորկին:

Նա ոչ միայն արտահայտեց իսկական կյանքի կարուն ու երազանքը, այլև ցուց տվեց ելքը, ճանապարհը, միաժամանակ պատկերեց դրա համար պայքարող միակ ճշմարիտ ուժը՝ պրոլետարիատին և նրա ասլագայի հետ իր ճակատագիրը կապած դեմոկրատական ինտելիգենցիային:

Գորկու դրամատուրգիայում բարձրացված հարցերը, արժարժված ու լուսաբանված են բանվոր դասակարգի դիրքերից, ռևոլյուցիայի շահերից:

Գորկու դրամատուրգիայով, ինչպես միանդամայն ճիշտ է քնության Ստանիսլավսկին, թատրոնում հաստատվում էր հասարակական-քաղաքական ուղղությունը:

Դրանով պետք է բացատրել, որ մամուլի էջերում լույս

տեսած ամեն մի հաղորդում, թե Գորկին նոր պիես է գրել, ընդհանուր աշխացք էր առաջ բերում, սպասում, հետաքրքրություն և՛ բարեկամների մեջ, և՛ թշնամիների շրջանում:

Գորկու գրամատուրիան նոր խոսք լինելով՝ իր համար ճանապարհ էր հարթում գեղի թարրոն, գեղի ժողովուրդ՝ գաղափարական բախումների շիկացած մթնոլորտում: Անկեղծ ոգմորողների հետ միասին՝ Գորկու գրամատուրիան ուներ գաղափարական հակառակորդներ, որոնց մի մասը հարձակվում էր հեղինակի վրա բացահայտ, մյուս մասը գործում քողարկված:

«Ներկայումս,— գրում է Շահումյանը՝ Գորկուն նվիրված իր մի հոգվածում,— դուք չեք դանի ոչ մի այսպես կոչված «առաջադիմական» թերթ, մայրաքաղաքի կամ գավառական, որ ժամանակ առ ժամանակ, այս կամ այն ձևով, զիտակցարար կամ անզիտակցորդն, վրիժառու շիներ Գորկուց նրա համար, որ նա երս է գարձրել «հասարակությունից» և գնացել է բանվորների մոտ»¹:

Այս պայքարն է պաղի դեմ, որ Սուրեն Սպանդարյանը և Աղնիկ զայրուցիթ» հոգվածում անվանել է «Գորկու կրունկից կծելու փորձ»²:

Այսպես էր ոչ միայն ուստական, այլև հայկական իրականության մէջը եվ զա հասկանալի է, որովհետեւ Գորկին վազուց թարգմանված լինելով՝ մեղնում էլ արդեն հոչակված էր որպես զրոյ: Հայ իրականության մէջ էլ Գորկին ուներ բարեկամներ ու պաշտպաններ, ինչպես և հակառակորդներ ու հարձակվողներ:

Մեր այս միտքը հաստատվում է թեկուղ Գորկու «Ամառանոցավորներ» պիեսի օրինակով: Այդ պիեսի անդրանիկ ներկայացումը, որ անդի է ունեցել 1904-ին, ուստական թատ-

¹ «Современная жизнь», 1911, № 1 (տես Ստեփան Շահումյանը, Գրականության մասին, 1948, էջ 62):

² «Бакинский рабочий», 1908, № 7—8 (տես Սուրեն Աղնիկ պատրիարքան, հոգվածներ, 1949, էջ 9):

րոնի պատմության մեջ հայտնի է այն բուռն բախումով, որ առաջացել է ներկայացման ժամանակ թատերասրահում, հանդիսատես հասարակության դեմոկրատական հատվածի և ուսակցուն տրամադրված բուրժուական ինտելիգենցիայի միջև¹:

Այս պատմական իրադարձությանը ներկա է եղել հայ ալրոգրեսիվ ինտելիգենցիայի դեմքերից մեկը, որը Գորկու դրամատուրգիայի առաջին պրոպագանդիստներից է մեր իրականության մեջ: Նա «Մշակի» էջերում մի հոգված է գրել, և ստորագրությամբ²: Հողվածը վերնագրված էր՝ «Ենչու» են վրդովլում»: «Մի համարձակ, հանդուսն մերկացնող ներկայումս վրդովլել է Պետերբուրգի հասարակությանը, — զրում է հոգվածի հեղինակը: — Դա Մաքսիմ Գորկին է, այն ինքնուրուցն, ուժեղ տաղանդը, որ վերջին տարիներում այնքան խուսցնել է տվել իր մասին»: Հարցն այն չէ, թե նա որշափ է կարողացել այն ժամանակ բարձրանալ մինչև Գորկու պիեսի գաղափարական իմաստը: Ավելի էականն այն է, որ նա, նախ ոգնորվել է զրոյի նոր երկով, իսկ այսպիսիների թիվն այն ժամանակ ընդհանրապես շատ չէր, և հետո այն, որ նա ճիշտ է ըմբռնել, թե այդ պիեսն ուղղված է բուրժուական ինտելիգենցիայի դեմ, և բաժանելով երկի տեսակետը, հրապարակով

¹ Б. В. Михайловский, Драматургия М. Горького эпохи первой русской революции, 1951, стр. 14.

² Մինչ հիմա պարզված չէ, թե ո՞վ է այս հետաքրքիր հոգվածի հեղինակը: Մեզ թիվում է, որ այս հոգվածը գրել է Սաևիան Լիսիցյանը: Նախ նա Գորկու դրամատուրգիայի առաջին գնահատողներից է եղել հայ իրականության մեջ և այս հոգվածը մոտ է նրա այն ժամանակական զաղափարական գիրքագրում: Լինելով Մոսկվայում և Պետերբուրգում, թատերասներ լիսիցյանը բաց չի թողել ոչ մի նոր ներկայացում, անձամբ ծանոթ էր Գորկու հետ և հետն էլ լուսանկարվել է: Վերջապես, հայտնի է, որ նա աշխատակցել է «Մշակին», հանդես դալով երբեմն իր ազգանվամբ, երբեմն էլ՝ տարրեր ստորագրություններով: Այս անդամ, ըստ երևույթին, նպատակահարմար է զտել հոգվածն հրապարակել, զնելով տակը միայն իր ազգանվան սկզբնատառը՝ և:

իր վրդովմունքն ու զայրուցին է հայտնել ներկայացման ընթացքը խանգարող, Գորկուն սուզոցներով դիմավորող բուժուական ինտելիգենցիայի գեմ:

«Դա մի ամբողջ մեղադրական ճառ է ոռու ինտելիգենցիայի գեմ,— զրում է նա, — Գորկին իրեն հատուկ ուժեղ լեզվով և խիստ գուշներով ցուց է տալիս այդ դասակարդի ամբողջ մտավոր և բարյական ոչնչությունը: Հասարակության ճրագները խոսում են զանազան նյութերի վրա, նրանց մեջ կան և՛ նյութամոլ փորապաշտներ, և՛ զվարճությունների երկրպագուներ, և՛ գաղափարական հարցերով դրազվողներ: Կանայք ու տղամարդիկ միասին են: Եվ խոսում են, վիճում են, գործում են, բայց ոչինչ չէ դուրս գալիս: Անկարողություն է ամենքի անունը: Նրանք, ինչպես ասում է գործող անձերից մեկը, — ծառան, — զրի երեսին երեացող պղպջակներ են, որոնք կորչում են, ապա էլի երեսում:

Կորչում և երեսում են առանց մի լուսավոր հետք թողնելու, առանց կարողանալու կյանքի մեջ շավիղներ գծելու, անպետք և անօգուտ: Բեմի վրա այդ անկման տեսարանը, այդ ոչնչությունը, իհարկե, տվելի ազգու, ցնցող տպավորություն պիտի թողներ: Հասարակության մեջ եղան վրդովվողներ ել: Եվ երբ երրորդ գործողությունից հետո հեղինակին քիմ կանչեցին, ծափահարությունների հետ բարձրացան և սաստիկ սուլոցներ: Բայց անվեհեր մերկացնողը կանգնած էր այդ վրդովվածների առաջ, հպարտ ու անվախ հայցքով շափում էր դահլիճը, կարծես ուղում էր իմանալ թե ովքեր են անբավականները:

Պե՞տք է ասել, թե ովքեր են դրանք: — Նույն ամառանոցավորները, նույն խոսող, դատարկ, գես ու գեն վազող, բայց վերջ ի վերջո անկարող ու անպետք ինտելիգենտները: Ինչպես չվրդովվեն: Երեկվա «բռոյակը», իր տաղանդի շնորհիվ եկել, բարձրացել է անշափ և արհամարհանք, ատելություն է նետում այդ դասակարգի երեսին, որ դիպլոմներով է զարդարված, որ հասարակության աղն է համարվում և ամբողջ

ժամանակ համոզված է, որ ծառայում է կուլտուրային ու լուսավոր, երջանիկ ապագա պիտի պատրաստե իր գործունեությամբ: Նա այդպիս մտածում, այդպիս է իրեն հոչակում, — այդ դասակարգը: Եվ նրա երեսովն են տալիս, թե նա ոչնչություն է իր մանրությամբ — իր բարոյական անզորությամբ, թե նրան վիճակված է միայն մի խեղճ, ցուրտ գետնոքարշ պուլիթյուն տանիկ այնքան կարծրություններով լի կյանքի մեջ: Ահա ինչու են վրգովվասմ: Ծշմարտությունը ծակեց, հայելին շափաղանց անողորմ էր իր պարզությամբ: Ժողովրդի մարդը, նա, որ դժբախտության, հանցանքների անդունդներն է նկարագրել և դուել է այնտեղ մարդկային հոգու հուժկություններ, այժմ՝ իր վրեժն է հանում այն դաստիարակից, որ խոսում է ու երեակայում, բայց չի կարողանում ոչինչ անել՝ այդ ժղովուրդը երջանկության հանապարհով առաջնորդելու համար:

Վրդովվում հն: Բայց խոսքը արտասանված է: Եվ այն շնչելու համար քիչ, շատ քիչ է վրդովմունքը»¹:

Գորկու զրամատուրդիայի ազգեցության այսպիսի պարզ և որոշակի դիրքուժորման այլ ժամաներ էլ կան: Սակայն եղել են և տրամադօրին ճիշտ հակառակ տրամադրություն և հայեցակետ արտահայտող ելույթներ:

Նախ, ասենք, որ գմվար է Գորկու մասին, հատկապես նրա դեմ արտահայտված որևէ պնդում մատնանշել հայեցական մամուլում, որ շինի Ռուսաստանում արդեն ասված որևէ մտքի կրկնությունը: Եվ դա հասկանալի է: ոչ թե նրա համար, որ հայ հակագործիականները գրական թշնամանքի մեջ ինքնուրուցնություն չունեին, այլ, որովհետեւ հայացքի, տեսակետի սոցիալական արժանարժությունը միատեսակ էին, եթե շատենք նույնը, թեև այդ էլ ճիշտ կլինի, ապա շատ իրար նման: Մի խոսքով, այն, ինչ տեղի էր ունենում ոռուսական իրականության մեջ, մոտավոր նույնությամբ կրկնվում էր և մեղանում:

Ահա մի օրինակ:

1 «Մշակ», 1904, № 268:

ինտելիգենցիայի թեման, ինտելիգենցիայի և ժողովրդի փոխարարերության պրոբլեմը, նրանց միջև եղած անշրջետը Գորկուն շատ է զբաղեցրել: Նրա զբեթե բոլոր պիեսներում այդ հարցը շոշափված է, սակայն նա երեք պիես հատկապես ինտելիգենցիայի պրոբլեմին է նվիրել: Դրանցից է նաև «Բարբարոսներ» պիեսը: Այս և մյուս պիեսների («Ամսանոցավորներ», «Արևի զավակներ») կապակցությամբ ուստական բուրժուական քննադատությունը հարձակվեց Գորկու վրա՝ մեղադրելով նրան, որ նա հանդես է եկել ինտելիգենցիայի բացասամամբ, որ նա վարկաբեկում է նրանց, ովքեր հասարակության սերուցքն են համարվում: Ծիշո նույն այս մտքերին ենք հանդիպում «Բարբարոսների» ուստական բեմադրության առիթով դրված մի հոդվածում, որ լուս է տեսել 1907-ին ազգայնական տրամադրություններով հագեցած հայկական «Ժամանակ» լրագրում: «Նա ժխտում է ինտելիգենցիային», — գրված է հոդվածում: «Բայ նրա (այսինքն՝ Գորկու Ռ. Զ.) տրամադրության՝ ինտելիգենցիան մի կատարյալ պատռւհաս է», — կարդում ենք նույն հոդվածում¹:

Այսպիսի բարբարոսական մտքեր վերադրելով Գորկուն, «Ժամանակի» հոդվածագիրը հանգում է այն անհիթեթ եզրակացության, թե իրը զբամատուրով կանդնած է ազգային սահմանափակության դիրքերի վրա, որ նա դեմ է քաղաքակըրթությանը, որ իրը այն, նրա կարծիքով, «անբարոյականացնում է նահապետական կյանքը» և այլն:

«Ժամանակ» և նրա շուրջը համախմբված գրողներն ու գրականագետները, որ հավանաբար այն կեղծ տպավորության տակ էին, թե իրենք էլ հայ հասարակության սերուցքն են, չեն կարող, մեղմ ասած, հաշտվել Գորկու հետ, որն ամբողջ ուսւ զբականության մեջ առաջինը համարձակորեն պատկերեց ինտելիգենցիայի մեծ մասի կախումը բուրժուազիայից: Ցուց տալով, որ կյանքի սոցիալական վերափոխման

¹ «Ժամանակ», 1907, № 7:

մեջ ինտելիգենցիան չի կարող ինքնուրուցն և անկախ ուժը լինել, Գորկին, այդպիսով, առաջնը պարզ և որոշակի ասաց, թե ինտելիգենցիան պատմության դվաավոր հերոսը չէ և ոչ էլ նրա վճռող ուժը¹:

Ինտելիգենցիայի պրոբլեմի այս լուծումը դրամատուրգիայում, միանգամայն համապատասխան էր ոչ միայն հասարակական ուժերի դարձացման պրոցեսին, որ տեղի էր ունենում դարձվերջին և դարասկզբին, այլև այն տեսականընդհանրացմանը, որին մարքսիզմն հասել էր Ռուսաստանում: Իր մի հոգվածում Լենինը գրում էր. «Կապիտալիզմն ավելի ու ավելի է խլում ինտելիգենտից նրա ինքնուրուցն դիրքը, վերածում է նրան կախյալ վարձկանի»²: Լենինյան այս ընդհանրացումը, որ նախորդել է Գորկու պիեսներին, անկանկած, դեկավարող նշանակություն է ունեցել դրամատուրգի համար:

«Ժամանակը» այս հասկանում էր, թե չէ, դժվար է ասել, և ավել գեղքում դա կարեռ էլ չէ, բայց որ այդպիսի հարցադրումը հակառակ էր նրա գաղափարախոսությանը՝ միանգամայն պարզ է: Զկամենալով Գորկու պիեսը ընթերցողներին ներկայացնել այնպես, ինչպես որ նա իսկապես կա՝ «Ժամանակի» համար շահավետ էր դրամատուրգին հանդես բերել որպես ամբողջ ինտելիգենցիային բացասող ու վարկարեկող, որպես կյանքի հետամնաց ձեւերի պաշտպան, և, այդպիսով, նրա դեմ հանել ինտելիգենցիայի որքան հնարավոր է լայն շրջանները: Եվ այդ այն ժամանակ, երբ Գորկին դրամատուրգիայում, ընդհանրապես իր ամբողջ ստեղծագործության մեջ, մերկացնելով բուրժուական ինտելիգենցիայի հասարակական բնույթը, մեծ սիրով ու ջերմությամբ գծել է գեմոկրատական ինտելիգենցիայի այն ներկայացուցիչների կերպարը, որոնք կապված էին ժողովրդի հետ և չեին պատկերացնում իրենց

¹ Б. В. Михайловский, Драматургия М. Горького эпохи первой русской революции, 1951, стр. 106.

Վ. Բ. Լենին, երկեր, հ. 4, 1948, էջ 251:

Գլյանքը՝ բանվոր դասակարգի մղած պայքարից դուրս կտո՞ւ
առնկախ:

«Ժամանակի» հոդվածադադիրը Օստրովսկու և Սովուլո-Կո-
բիլինի դեմ զրողների «միամտությունը» շուներ: Այլ էին ժա-
մանակները: Եվ նա հանդես է եկել Գորկուն Գորկուց պաշտ-
պաննելու անվան տակ: Հոդվածադիրն ասում է, թե Գորկին
պատկերացման իր ուրուցն աշխարհն ունի և հենց որ դրանից
դուրս է գալիս, փորձում է ընդհանրացնել մի այլ աշխարհ,
ասենք՝ ինտելիգենցիայի կյանքը, անմիջապես «կորցնում է
իր հմայքը»:

Բուրժուական քննադատության փորձիած հնարներից է
այդ, որ հետապնդում է առաջ քաշված հարցի անկողմնապահ,
օբյեկտիվ քննության պատրանք առաջացնելու նպատակը:

2

«Քաղքենիները» Գորկու զրամատուրդիայի առաջնեկն է:
Բեմադրության առաջին փորձը, ինչպես հայտնի է, Մոսկվայի
Գեղարվեստական թատրոնն է կատարել: Դա 1902-ին էր:
Հաղիկ մի տարի անց, 1903-ին, հայկական թատերական
շրջանները միտք հղացան բեմ հանել Գորկու այդ պիեսը:
Առաջին նախաճեռողները նոր-նախիջևանում գործող դե-
րասանները եղան: Նրանք թարգմանել էին «Քաղքենիները»
նոր-նախիջևանի բարբառով և նույնիսկ սկսել ներկայացման
պատրաստությունը: Մամուլում հազորդում է տպագրվել այդ
մասին 1. ներկայացումը եղել է, թե ոչ՝ մենք ոչ մի տեղեկու-
թյուն չունենք: Համենայն դեպք, մինչև այժմ կատարված
ալրարարությունները դրական արդյունք չեն տվել: Ամենայն հավա-
նականությամբ, ներկայացումը չի կայացել: Շատ հավանա-
կան է, որ գրաքննությունն արգելվի տակ է դրել արդեն
պատրաստ ներկայացումը:

1 «Մշակ», 1903, № 32:

Ի՞նչ հիմք կա այսպիսի հնիմադրության համար:

Բավական է մի-երկու փաստ հիշել Գորկու առաջին պիեսի բնմական պատմությունից, որ վերոհիշյալ հնիմադրությունը ունեալ հիմքերով ամրապնդվի:

«Քաղքենիներ» պիեսը Գեղարվեստական թատրոնը առաջին անգամ բեմադրել է, ինչպես հայտնի է, Պետերովուգովամ, գաստրոլների ժամանակ: Թատրոնի այդ նոր բեմադրությունը խիստ անհանգստություն էր առաջացրել, և շրավականանաւով պիեսում զրաբննության ավերիչ կրծատուամներով, ամբողջ «կառավարող» Պետերովուգը թատրոն էր եկել ներկա գտնվելու դլխավոր փորձին: «Թատրոնում և նրա շուրջը, — պատճում է Սոտանիսլավսկին, — գտնվում էր ոստիկանության ուժեղացված մի ջոկատ. թատրոնի առաջ, հրապարակում հեծյալ ժանգարմներ էին անցուդարձ անում: Կարելի էր կարծել, որ պատրաստվում էինք ոչ թե դլխավոր փորձի, այլ դլխավոր հակատամարտի»¹:

Այդ ամենը, սակայն, չկարողացան արգելք լինել ոչ Գեղարվեստական թատրոնի ձեռք բերած հաջողությանը և ոչ էլ Գորկու պիեսի տարածմանը, որի առաջն առնելու համար զրաբննությունը նոր խստություններ էր հանդիս բերել — այն է՝ յուրաքանչյուր բեմադրության համար անհրաժեշտ էր նոր թույլտվություն ստանալ, և, բացի այդ, պիեսն արգելված էր բեմադրել ժողովրդական թատրոններում կամ խաղալ Ռուսաստանում ապրող այլ ժողովրդների լեզուներով²:

Կառավարական շրջանների երկյուղն անհիմն չէր: Օրինակ՝ 1903-ին, Բելոստոկում, «Քաղքենիների» բեմադրության ժամանակ, թատերասրահում ցուց է տեղի ունեցել, լողունդներ են արձակվել — «կորչի ինքնակալությունը, կամայականությունը, կեցցե աղատությունը» և այլն: Ոստիկանությունը

¹ К. С. Станиславский, Моя жизнь в искусстве. 1936, стр. 368.

² М. Горький, Собрание сочинений в тридцати томах, т. 6, 1951, стр. 547,

Վյանքը՝ բանվոր դասակարգի մղած պայքարից դուրս կամ անկախ:

«Ժամանակի» հոդվածագիրը Օստրովսկու և Սուխով-Կոբիլինի դեմ զրողների «միամտությունը» շուներ: Այլ էին ժամանակները: Եվ նա հանդես է եկել Գորկուն Գորկուց պաշտպանելու անվան տակ: Հոդվածագիրն ասում է, թե Գորկին պատկերացման իր ուրուզն աշխարհն ունի և հենց որ զրանից դուրս է գալիս, փորձում է ընդհանրացնել մի այլ աշխարհ, ասենք՝ ինտելիգենցիայի կյանքը, անմիջապես «կորցնում է իր հմայքը»:

Բովածուական քննադատության փորձված հնարներից է այդ, որ հետապնդում է առաջ քաշված հարցի անկողմնապահ, օբյեկտիվ քննության պատրանք առաջացնելու նպատակը:

2

«Քաղքենիները» Գորկու գրամատուրգիայի առաջնեկն է: Բեմադրության առաջին փորձը, ինչպես հայտնի է, Մոսկվայի Գեղարվեստական թատրոնն է կատարել: Դա 1902-ին էր: Հաղիվ մի տարի անց, 1903-ին, հայլական թատերական շրջանները միտք հղացան բեմ հանել Գորկու այդ պիեսը: Առաջին նախաձեռնողները նոր-նախիջևանում գործող դերասանները եղան: Նրանք թարգմանել էին «Քաղքենիները» նոր-նախիջևանի բարբառով և նույնիսկ սկսել ներկայացման պատրաստությունը: Մամուլում հաղորդում է տպագրվել այդ մասին¹. ներկայացումը եղել է, թե ոչ՝ մենք ոչ մի տեղեկություն չունենք: Համենայն դեպք, մինչև այժմ կատարված պրատումները դրական արդյունք չեն տվել: Ամենայն հավանականությամբ, ներկայացումը չի կայացել: Շատ հավանական է, որ գրաքննությունն արդելքի տակ է դրել արդեն պատրաստ ներկայացումը:

¹ «Մշակ», 1903, № 32:

Ի՞նչ հիմք կա այսպիսի հնիմադրության համար:

Բավական է մի-երկու փաստ հիշել Գորկու առաջին պիեսի բեմական պատմությունից, որ վերոհիշյալ հնիմադրությունը ռեալ հիմքերով ամրապնդվի:

«Քաղենիներ» պիեսը Գեղարվեստական թատրոնը առաջին անգամ բեմադրել է, ինչպես հայտնի է, Պետերբուրգում, գաստրոլների ժամանակ: Թատրոնի այդ նոր բեմադրությունը խիստ անհանգստություն էր առաջացրել, և շրավականանաւով պիեսում զրաքննության ավերիչ կրծատումներով, ամբողջ «կառավարող» Պետերբուրգը թատրոն էր եկել ներկա գոտինելու գլխավոր փորձին: «Թատրոնում և նրա շուրջը,— պատճում է Ստանիսլավսկին,— գտնվում էր ոստիկանության ուժեղացված մի ջոկատ. թատրոնի առաջ, հրապարակում հեծյալծանդարձներ էին անցուդարձ անում: Կարելի էր կարծել, որ սպատրաստվում էինք ոչ թե զլիավոր փորձի, այլ զլիավոր ձականամարտի»¹:

Այդ ամենը, սակայն, չկարողացան արգելք լինել ոչ Գեղարվեստական թատրոնի ձեռք բերած հաջողությանը և ոչ էլ Գորկու պիեսի տարածմանը, որի առաջն առնելու համար զրաքննությունը նոր խստություններ էր հանդիս բերել — այն է՝ յուրաքանչյուր բեմադրության համար անհրաժեշտ էր նոր թույլավություն ստանալ, և, բացի այդ, պիեսն արգելված էր բեմադրել ժողովրդական թատրոններում կամ խաղալ Ռուսաստանում ապրող այլ ժողովրդական երգությունների լեզուներով²:

Կառավարական շրջանների երկյուղն անհիմն չէր: Օրինակ՝ 1903-ին, Բելոստոկում, «Քաղենիների» բեմադրության ժամանակ, թատերասրահում ցուց է տեղի ունեցել, լողունդներ են արձակվել — «կորչի ինքնակալությունը, կամայականությունը, կեցցե աղատությունը» և այլն: Ոստիկանությունը

¹ К. С. Станиславский, Моя жизнь в искусстве. 1936, стр. 368.

² М. Горький, Собрание сочинений в тридцати томах, т. 6, 1951, стр. 547,

Հասունիվել է իրար, ներկայացումը չի ավարտվել և թատրոնում ակսված քաղաքական ցուցը շարունակվել է փողոցում, տեսլով շորս ժամ, մինչև որ զորամասեր են կանչվել¹:

Մի այլ օրինակ. 1905-ին, Կիեվում, «Ամառանոցավորների» ներկայացման ժամանակ թատերասրահում պրոլամացիաներ են տարածվել հեղինակի նկարի հետ միասին, հանդիսականները բացագանձել են՝ «կեցցե՛ ազատությունը», «կորչի՛ ինքնակալությունը» և այլն²: Այս դեպքից անմիջապես հետո «Ամառանոցավորներ» պիեսի բեմադրությունն արդելվեց³:

Այս բոլորից հետո մեզ շատ հավանական է թվում այն ենթադրությունը, թե նոր-նախիջևանցիների պատրաստած «Քաղքենիների» բեմադրությունը ձախողվել է՝ ներկայացման թույլտվություն չստանալու պատճառով:

Այսպիսով, ուրեմն, Գորկու դրամատուրգիան հայ իրականության մեջ բեմ բարձրացնելու առաջին իսկ քայլը հանդիպել է դիմադրության ու խափանվել:

«Քաղքենիներ» ներկայացման մի փորձ էլ արվել է հետագայում: Մամուլում հրապարակված լուրերից երեսում է, որ Նոր-Նախիջևանում դործող հայոց դրամատիկական ընկերությունը 1906—1907 թատերաշրջանի ուսպերտուարում մտցրել է «Քաղքենիները»⁴:

Խաղացվել է, թե ոչ՝ դարձյալ շգիտենք:

Սակայն Գորկուն բեմադրելու շանքերը ի դերև շանցան, և 1908-ի հոկտեմբերի 27-ին, Թիֆլիսի Հայոց Արտիստական Ընկերության թատերախոսմբը ներկայացրեց «Հատակում» պիեսը:

Նախքան բեմադրությանն անցնելը՝ տեսնենք, թե ինչպես է մամուլը վերաբերվել Գորկու այս պիեսին:

¹ „Искра“, 1903, № 5.

² „Революционный путь М. Горького“, 1933, стр. 100—101.

³ Նույն տեղում:

⁴ «Նոր խոսք», 1907 (տես Պ. Հովհաննի «Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան», էջ 181):

Առաջին հարցը, որ առաջ է քաշվել մեր մամուկում, այն է, թե պե՞տք է արդյոք հայ թատրոնը «Հատակումը» բեմադրի, թե ոչ: Երկու հակառակ տեսակետ է հայտնվել. օրինակ՝ «Մշակը», «Սուրհանդակը» Գորկու պիեսի բեմադրության ժամանքը ողջունել են, իսկ ասենք, «Գործը» կամ նրանից առաջ «Երկիրը» գեմ են եղել: Այս վերջին լրագիրը գրում է. «Թվում է, որ այս պիեսի երգն արդեն երգված պիտի համարել»¹: «Գործը» կամենալով բացասել Գորկու պիեսի արժեքը՝ ասում է. «այս դրամ կոչեցյալը», իսկ այնուհետև պարզ գրում է, թե դա «գեղարվեստական արժեքից միանդամայն զուրկ պիես է. ամբողջությունից զուրկ մի դործ», «առ առավելն սա մի շաբա պատկերներ են,— գրում է հոդվածագիրը,— իրարուց անկախ, թրով կացրած, որոնց բոլորին բացակայում է հիմնականը — զեկավարող թելը»²:

Ահա այս հենքի վրա էլ, ըստ էության, հյուսվել է Գորկու դրամատուրգի անբեմականության առասպելը:

Այդ հանդամանքը չէին կարող նկատի չառնել և չօգտագործել Գորկու գաղափարական հակառակորդները: Եվ եթե «Գործը» Գորկու պիեսի գնահատությունը սկսում է նրա գեղարվեստական էության բացասումից, ապա դրանով նաև նպատակ ունի երկը բոլոր կողմերից վարկաբեկել, ասել, որ տվյալ ստեղծագործությունը ամեն տեսակետից էլ անարժեք է: Դա կազմակերպված դրական մտայնության արտահայտություն էր, շատ որոշակի դիրք, որ «Գործը» բռնել էր դրականության և թատրոնի նկատմամբ ընդհանրապես:

Համովելու համար բավական է թերթել «Գործի» 1908-ի այն համարները, որոնք նախորդել ու հաջորդել են «Հատակումին» նվիրված ոեցենդիային:

Վերցնենք թեկուղ մի փաստ:

«Գործը» մի ընդարձակ հոդված է տպագրել Շիրվանդա-

¹ «Երկիր», 1906, № 51:

² «Գործ», 1908, № 41:

դեիք «Ավերակների վրա» պիեսի մասին, որն այն ժամանակ նոր էր քեմազրվել: Թերթը գժղոհ է, խիստ անբավական դրամատուրգի նոր պիեսից: Հարցն այստեղ Շիրվանզադեի նոր պիեսի գնահատությունը չէ, այլ այն էսթետիկական ելակետը, որ այդ գնահատության համար շափանիշ է ծառայել, նամանավանդ որ քննադրատը այս պիեսից հանած իր հիմնական ելլրակացությունը տարածում է Շիրվանզադեի դրամատուրգիայի վրա ընդհանրապես:

Ոչ այնքան պարզ, բայց այն միտքն է հայտնված, թե Շիրվանզադեի դրամատուրգիան արդեն անցյալին է պատկանում, որովհետև Հիմա այլևս այդպես չի կարելի գրել, որ դրամատուրգիայի զարգացումը մի այնպիսի աստիճանի է հասել, երբ վաղեմի գրելակերպը չի կարող գոհացնել և այլուրնչը է ուզում ասել:

Շիրվանզադեին, «Գործի» կարծիքով, չունի ընդհանրացման կարողություն. «Նա տեսնում է մասնավորը, անհատականը, շոշափելին, կոնկրետը, բայց հավաքածուն այդ բոլորի, ընդհանուրը, վրիպում են նրա տեսագաշտից»¹:

Այս մտքի հետագա զարգացումից հետևում է, որ քննադրատը չի ընդունում այն դրամատուրգիան, որը կերպարների պատկերացումը հասցնում է ոեալական կոնկրետության, առարկայականության այնպիսի շափերի, երբ պարզ է դառնում, թե այս կամ այն գործող անձը ինչ սոցիալական միջավայրի ծնունդ է: Նա, ընդհակառակը, պահանջում է զրոյից, որ մարդուն պատկերացնի ընդհանրապես, հավիտենական կատեգորիայի տեսանկյունից: «Նա,— ասում է հոդվածագիրը՝ Շիրվանզադեի մասին,— ճանաչում է այս կամ այն մարդը, բայց մարդուն ընդհանրապես, մեր կարծածի համաձայն, նա լավ չի ճանաչում»²:

Գորկում ժխտող թերթը, այդպիսով, ինչպես ահանում ենք, ոեալիստական դրամատուրգիայից եկող տրագիսիաների:

¹ «Գործ», 1908, № 36:

² Նույն տեղում:

բացասումով, ըստ էության, առաջ է քաշում իդեալիստական էսթետիկայի զվարակոր սկզբունքներից մեկը՝ մարդու, նրա հոգեբանության պատկերումը՝ ժամանակից և տարածությունից անկախ:

Այս պնդումը անհիմն ենթադրություն չթվալու համար, ասենք, որ «Գործը» ողկորաված հետևում էր Լեոնիդ Անդրեևի զրամատուրդիային և շտապում էր ընթերցողներին իրազեկ դարձնել, թե նա ինչ նոր երկ է գրել կամ ինչ է մտագիր գրելուս¹: «Գործը» ընդարձակ հոդվածներ է նվիրել Պշիրշևկուն, մեծարել է նրան՝ որպես նորագույն դրամատուրդիայի փայլուն ներկայացուցչի: «Գործի» համար Պշիրշևկու դրամատուրգիան կատարելության տիյ տիպարն է, որին, նրա կարծիքով, պետք է ձգտի ժամանակակից զրամատուրդը: Օրինակ, թերթը խանդավառ տողեր է նվիրել նրա «Երջանկության համար» խորագրով դրամային և մի առանձին բավականությամբ մատնանշել մարդկային հոգեբանության երևությները, թե կուզ, ասենք՝ երջանկության հարցը, քննության է առել «համամարդկային» տեսանկյունից: Բացասելով և համ մղելով կյանքի երևությների սոցիալական ըմբռնումը, թերթը երկրորդում է դրամատուրգին, այն համոզումը հայտնելով, թե մարդու չի կարող իսկապես երջանիկ լինել, սրով հետև այն գիտակցությունը, թե մեկի երջանկությունը ձեռք է բերվում մի ուրիշի դժբախտությամբ՝ վերջ ի վերջո զրկում է ամենաերջանիկ մարդուն անդամ անդորրից, պատճառելով այնպիսի հոգեկան աւանդանքներ, որ, վերջ ի վերջո, նա էլ է դառնում դժբախտ²:

Կյանքի, զրականության ու արվեստի երևությների ապագասակարգային ըմբռնմամբ զեկավարվելով՝ «Գործը» հիացմունքով դրում է, թե Պշիրշևկին արեմին նայում է զուտ գեղարվեստական տեսակետից: մյուս բոլոր տեսակետները՝ ինչպես են կրթական, քարոյական և այլն, միանդամայն բացասում է»³:

1 «Գործ», 1903, № 27:

2 Նույն տեղում, № 42:

3 Նույն տեղում:

Իդեալիստական էսթետիկայի հիմունքների քարոզով հանդես եկող «Գործը» մի՞թե պարզ չէ, որ պետք է մերժեր Շիրվանգաղեի պիեսները, կամ կարո՞ղ էր այդ թերթն ընդունել Գորկու «Հատակումը»: Ի՞արկե, ոչ: Եվ դա միանգամայն պարզ է ու հասկանալի, որովհետև շատ որոշակի սոցիալական խնդիրներ էր առաջադրում Գորկու դրամատուրգիան, և իր էսթետիկական բնույթով էլ միանգամայն հակառակ էր «Գործի» կողմից այնպես զերծորեն պաշտպանված պշիրշեսկիների և անդեների դրամատուրգիային:

Սակայն դրանով պայքարը Գորկու սիեսի դեմ չափարավեց: Օրինակ, շատ տարիներ հետո, «Մշակը» նորից է անդամակոնում այդ հարցին և բացասով զիրք բռնում: Այսպես, թերթը գրում է. . . «Մենք գտնում ենք, որ այդպիսի գրվածքները, որոնք ոչ թե միայն ոչինչ ընդհանուր բան չունեն հայկանքի հետ, այլև զգվանք են հարուցում հանդիսատեսների մեջ այն սարսափելի կեղաուլ, որ բեմ է հանվում՝ պետք է երբեք չբեմադրվեն»¹:

Կարողացա՞ն արդյոք սկզբում «Գործը», հետո նաև «Մշակը» ազդել թատրոնի, ավելի ճիշտ՝ մեր այն արվեստագետների վրա, որտեղ անվան հետ էր կապված «Հատակում» պիեսի բեմադրությունը: Զկարողացան. ընդհակառակը, հետագա տարիները ցուց ավին, որ դերասանները Գորկու պաշտպանության հարցում հետևողական գտնվեցին, «Հատակումը» հաստատ պահեցին իրենց խաղացանկում, և հանդիսատես հասակության հետաքրքրությունն էլ դեպի այդ պիեսը՝ գնալով մեծացավ և ավելի չերժացավ:

3

Ինչպես է հասկացվել պիեսը:

«Հատակում» պիեսի մասին առաջինն արտահայտվել է «Մուրճը»: Նրա էջերում հանդես է եկել Ստեփան Լիսիցյանը,

¹ «Մշակ», 1917, № 261:

որը ներկա գտնվելով Գորկու պիեսի անդրանիկ ներկայացմանը Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում, մի թղթակցությամբ հասարակությանը ծանոթացնում է Գորկու նոր պիեսի, նրա թողած ահազին տպավորության հետ: «Այդ երկը — գրում է նա, — իսկական դրամա չէ սովորական իմաստով, այլ հզոր վրձինով նկարված զարմանալի տեսարաններ, որոնք առիթ են տալիս հեղինակին հասարակության մեջ որոշ հայացքներ արձարծելու»¹:

Այդ հայացքների քննությանն է նվիրված հայ պարբերական մամուլում լուս տեսած երկրորդ հոդվածը, որը մեր գրականության մեջ վերագրվում է Մտեփան Շահումյանին ։²

«Հատակումը», ինչպես հայտնի է, շատ է բեմադրվել նաև Եվոպայում: Գորկու պիեսն առանձնապես մեծ հաջողություն գտավ Բելինում: Եղալ մի այնպիսի շրջան, երբ թատրոնը մի առժամանակ ամեն օր ներկայացրել է «Հատակումը»: Ահա բեղինյան այդ ներկայացումներից մեկին ներկա է գտնվել Շահումյանը և գրել իր հոդվածը:

Շահումյանն ասում է, թե Գորկին դարձել է գերմանացի-ների ամենասիրելի հեղինակը, զրեթե օր չի լինում, որ «Հատակումը» չըկմադրվի, որ մի անգամ տեսնողը գնում է երկրորդ, երրորդ անգամ, «շնայած որ մինչև այժմ ավելի քան երկու հարյուր հիսուն անգամ ներկայացվել է, բայց և այնպես թատրոնը ամեն օր ծայրեիծայր լիքն է»³:

Այս արտակարգ հաջողության զվարապոր պատճառը Շահումյանը համարում է այն, որ պիեսը «կյանքի խորքից առնված պատկերներից» է կազմված: «Մարդասիրություն. ահա այն իշխող դաշտավարը, որով համակված է այդ երկը», —

¹ «Մուրճ», 1903, № 1:

² Հոդվածը լույս է տեսել Տ սոսորագրությամբ: Շահումյանի կյանքի և զործունեության այնպիսի զիտակ, ինչպիսին Գ. Հովհանն է, ասում է, որ այդ հոդվածը պատկանում է Շահումյանի զբչին (տես նրա «Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան», 1951, էջ 186):

³ «Մշակ», 1903, № 195:

ասում է նա: Գորկին, նրա կարծիքով, պատկերել է, թե ինչպես տնտեսական անողոքը պայմանների և ընկերության անհավասար օրենքների շնորհիվ մարդը կործանվում է»: Այսպիսով, ուրիմն, ըստ Շահումյանի, Գորկու պիեսի գլխավոր առարկան մարդու ողբերգությունն է՝ սեփականատիրական հասարակության մեջ:

Շահումյանն ասում է, որ հատակի մարդիկ օպոզիցիայի մեջ են տիրող օրինականության ու բարոյականության նկատմամբ: «Նրանք,— զրում է Շահումյանը,— ունակու են անում ամեն մի օրենք և ծաղրում ու ունահարում հասարակական կարգերը»: «Այսպիսիները,— ասում է Շահումյանը,— որոնք քաջություն ունեն հրապարակով ունակուի անհել լոկ բառերով միայն գոյություն ունեցող գաղափարները»¹ անշուշտ «օրինքի տշքում ոճապործներ են համարվում»²: Շահումյանը ցուց է տալիս, որ հասարակ մարդիկ ոչ միայն բացասող հոգիներ են, այլև աղաւա ու Զշմարիս կյանքով ապրելու բազմանքով տուղորված մարդիկ: «Բայց հենց այդ ընկած հասարակությունը, անտարբերների այդ խոմքը, իր այդ բոլոր դժբախտ պայմանների մեջ իր կոչումը չի մոռանում, և մենք տեսնում ենք որոշ բոպեներ, երբ նրանք հիասթափված իրենց ընկած վիճակից, դիտակցության ամենաբարձր աստիճանին են հասնում և խիստ խելացի, ճշգրիտ կերպով որոշում են մարդու էության և պարտականության սահմանները: «Նրանց մեջ, շարունակում է Շահումյանը, — բռնկում է վայրիկնական մի տեսչանք՝ քանդել իրենց կաշկանդով կապանքները, դուրս գալ այդ անդնդից և ձգտել ու աշխատել մի նոր կյանքով ապրելու»²:

Շահումյանը ցուց է տալիս, որ Գորկին չի իդեալականացրել իր հերոսներին, սակայն դա չի խանգարել, որ նա իր պիեսը հապեցնի մեծ սիրով դեպի մարդը: Գորկու պիեսը, Շահումյանի կարծիքով, մարդու փաստանությանն է նվիրված:

¹ «Մշակ», 1903, № 195:

² Նույն տեղում:

«Մա՞րդ. որքան քաղցր է հնչում այս խոսքը Գորկու տկան-ջին,— գրում է Շահումյանը,— որքան հպարտությամբ է ար-տասանում նա այդ բառը, և մի՞թե նրա շորս պատկերները այդ վսեմ արարածի գովիստի երգը չեն: Մա՞րդ. սա շատ մեծ բան է, այդ բառի մեջ է ամեն բանի սկիզբը և վախճանը. ամեն ինչ մարդու մեջ է և ամեն ինչ մարդու համար է. գոյու-թյուն ունի միայն մարդը. միացած ամեն ինչը միայն նրա ձեռքի ու մտքի արդյունքն են կազմում: Մա՞րդ — դա մի հրա-շալի բան է. մա՞րդ — հնչում է հպարտ. պետք է հարգել նրան և ոչ խղճալ ու ստորացնել նրան: Եվ դեռ երկար կհնչի Գորկու այդ երկը, քանի դեռ մարդը չի դիտակցում իր վւսեմ կոչումը»¹:

Իր ամբողջ հոգվածի մեջ Շահումյանն այն միտքն է զար-գացնում, որ հաստակի մարդիկ ոչ այլ ինչ են, բայց եթե օհան-ցավոր երկրի», «ոչ մարդավայել կյանքի», «տնտեսական անողոք պայմանների», «ընկերության անհավասար օրենք-ների», մի խոսքով՝ բուժության, կապիտալիստական հա-սարակության գոհերն են:

Այսպիսով, հայ հասարակական միտքը, հանձին իր ամենատաքաշավոր ներկայացուցչի, դեռևս 1903-ին կարողա-ցել է թափանցել Գորկու պիեսի սոցիալիստան էությունը, հաս-կանալ նրա գլխավոր, դեկավարող գաղափարը և դրանով հիմք դնել ոչ միայն «Հատակումի», այլ ընդհանրապես գորկիական ստեղծագործության մարքսիստական ըմբռնմանը:

Գրականության մեջ Գորկուն կշտամբել են այն սիրո հա-մար, որ նա հանդես է բերել դեպի իր պիեսի հերոսները: Բուրժուական քննադատությունը պիեսի հերոսներին հայտա-րարում է ժամանակակից հասարակության տականք, և զար-մանում, նույնիսկ մեղադրում դրամատուրգին, որ նրանց փա-ռաբանում է: Օրինակ՝ «Երկիր» թերթը գրում է, որ պիեսի հերոսները «անզգա, կոպիտ, եսական, հոգեպես տգեղ, անկամ

¹ «Մշակ», 1903, № 195:

և անսիրտ մարդուկներ են» և «Գորկին աշխատում է իդեալականացնել հասարակության թափթփուկներին»¹:

Այնքան ուժեղ է թերթի հակագործիական կիրքը, որ նա չի կարողանում կամ, պարզապես, չի կամենում ճիշտ ներկայացնել պիեսում պատկերված իրականությունը:

Կարելի՞ է անկամ անվանել Կեշշին, որ աշբի է ընկնում իր անխոնչ աշխատասիրությունը. մի՞թե անզդա է Հոգեպիտ այնքան մաքուր նատաշան, կամ նաստիան, որ ամբողջ գործողության ընթացքում ապրում է շքնաղ սիրո երազով. կարելի՞ է ասել, որ թուրքը կոպիտ մի մարդուկ է, երբ նա ազնիվ կյանքով ապրելու ամենահետևողական պաշտպանն է պիեսում: Իսկ ո՞վ է պիեսում կոպիտ, եսական, հոգեպիտ տգեղ — Պեպե՞լը, որ ծարավի է մի լավ կյանքի, թե Սա՞տինը, որ մարդու մասին այնպիսի սքանչացումով է խոսում:

Գորկու մեծությունն հենց այն է, որ նա, չնայած իր հերոսների այդ լավ գծերին, չի իդեալականացրել նրանց, ցուց է տվել այն կեղտը, որի մեջ ընկղմված են նրանք: Այդ, ինչպիս տեսանք, շատ լավ ըմբռնել էր Շահումյանը: Նույնը կարելի է ասել նաև Հակոբ Հակոբյանի մասին, որը «Ճատակումի» հայկական բեմադրության առթիվ գրած ոեցինդիայում ասում է, թե նրանք թեև այժմ կյանքի հատակի տիզմն են ընկղմված, բայց գարձյալ ամեն մեկը նրանցից հուզվելու, ոգևորվելու և վերածնվելու ձգումներ է ցուց տալիս»²:

Գորկին չեր կարող նրանց իդեալականացնել ոչ միայն նրա համար, որ կյանքն այդպիս չեր և դրանով կհեռանար իրականությունից, այլև նրա համար, որ դա միանգամայն կհակասեր իր գլխաւոր նպատակին:

Գորկին չի իդեալականացրել հատակի մարդկանց, բայց նա ցուց է տվել, թե այդ մարդիկ, որոնցից մեկը գող է, մյուսը հարբեցող, երրորդը պոռնիկ — ինչպիսի հոգեկան գեղեցիկ գծերի տեր են, հոգեկան գեղեցիկություն՝ որ թեև կա, բայց մե-

1 «Երկիր», 1906, № 51:

2 «Մշակ», 1909, № 281:

բացահայտվել, ընթացք չի ստոցել և արտահայտվում է լոկ
որպես հնարավորություն, որովհետեւ կյանքը ձնշել, կաշկան-
դել և աղավաղել է նրանց:

Գորկու նպատակն էր հասարակության ուշադրությունը
հրավիրել այն բանի վրա, թե սոցիալական անհավասարու-
թյունը մինչև ուր կարող է հասցնել մարդուն:

Հահումյանն իրավացի էր, երբ իր վերոհիշյալ հոդվա-
ծում ասում էր, թե կյանքն է նրանց այդպես դարձրել: Եվ Շա-
հումյանի այդ մտքի ազգեցությամբ չէ՝ արդյոք, որ «Հատա-
կումի» առաջին բեմադրության ռեցենզենալը «Մշակում», Առն
Դանիելյանը, ասում է, թե թշվառների այդ բանակը «հասա-
րակական կարգերի ու շահագործությունների զոհն է»¹:

Նույնը, բայց ավելի գիտուկ, նկատել է նաև Հակոբ Շա-
կորյանը: «Ըստ Մաքսիմ Գորկիի, — գրում է նա, — ինքը մար-
դը չէ պատճառը, որ ընկնում է կյանքի տիղմի մեջ, այլ միջա-
վայրի սոցիալական պայմանները»²:

Այսպիսով, ուրեմն, մարքսիստական միտքը և պրոգրեսիվ
ինտելիգենցիան գրականության մեջ, դեմոկրատական ուժերը
թատրոնում, պաշտպանում էին Գորկու պիեսը, պրոպագան-
դում այն:

4

«Հատակում» պիեսի առաջին բեմադրությունը մի շատ
կարեւը, խոշոր, աշքի ընկնող երեսվթ է հայ թատրոնի պատ-
մության մեջ: Օլգա Գուլազյանը, իր անտիպ հուշերում, որ
նվիրված է Գորկու պիեսի առաջին ներկայացման որոշ ման-
րամասնություններին, «Հատակումի» բեմադրությունը հայ
թատրոնում համարում է խիզախում: Եվ, իսկապես, դա մի
խիզախ քայլ էր, եթե նկատի ունենանք ժամանակը, այն ամ-

¹ «Մշակ», 1908, № 239:

² Նույն տեղում, 1909, № 281:

բողջ դժվարությունը, որ կապված էր այդ պիեսի բեմական մարմնավորման հետ:

Մի այնպիսի դրամատուրգ, ինչպիսին Գորկին է, որի շուրջը ոռւսական իրականության մեջ, ամբողջ Եվրոպայում, բուռն հետաքրքրություն էր առաջացել, վերջապես մուտք գործեց հայ թատրոն: Այսպիսով, հայ թատրոնը, որտեղ բավական ուժեղ էին զոգովրան և օստրովսկիական տրադիցիաները՝ Գորկու դրամատուրգիայի բեմական մարմնավորման առաջին փորձն արեց: Եվ այն հաջողությունը, որ ձեռք բերեց հայ թատրոնն իր այս համարձակ քայլով, վկայում էր բեմական արմեստի զարգացման մի այնպիսի աստիճան, որը նրա հետագա առաջխաղացման համար չայն հնարավորություններ էր ընձեռում:

«Հատակում» պիեսի բեմադրությունը կապված է գլխավորապես այն դերասանների հետ, որոնք լավ, կարելի է ասել նույնիսկ շատ լավ գիտեին Ռուսաստանը, ոռւսական իրականությունը, ոռւս մարդուն, նրա հոգեբանությունը, ուրուցն նիստ ու կացը: Նրանց մեջ կային նույնիսկ այնպիսիները, ինչպես, օրինակ, Օլգա Մայսուրյանը (Նաստիա), որոնց մայրենի լեզուն ոռւսերենն էր և հայերեն սովորել էին միայն հայ բեմ բարձրանալուց հետո: Բեմադրության մեջ զբաղված դերասանների մեծ մասը՝ Արշակ Մամիկոնյան (բարոն), Ասթենիկ Աղամյան (Նատաշա), Օլի Սելյմյան (Սատին), Գրիգոր Ավետյան (Լուկա)՝ շատ լավ գիտեր ոռւսական դրականությունը, ոռւսական թատրոնը և նրա առաջավոր և լավագույն տրադիցիաների՝ հայրենասիրության, հումանիզմի, ժողովրդայնության ոգով էր դաստիարակված:

Բեմադրության մեջ զբաղված դերասանների մի մասն էլ, այդ էլ շատ բնորոշ է, ժողովրդական դեմոկրատական թատրոնի տրադիցիաներով դաստիարակված դերասաններ էին, ինչպես Գեղեռն Միքայելյանը (Բուբնով), Օլգա Գուլազյանը (Ալյոշկա) և ուրիշներ:

Թա հայ թատրոնի առաջավոր դեմքերի գործունեության

պաղափարական, գեղարվեստական շրջանակներն ընդլայնում էր, մղում դեպի մի նոր հուն, որը, Ստանիսլավսկու խոսքով ասած՝ հասարակական-քաղաքական ուղղությունն էր թատրոնում:

Այս գործոնները եղել են և առաջ, մինչև Գորկու պիեսի բեմադրությունը, 90-ական թվականներին, նույնիսկ ավելի վաղ, իրենց նշանակությունը պահպանել են նաև հետազայում, գրեթե միշտ, որովհետև պայքարը ուստական դրամատուրգի համար երբեք դադար չի առել, կամ մինչև որ այն որոշակի ավարտակետի չի հասել: Նորությունն այժմ այն էր, որ Գորկու դրամատուրգի բեմական մարմնավորման տրադիցիան կապվում էր գերասանական այն սերնդի հետ, որի համար ամենամեծ և անտարեկելի հեղինակությունը թատրական աշխարհում Մոսկվայի Գեղարվեստական թատրոնն էր:

Այդ սերնդի ամենաաշքի ընկնող ներկայացուցիչը դերասան, ապա և ռեժիսոր Օվի Սևումյանն էր:

Ճիշտ է, հետազայում, հատկապես 10-ական թվականներին, նրանից հետո, երբ հայ գերասանական խոսմքը գաստրոլ-ների գնաց Մոսկվա և Պետերբուրգ, Գեղարվեստական թատրոնով շատ հայ գերասաններ են հիացել: Օղա Գուլազյանն իր հիշողություններում պատմում է, թե ինչպես իրենք, Մոսկվայում եղած օրերին, եթե ներկայացման մեջ զբաղված չէին՝ ապա անպայման Գեղարվեստական թատրոնումն էին: «Մեծ վարպետ կաշալովի և ամբողջ խմբի ռեալիստական խաղի ձեր, — զրում է նա, — այնպես էր հրապուրում մեզ, հայ գերասաններիս, որ մի ինչ-որ զգացմունք, նրանց նման խաղալու բարի զգացմունք համակել էր մեզ բոլորիս»¹:

Այդ արդեն 1912-ին էր, մինչդեռ Սևումյանը դրանից առաջ և զրեթե մենակ է սկսել Գեղարվեստական թատրոնի պրոպա-դանող՝ հայ իրականության մեջ, ոչ միայն խոսքով, ոչ միայն մամուկով հրապարակված հոդվածներով, այլև հայ թատրո-

¹ Օլդա Գուլազյան, Հուշեր, 1945, էջ 215:

նում՝ Ստանիսլավսկու գաղափարները կենսագործելու շատ որոշակի ձգումով:

Ահա զրա մի արտահայտություններից էր նաև «Հատակումի» բեմադրությունը:

Նախ՝ ասենք, որ Գորկու պիեսը հայ թատրոնի ռեպերտուարի մեջ մտել է Սկոմյանի առաջարկով:

Սկոմյանը Ալեքսանդրապոլի թատրոնում մի տարու չափ գործելուց հետո մեկնում է Մոսկվա, ուր միաժամանակ մնում է և ապա վերադառնում հայրենիք: Մի տարի Բարվում գործելուց հետո տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ 1908-ին հայ Դրամատիկական Ընկերության խմբի ռեժիսոր էր հրավիրված Ստեփան Քափանակյանը, մի գործիչ, որը բավական ընդհանուր կողմեր ուներ Սկոմյանի հետ: Սկոմյանը փաստորին առաջին անգամ պետք է հանդիս գար Թիֆլիսի հասարակության առաջ: Նրա գերյուտի կամ, ինչպես մամուլում է գրված, «բեմ ելքի առիթով»¹ բեմադրվում է Գորկու «Հատակումը», ուր նա հանդիս է գալիս Սատինի գերակատարմամբ: Այդ նույնը հաստատում է նաև Օլգա Գուլազյանը: Դիրասանութիւն ասում է. «Օվի Սկոմյանը, որ նոր մարդ էր մեր խմբում, իր նոր ու հառաջադիմ գաղափարներով, նա է տվել Դրամատիկ Ընկերության վարչությանը՝ «Հատակումը» բեմադրելու միաբր»²:

Գորկու «Հատակում» պիեսի բեմադրության թողած ընդհանուր տպագործությունը միանգամայն գոհացուցիչ է եղել: Օրինակ, «Զակավալկազսկոյի Օբողրենիե» թերթը դրում է. «Սպասածին հակառակ, Գորկու «Հատակումը» հայ թատրոնի բեմի վրա միանգամայն հաջող անցավ: Թվում էր, թե շափականց դժվար էր հայ լեզվով տալ գորկիական հերոսների տիպական գծերը, սակայն, շատ քիչ բացառությամբ, ամեն ինչ բարեհաջող անցավ»³:

1. «Գործ», 1908, № 41:

2. Օլգա Գուլազյանի անտիպ հուշեցից:

3. «Զակավազսկոյ ազգական թատրոն» աշխատանք, 1908, № 39.

Նույն միտքն են արտահայտել նաև այլ թերթեր: «Այսպիսի մի դժվար գրամայի հաջող ներկայացման համար,— գրում է «Մշակը»,— կարող ենք շնորհավորել հայ դերասանական ընկերությունը»¹: Ներկայացումը զրական են գնահատել նաև «Սուրհանդակը»² և «Հուշարարը»³: Ներկայացման թողած ընդհանուր տպավորությունն այնքան գոհացուցիչ է եղել, որ նույնիսկ մի այնպիսի թերթ, ինչպիսին «Գործն» է, ստիպված է եղել խոստովանել այդ. «Մենք սպասում էինք, — գրում է նա, — որ այս պիեսը մեր բեմի վրա պետք է անցներ թույլ, քանի որ արժեքը միմիայն ուռւա լեզվի ուգույն ռձերի մեջն էր, ժողովրդական լեզվի բարբառների ժարգոնի, որը հայերեն թարգմանության մեջ պիտի գունատվեր, ոչնշանար. բայց մեր սպասածից հաջող զուրս եկավ խաղն առհասարակ»⁴: Ուրեմն հաջողությունը որքան բացարձակ է եղել, որ «Գործը», չնայած իր թշնամական դիրքին, ստիպված է եղել խոստովանել այն:

Ներկայացման հաջողությունը ամենից առաջ պայմանավորել է ոեժիսորական հսկողությունը, այն զեկավար ձեռքը, որ կարողացել է մի ընդհանուր ամբողջության մեջ ներգրավել բոլոր զերակատարներին և ներդաշնակ անսամբլ ստեղծել: Իսկ այս գրիթե նոր երեսով էր հայ թատրոնում: Դրա համար էլ մամուլում հրատարակված ուշենդիաներում խոսր կա ներկայացման ընդհանուր ներդաշնակության մասին⁵: Նույնը և զերակատարման կապակցությամբ. մեր մամուլում հաճախ չի զրվել, թե «գերակատարները լավ էին ուսումնասիրել և լավ ըմբռնել իրենց գերեբը»⁶: Մեմուարային գրականության մեջ քիչ փաստեր չեն պահպանվել այն մասին, թե ինչպես անցյալ հայ թատրոնում ներկայացումը շատ անգամ պատրաստվել էր.

1 «Մշակ», 1908, № 239:

2 «Սուրհանդակ», 1910, № 51:

3 «Հուշարար», 1908, 8:

4 «Գործ», 1908, № 41:

5 «Հուշարար», 1906, № 5:

6 «Մշակ», 1908, № 239:

անկախ նախապես դերասաններին ամբողջ պիեսի հետ ծանոթացնելուց: Այդ մասին շատ է գրվել մամուլում և դրա կապակցությամբ էլ, 1908-ին, մինչև «Հատակում» պիեսի ներկայացումը, դեռևս գարնանը, Մոսկվայում տեղի ունեցած ոեժիսորական համագումարի կազմակցությամբ, մեզնում առանձնապես սրվել է գեղարվեստական անսամբլ ստեղծելու խնդիրը, և այն դիտակցությունը, թե քա հնարավոր կարող է դառնալ այն դեպքում միայն, եթե թատրոնն ապահոված լինի ոեժիսորով¹:

«Հատակումը» առաջին այդ ներկայացումներից էր, և մամուլն էլ նշել է այն դրական արդյունքը, որին թատրոնը հասել է ոեժիսոր Քափանակյանի զլիավորությամբ:

5

Քննադատական դրականության մեջ «Հատակում» պիեսի հայկական առաջին բնմադրության, հատիկապես դերակատարումների մասին, դժբախտաբար, շատ քիչ տվյալներ են պահպանվել, եթե չասենք՝ դրեթե ոչինչ: Մամուլում և արխիվային տակավին անտիպ նյութերում եղած մի քանի կցկուուր մանրամասնություններ մեզ որոշ հիմք են տալիս զնահատելու նրեք դերակատարում: Խոսքը Գրիգոր Ավետյանի Լուկայի, Օվի Սևումյանի Սատինի և Օլգա Գուլազյանի Ալյոշկայի մասին է:

Լեռն Դանիելյանը, որ, ինչպես ասվեց, «Հատակում» պիեսի անդրանիկ բնմադրության առաջին ոեցենզենտներից է, ասում է, որ չնայած ներկայացման մեջ գրադարձ էին հայտնի և հասարակության կողմից այնպիսի սիրված արվեստագետներ, ինչպես Օլգա Մայսուրյանը և Սաթենիկ Աղամյանը, այնուամենայնիվ, հանդիսատես հասարակությունը, հատկապես երիտասարդությունը, «բարձր տրամադրությամբ ծափահարում էր Ավետյանին, Սևումյանին և Գուլազյանին»²:

¹ Օվի Սևումյան, Բուևաստանի ոեժիսորների առաջին ժողովը («Հուշաբար», 1908, № 6—7):

² Լեռն Դանիելյանի անտիպ հուշերից:

Գրիգոր Ավետյանի կուկան ժամանակակիցները շատ-
րարձր են զնահատել: Բոլոր հսկվածներում և՛ այս, և՛ այլ
ներկայացումների կապակցությամբ ասվել է, թե դերասանը
ինչպիսի կենդանի գծերով կարողացել է կուկայի կերպարը
վերաստեղծել:

Նախ՝ ասենք, որ կուկայի կերպարը, համենայն դեպս նրա
արտաքին բնմանկարը, ընդհանուր բնութափիծը, կենցաղային
երանդը, խոսքի ինտոնացիան, ոչ այնքան երևակայություն-
ուժով էին գտնված, որքան, պարզապես կյանքից քաղված:

Վիկտորիա Ավետյանն իր անտիպ հիշողություններում՝
ասում է, թե «Ավետյանը Մոսկվայում, ընդհանրապես թուսաս-
տանում եղած ժամանակ շատ էր տեսել կուկայի նման թափա-
ռաշրջիկ ծերունիների, հանդիպել էր նրանց եկեղեցիների բա-
կերում, ուստատեղիներում ու ժամերով, շատ երկար, դի-
տել, ուսումնասիրել է նրանց տիպերը, թի ինչպես են իրենց
պահում, ինչպես են խոսում, ժպտում, արտահայտվում»¹:
Կյանքից կուտակած այդ տպավորությունները, արվեստագիտի
յուր աշբով դիտածը Ավետյանը տեղափոխել է բեմ, որը հիմ-
նավորապես օգնել է նրան՝ այդ ուրույն, խիստ ուստական կեր-
պարը հենց տառչին հայտցրեց դարձնել համոզիչ:

Սրա համ միտսին, Ավետյանին մհծապես օգնել է այն,
որ նա տեսել էր Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի կու-
կան, Մոսկվինի նշանավոր կուկան, որը մինչև հիմա էլ հա-
մարվում է շդերականցված: Դերասանի ժամանակակիցներից
Օլգա Գուլացյանն ասում է, որ կուկայի գերը Ավետյանը կա-
տարում էր Մոսկվինի խաղի թողած ընդհանուր տպավորու-
թյուն տակ և այդ պատճառով էլ նրանց խաղերի մեջ նմանու-
թյուն շատ կար:

Ավետյանի կուկան, եթե կարելի է ասել, տրադիցիոն էր:
Այսինքն՝ նրա խաղի հիմքում ընկած էր կերպարի արագիցիոն

¹ „Ճաճ Գրութա“ (Թատերական թանգարան, Գրիգոր Ավետյանի արխիվ): Վ. Ավետյանի հիշողությունների վրա մեր ուշագրու-
թյունը հրավիրել է թատերական Սարբը Արիակը:

քմբոնումը, որ, իհարկե, դալիս էր և' պիհսից, և' Մոսկվինի
մեկնաբանությունից, և' քննադատությունից:

«Հատակում» պիհսի գերակատարներից երկուսը — Լու-
կա-Գրիշա Ավետյանը և Սատին — Օվի Սևումյանը — առում
է Գուլազյանը, — իրենց բարձր արվեստի որակի խաղով
առանձնապես շատ ուժեղ տպավորություն են թողել ինձ վրա,
որպես այդ ներկայացման ամենափայլուն գերակատարներ:
Ավետյանի Լուկան, — շարունակում է Գուլազյանը, — զարդա-
նալի ամբողջացած էր. թե՛ խաղը, թե՛ գրիմը, թե՛ հագուստը
հենց առաջին մուտքից ուժեղ հետաքրքրություն էին շարժում
իմ մեջ: Այն հանգիստ ու խաղաղ, բոլոր մարդկանց լավը ցան-
կացող, յուրահատուկ մեղմ տոնը գրավում էր ինձ իր կատա-
րելությամբ ¹:

Մոտավորապես նույնն է վկայում նաև Վիկտորիա Ավետ-
յանը. «Ահա իմ առաջ կանգնած է, — հիշում է նա, — հան-
գիստ, բարի մի մարդ, մեղմ ժպիտով, և մինիթարում է զբ-
րախտ աղջկան» ²:

Լուկայի կերպարը երկու կողմ ունի: Լուկան խոսում է այն
մասին, որ մարդուն պետք է սիրել, հարգել, որ մարդը — դա
ինքը ճշմարտությունն է, որ պետք է երեխաներին դուրգութել,
ճանապարհ, լայն ասպարեզ տալ: Այս բոլորը հենց այն դրա-
կան հատիկն է, որ համակրական է դարձնում նրա կերպարը,
բարի, մարդասեր. ընկել է հուսահատ մի միջավայր, բայց
ինքը հուսահատված չէ, ընկել է թշվառության մի աշխարհ,
որի վրա ծանրացած է քար անտարբերություն, բայց ինքը ան-
տարբեր չէ, անշահախնդիր բարությամբ հետևում է մարդ-
կանց ճակատագրին: Սակայն Լուկան ունի և մի այլ կողմ, մի
ամբողջ փիլիսոփայություն, ստի, այսպես ասած՝ դեղեցիկ
ստի, սփոփանքի, միսիթարանքի փիլիսոփայություն, որը,
վերջի վերջո ոչ այլ ինչ է, բայց եթե մարդկանց իրականու-

¹ Օլդա Գուլազյանի անտիպ հուշերից:

² „Ճադ Գրիշա“ (Թատերական թանգարան, Գր. Ավետյանի
արխիվ):

թյան հետ հաշտեցնելու մի ձգտում։ Այս փիլիսոփայությունը, իհարկե, մարդասիրական հիմքերից զորպկ է, պարզապես վնասակար։ Ճշմարիտ ու բարձր սերը պետք է մարդուն ոչ թե հաշտեցնի կյանքի դառնությունների հետ, այլ հանի, ոտքի կանգնեցնի ու զինի նրան դառնությունների գեմ։

Կերպարի այս հակասական բնույթը որևէ արտացոլում գտե՞լ է Ավետյանի խաղի մեջ, դժվարանում ենք ասել, մասավանդ որ նրա ժամանակ ընդունված և տիրապետող հայոցքի համաձայն՝ կուկան ընկալվում էր որպես զրականի մարմնացում։ Դրական էր խաղում նրան և Մոսկվինը։ Սակայն նույն Մոսկվինի մասին ասում են, որ նա որևէ չափով չէր իդեալականացնում կերպարը, չէր քաղցրացնում նրա խոսքը և ոչ էլ նրա սուտը դարձնում բոլոր շարիքների գեմ ամենազոր։ Այս նույնը կարող էր և Ավետյանի խաղի մեջ լինել, քանի որ այն, ինչպես արդեն ասվեց, ստեղծվել է Մոսկվինի ազգեցության ներքո։ Օրինակ, ոեցենզիաներից մեկում դիտողություն է արված, թե կուկայի գերակատարն «իր տոնի մեջ մտցնում էր կոմիկական նոտկա»¹։ Դժվար է այժմ ասել, թե քննադատն այդ դիտողությունն անելիս ինչ է նկատի ունեցել, ոչ արդյոք այն, որ այդ կոմիկական նոտկան խախտում է կերպարի միանդամայն դրական բնույթը, առանց որի, իսկապես, զուցե և կերպարը իդեալականացման վտանգի տակ լլիիներ։

Այս էլ ասենք, որ անկախ նրանից, թե Ավետյանը կուկայի «գեղեցիկ սոփի» անհրաժեշտության տեսակետի վրա ամբողջապես էր կանգնած, թե ոչ՝ վերջի վերջո չէր կարող դուրս գալ պիեսի հնարավորության սահմաններից։ Իսկ պիեսը, անդամ կախ է ուկայի կերպարի կատարումից, ինքը մերկացնում էր կուկային, ավելի ճիշտ՝ նրա փիլիսոփայության վնասակարությունը, որովհետեւ վերջին գործողության մեջ կատարվող դեպքերը հատակի գրեթե բոլոր մարդկանց շատ առիթներ են տա-

լիս համոզվելու, որ ծերութիւն խորհուրդները, նրա ներշնչած հույսերը բարի, բայց անհիմն ցանկություններ են միայն:

Սատինի դերը փայլուն հաջողությամբ կատարել է Սևումյանը, այնքան լավ, որ մեր անցյալ թատրոնում այդ կերպարը կապվել է նրա անվան հետ, չնայած այդ դերով մի-երկու տարի անց, և կասեինք ոչ պակաս հաջողությամբ հանգես է եկել նաև Խաչակ Ալիխանյանը:

Մեմուարային գրականության մեջ հղած փաստերը վկայում են, որ Սատինի կերպարը Սևումյանը ստեղծել է Գեղարվեստական թատրոնի ներկայացման տպավորության տակ:

Գեղարվեստական թատրոնում Սատինի դերը, ինչպես հայտնի է, կատարում էր Ստանիսլավսկին: Թատերական թանգարանում պահպանվել են Վիկտորիա Ավետյանի անտիպ Գիշողությունները, որտեղ, «Հատակումի» մի ներկայացման կապակցությամբ, ի միջի ալլոց, գրված է հետևյալը. «Սատին—Սևումյանը,— պատմում է նա, — Գիշեցրեց Ստանիսլավսկուն իր մտածված խաղով և արտաքին նմանությամբ»: Նույնը հաստատում է նաև Գուլազյանը: Անդրադառնալով «Հատակումի» 1908-ի առաջին ներկայացմանը՝ նա գրում է. «Ես զմայլված դիտում եմ կուլիներից և մտածում. այսքան կարծ ժամանակում, ուստական թափառական ծերուկ կուկայի գերը, ինչ համոզիչ, ճիշտ տոներով ու խաղով է կատարում Ավետյանը: Նույնը և Սևումյանը: ...Տարիներ անց, երբ բախտ ունեցա տեսնելու երկրագնդի ամենաձշմարիտ ու բարձր արվեստի Գեղարվեստական թատրոնի ներկայացումը Մոսկվայում, և հասկացա, թի որքան ուժեղ է ուստական թատրոնի ազդեցությունը հայ գերասանների վրա, մասնավորապես Դրիշտա Ավետյանի վրա Մոսկվինի կուկան և Սևումյանի վրա՝ Ստանիսլավսկու Սատինը»¹:

Սևումյանը տեսել էր ուստի մեծ վարպետի խաղը, և նրա ազդեցության տակ գտնվելով՝ իր ստեղծած կերպարը թե՛ ար-

¹ Օլդա Գուլազյանի անտիպ հուշերից:

տաքին բեմանկարի, թե՛ լուսաբանության կողմից, կառուցել էր Ստանիսլավսկու նմանությամբ:

Այս վկայությունը խիստ էական է: Նշանակում է Գեղարվեստական թատրոնի ազդեցությունը հայ արվեստագետների վրա այնչափ ուժեղ էր, որ ոչ միայն նրա ղեկավարների սկզբ-բունքներն էին հայ թատրոն թափանցել, այլև խաղը, նրանց ընդօրինակելու ձգտումը:

Ստանիսլավսկու նմանությամբ խաղալու Սկումյանի այս փորձը, որ միակը չէ մեր թատրոնում, սոսկ ընդօրինակություն չէր: Եվ եթե Վիկտորիա Ավետյանը այդ փաստը հիշատակում է, ապա ոչ թե Սկումյանի խաղը նսեմացնելու, այլ նրան մեծարելու նպատակով, ցուց տալու համար, թե որքան մեծ էր նրա հափշտակությունը Գեղարվեստական թատրոնով, թե ինչպիսի մեծ հեղինակությունն էր Ստանիսլավսկին նրա համար:

Կատարյալն աշքի առաջ ունենալու, նրանից սովորեկու առողջ ձգտում էր այդ:

Սկումյանի Սատինի մասին, դժբախտաբար, շատ նյութեր շեն՝ պահպանվել, որ կարելի լինի ցույց տալ, թե վերոհիշյալ նմանությամբ հանդերձ, հայ դերասանի անհատականությունը ինչ նոր երանդներ և դժեր է հաղորդել կերպարին:

Մամուլում ասված է, որ Սկումյանի Սատինն առանձնապես ուժեղ տպավորություն է թողել վերջին դրծողության մեջ¹: Այս վկայությունը շատ կարևոր է, մանավանդ որ այն հաստատվում է և այլ աղբյուրներով, ինչպես, օրինակ, Գուշլազյանի պատմածով: Իսկ ի՞նչն է պատճառը, որ դերասանի խաղը շորրորդ գործողության մեջ է իր զադաթնակետին հասել, կամ այդ գործողության ո՞ր տեսարանի մասին է խոսքը: Այս առթիվ Գուշլազյանը պատմում է հետեւյալը. «Զորբոսդ դրծողության մեջ իր ուժեղ մոնոլոգը մարդու մասին «մարդը ազատ է, մարդ — ահա ճշմարտությունը, հասկանո՞ւմ ես, ուս ահապին է... ամբողջը մարդու համար» և այլն: Այս մոնոլոգը

¹ «Մշակ», 1908, № 239:

արտահայտելիս, Սևումյանն ինքն իրեն էր գերազանցում, այնքան ուժեղ, ցնցող ու հոյակապ էր կատարում այդ տեսարանը»¹:

Ուրեմն, մարդուն նվիրված Սատինի մենախոսությունը 1908-ի ներկայացման, եթե ոչ ամենազլիսավոր, ապա հիմնական, որոշող հատվածներից է եղել:

Դժբախտաբար հայտնի չէ, թե ինչպես է գերասանը խաղացել, ինչպես է ասել այդ հայտնի մենախոսությունը, որ հասել է այդպիսի մեծ ներգործության: Թերեւ այդ տեսակետից կարող են օգտակար լինել Գեղարվեստական թատրոնի բեմադրության ռեժիսորական գրառումները: Այն հատվածների դիմաց, որոնք վերաբերում են մարդու մեծարմանը, ըստ Ստանիսլավսկու՝ Սատինը պատկերվում էր մշտահարբ, բայց հետզհետեւ ոգերովելով: Զգացվում էր ինչ-որ մի դառնություն, թերեւ զղզում: Նրա մեջ այստեղ հնչում էին դեռևս ոչ բոլորովին կտրված, բայց երկար ժամանակ լուս մնացած լարեր, որ լավագույնն էին նրա հոգում: Զգացվում էր տաղանդավոր մարդը, արվեստագետի հոգին: Խոսում էր շարունակ լավ զգացումով: Մարդու մեջ շատ սեր կա և գեղեցկության զգացում²:

Ահա այս պատկերացումն է ընկած եղել Ստանիսլավսկու Սատինի կերպարի հիմքում: Համանորեն Սևումյանի խաղն էլ ահա այս նմանությամբ պետք է կերտված լինի, նամանավանդոր, ինչպես տեսանք, այդ հաստատող վկայությունը պահպանվել է:

Սակայն ավելի կարենոր է այս հարցի մի այլ կողմը, Սատինի մենախոսությունը մարդու մասին՝ ուժեղ տպավորություն է թողել, այն աստիճան, որ մամուլը հարկ է համարել նշել այդ, մինչև հիմա էլ անջնջելի է մնացել այն՝ ժամանակակիցների հիշողության մեջ:

Սատինի այդ մենախոսությունը միշտ էլ նշանավոր է եղել

¹ Օգա Գուլազյանի անտիպ հուշերից:

² „Ежегодник Московского художественного театра“, 1945, том 1, стр. 225—22).

և ամեն անդամ էլ այն գտնվել է ուշագրության կենտրոնում, իր բարձր մարդկայնությամբ, զգացմունքի վեհությամբ ու գեղեցկությամբ: Սակայն տվյալ դեպքում մեզ հարցը զբաղեցնում է ոչ թե ընդհանրապես, այլ իր պատմական կոնկրետության մեջ, թե ե՞րբ և ի՞նչ ժամանակներում է հնչել այդ վեհապես, հասարակական-քաղաքական կյանքի ինչպիսի՝ մթնուրուտում է գերասանը նվաճել այդ հաջողությունը:

«Հատակումը», ինչպես ասվեց, բեմադրվել է սեակցիայի տիրապետության շրջանում, այն տարիներին, երբ հուսարեկ տրամադրությունն էր համակել ինտելիգենցիային, ոչ միայն նրանց, որոնք միշտ հեռու էին կանգնած քաղաքականությունից, այլև նրանց, որոնք երեկ խանդավառված էին պրոլետարիատի ուսուցչուն պայքարով: Հոգեոր սեակցիայի մթնոլորտում, զրականության և արևեստի մեջ, ինչպես և, իհարկի, թատրոնում, աշխուժացան սեօփ պաշտամունքն ու ճակատագրայնությունը, հասարակական անտարբերությունն ու միստիցիզմը, ընդհանրապես անկումային, հիվանդագին տրամադրությունները:

Այս շրջանում, երբ քարոզում էին, թե մարդը խղճուկ ոչնչություն է, մի անգոր արարած, որ պետք է հլու-հնազանդությամբ ենթարկվի ճակատագրին, որքան էլ այն ծանր լինի, այսինքն՝ իրականության հետ հաշտվելու սեակցիոն դադարքը առաջ քաշվում ու պաշտպանվում, — ահա այդ վճառության և հուսահատության մթնոլորտում պարզ է, թե ինչպես պետք է հնչեր մարդու դորիկական հպարտ մեծարանքը բեմից:

«Ենում են մոմենտներ, — զրել է Սուրեն Սպանդարյանը սեակցիայի տարիներին, — երբ առույգ խոսքը մեծ օգուտ է բերում հասարակությանը և նրա ուժերը խելացի կերպով զարթեցնելու իմաստով»¹:

Սեռությանի խաղը Սատինի դերում, հատկապես նրա մեջախոսությունը վերջին գործողության մեջ՝ հենց այն առույգ

¹ Սուրեն Սպանդարյան, Հոդվածներ, 1949, էջ 65:

խոսքն է, որ ծանր տարիներին օգնում էր մարդկանց՝ հաղթահարելու հասարակական անտարբերությունը, դուրս գալու ներամփոփումից, նորից վերադառնալու դեպի կյանք:

Այսպիսով, ուրեմն, կարելի է վստահ խոսել այն դրական նշանակության մասին, որ ունեցել է Սատին-Սևումյանը՝ հասարակական տրամադրությունների աշխուժացման մեջ՝ ռեակցիայի տարիներին:

Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նաև Ալյոշկայի կերպարի վրա, որի գերավատարմամբ հանդես է եկել Օլդար Գուշազյանը:

«Երբ պիեսի հետ ծանոթացա, — պատմում է Գուլազյանը, — չգիտեմ ինչու բուռն ցանկություն ունեցա խաղալու հարբեցող կոշկակար Ալյոշկայի դերը: Ես արդեն տրադիցիոն կերպով խաղում էի փոքրիկ տղաների դերեր: Բայց, իհարկե, Ալյոշկան այլ էր: Մինչ այդ ես խաղում էի փոքրիկ, անմեղ, լիրիկ, երեմն նույնիսկ դրամատիկ ապրումներով տղա երեխաներ, կամ թե ուրախ ու զվարի, շարաճճի, անզուսպ, կհնուրախ մանուկներ: Մեժիսոր Քափանակյանը շատ զարմացավ իմ Ալյոշկա խաղալու ցանկության վրա, բայց միենուզն ժամանակ համաձայնեց՝ ասելով «փորձենք, դա իսկապես օրիգինալ բան կստացվի»... Անցանք գործի»¹:

Օլդա Գուլազյանը, այն ժամանակ դեռ բոլորովին երիտասարդ գերասանուի, ճիշտ ընկալելով Ալյոշկայի կերպարը, թե ինչո՞ւ է նա զլուխը զինուն և օղուն տվել, ըմբռնելով նրա կծու-ծաղրական արտահայտությունների ներքին իմաստը, փոքրիկ դերից ստեղծել էր մի ինքնուրուցն, գունեղ և ամբողջական պատկեր, սկզբից մինչև վերջ մի այնպիսի համոդիչ խաղ, որն արժանացավ քննադատության բարձր դնահատությանը:

Ալյոշկան, ինչպես հայտնի է, բեմ է մտնում գարմոշկան ձեռին, խմած, հանդուզն, «ինչո՞վ եմ ես ուրիշներից վատ»:

¹ Օլդա Գուլազյանի անտիօ հուշերից:

գոռալով։ Տեղի է ունենում Ալյոշկայի և Վասիլիսայի հանդիպումը։ Վասիլիսան՝ անողոք ու շարակամ մի կին, չի սիրում Ալյոշկային, որովհետեւ զգում է, որ, թիև խմած վիճակում տաված, բայց նրա սանձարձակ պահվածքը, ընդհանրապես հանդուպն միտքն ուղղված է իր դեմ և օրերից մի օր կարող է իրեն տհաճ տնակնելի առաջ կանգնեցնել։ Երբ նա հարձակվում է Ալյոշկա-Գուլազյանի վրա, վերջինս կատարի ճարպկությամբ մտնում է թախտի տակ և այնտեղ գարմոշկա նվազում։ «Իմ մեջ,— պատմում է Գուլազյանը,— բուռն ցանկություն էր զարթնում՝ կատաղեցնել, պայթեցնել նրան... Զեռք առնել, ծաղրել նրա ունեոր տանտիբոց գիրքը...¹։ Եվ այսպիս, պտույտներ գործնլով թախտի շուրջը, նվազելով գարմոշկան, նա խաղում էր նրա հետ, ինչպես կատուն մկան հետ, և ապա քրքիչով ու սովելով դուրս փախչում։

Գուլազյան-Ալյոշկան նման տեսարան ուներ նաև ուտիկան Մեդվեդի հետ։ «Եռլինպիսի բուռն ու անդուսպ ցանկություն ունեի՛ ծաղրել ու ձեռք առնել Մեդվեդին»², — հիշում է Գուլազյանը։ Կովի, տուրուգմբոցի տեսարանում Ալյոշկա-Գուլազյանը Մեդվեդի հետեւց ծածուկ քանդում էր նրա սովիշը և ապա բարձրանալով պատի վրա՝ այնտեղից կատաղի կերպով սովում էր, իսկ երբ սոտիկանը ընկնում էր նրա հետեւց, Ալյոշկա-Գուլազյանը ճարպիկ կերպով թոշում էր պատից և սովելով անդադար պտույտներ գործում սոտիկանի շուրջը։

Գուլազյանի խաղը Ալյոշկայի գերում ընդհանրապես բարձր է դնահատուվել։ Ժամանակակիցների վկայությունից երևում է, որ դերասանուշու խաղի թողած տպավորությունն այնքան ուժիղ էր, որ հանդիսատես հասարակությունը նրան դասել է ներկայացման այնպիսի հիմնական դերակատարների շարքը, ինչպիսիք էին Սեռուցյանը և Ավետյանը։

Սակայն լսվել է նաև քննադատական ձայն։ Թերթերից

¹ Օլդա Գուլազյանի անտիպ հուշերից։

² Նույն տեղում։

մեկը, օրինակ, այն միտքն է Հայտնել, որ իբր Գուղազյանը շափազանցության մեջ է ընկնում¹: Թերևս կարելի էր կանդ շառնել այդ գիտողության վրա, համարել այն թյուր տպավորության արդյունք, մանավանդ որ Հակառակ կարծիք ունեցող ների թիւն ավելի շատ էր, եթե դա իսկապես թյուր տպավորության արդյունք լիներ և ոչ, ասենք, սկզբունքային Հակառակություն այն բոլորի, ինչ որ անում էր քեմի վրա գերասանութին:

Գուղազյանը պատմում է, որ իր խաղը, իր այսպես առած, շարաճճիությունները Վասիլիսայի և մանավանդ սատիկանի հետ՝ միանգամայն տարբեր ունակցիա էին առաջացնում հասարակության մեջ, նայած թե ներկայացումը որտեղ էր տեղի ունենում — Արտիստական թատրոնում, թե Ժողովրդական Տանը:

«Զարմանալի կերպով, — պատմում է դերասանութին, — այս տեսարանը բուռն ծափահարությամբ էր ընդունվում հասարակության կողմից, երբ խաղում էի Զուբալովի անվան Ժողովրդական թատրոնում, և, ընդհակառակը, ոչ մի ունակցիա չէր տալիս, երբ խաղում էի Արտիստական թատրոնում: Մեղանչած շլինելու համար առեմ, որ Արտիստական թատրոնը նույնպես օվացիա էր սարքում, բայց միայն դավորկան, ուր ուսանողները և բանվորները քառասուն-կոպեկանոց տոմսերով էին գալիս ներկայացումը զիտելու: Իսկ սարտերի թավշյա բազկաթոռների մեջ բազմած բուրժուաների դեմքին վախից ծամածոված ժպիտ էր անցնում»²:

Այս վկայության լուսնի տակ՝ դերասանություն հասցեին արված կշտամբանքը սոցիալական իմաստ է ստանում³:

¹ «Закавказское обозрение», 1908, № 39.

² Օլգա Գուղազյանի անտիպ հուշերից:

³ Մեր այս ուսումնասիրությունը, որպես զեկուցում արդեռ կարգացված էր Հայկական թատերական բնկերությունում «Հայտակումք» առաջին հայկական բնեագրության 40-ամյակին նվիրված երեկոյին, 1953-ի հոկտեմբերի 26-ին, որ Գիտությունների ակադեմիայի

Նկատի ունենալով, որ Արտիստական Բնկերության ներկայացումներն այնքան էլ մատշելի չէին ժողովրդական լայն խավերին, Սևումյանը, մի տարի հետո, 1909-ին, «Հատակումը» բեմադրում է ժողովրդական Տանը՝ թատերասերների ուժով: Մամուլում տեղեկություն է պահպանվել այն մասին,

Արքևոտների պատմության և տեսության սեկտորի ասպիրանտ Օլգա Մելիք-Վրթանեսյանը մեզ պատմեց հետեւալը:

«Արտիստական թատրոնի հայ գերասանական խմբի հուշարարի հետ ունեցած զբույշի ժամանակ հաջողվեց վերականգնել Գորկու «Հատակումը» պիեսի 1908 թ. բեմադրության մի շատ հետաքրքրական էպիզոդ, որը մեզ հարաբերություն է տալիս որոշ հարցերի նկատմամբ կոնկրետ եղանակացությունների հանդել:

Երկրորդ զործողության առաջին պատկերում, երբ Նաստիկան իր երազած մաքուր սիրո հեքիաթն է հյուսում, Բարոնը դադարադողի մոտենում է նրան և պատուելով աղջկա ծնկներին ընկած «Ճակատագրական սեր» զբքի էջը, ծխախոտ է փաթաթում, վառում է այն և ապա այրված թղթի մնացորդները չարախնդությամբ վերադարձնում Նաստիկային:

Ռեժիսորական աշխատանքի այս հիմնալի օրինակը գալիս է հաստատելու այն միտքը, որ 1908 թ. բեմադրության զեկավարները գտնվելով Մոսկվայի ֆեղարքիստական թատրոնի բեմադրության աղդեցության տակ, հանգես են եկել որպես ինքնուզ-բույն ստեղծագործողներ, իրենց առաջնապատակ զնելով ճիշտ և խոր բացահայտել Գորկու պիեսի ոչ միայն սոցիալական, այլև փիլիսոփայական կողմը: Բարոնն ու Բուրնովը պիեսում հանգես զալով որպես սկեպոլիցիկմի ներկայացուցիչներ, իրենց կյանքի երջանկությունը գտնում են միայն ուրիշների երազանքները, հույսերն ու ձգտումները խորտակելու մեջ: Նաստիկան երջանկության գաղաթնակետին է, իսկ Բարոնը այրում է նրա միակ հույսը, «Ճակատագրական սեր» զիրքը, այսինքն՝ այն կամուրջը, որով Նաստիկան ցանկանում էր զուրս զալ հատակի տիզմից:

Պատճառաբանված և զեղեցիկ այս գետալով, ռեժիսորները կարողացել են միանգամից բացահայտել պիեսի երկու կարևոր պերսոնաժների՝ Նաստիկայի և Բարոնի հոգեբանական, փիլիսոփայական էռությունը, որը և միաժամանակ վկայում է նրանց բեմական կուլտուրայի, ռեժիսորական մտադացումների, բեմական մարմարուման անժիտելի ունակությունների մասին»:

որ ռերկու-երեք օր առաջ, արդեն բոլոր տոմսակները ծախ-ված-վերջացած էին, նույնիսկ օրկեստրային բաժանմունքում դարսված ավելորդ աթոռներն անզամ բռնված էին»¹:

Ինչո՞վ բացատրել այսպիսի հետաքրքրությունը:

Եթե նկատի չունենանք իրեն՝ Սևումյանին, որ կատարում էր Սատինի գերը, ապա մյուս գերակատարները մեծ մասամբ բեմը սիրող բանվորներ ու արհեստավորներ էին, որ իրենց ազատ ժամանակը նվիրում էին թատրոնին: Հաղիվ թե ճիշտ լինի ասել, որ դերակատարների խաղն էր այսպիսի հետաքրքրության ազբյուրը: Ավելի ճիշտ կլինի մտածել, որ նախ՝ հետաքրքրության գլխավոր շարժառիթը Գորկին, բանվորների սիրելի գրողը և ապա Ժողովրդական Տան տոմսակները շափազանց էժան էին և այդ պատճառով էլ նրա ներկայացումներին հավաքվում էր բանվորների, ուսանողների ու աշակերտների, արհեստավորների ու ծառայողների մի մեծ բազմություն:

Ի՞նչ արձագանք գտավ «Հատակումի» նոր բեմադրությունը:

Գորկու պիեսի պաշտպանությամբ հանդես են դալիս մեր դեղարվեստական ինտելիգենցիայի այն ներկայացուցիչները, որոնք ոչ միայն աշխարհայացրով, այլև իրենց գործունեությամբ կապված էին այն ժամանակ երկրի զարգափարական կյանքը ընդհատակից զեկավարով Կոմունիստական պարտիայի հետ: Սևումյանի այս բեմադրության մասին «Մշակում» ըննադատական հոդված է հրապարակել բանաստեղծ Հակոբ Հակոբյանը: Նա բարձր է զնահատում թատրոնի աշխատանքը, սլրութաբական բանաստեղծին առանձնապես չի զբաղեցրել, թե որ գերակատարն ինչպես խաղաց, թե ներկայացման որ հատվածում նրանք առանձնապես հաջողություն ունեցան, կամ ինչ թերություններ կային: Դա չեր հետաքրքիրը, այլ զեկավարող նպատակակետը, ուղղությունը, որի մի նմուշն էր թատրոնի այս ներկայացումը:

¹ «Հորիզոն», 1909, № 48:

«Տվեք այս ոգով շատ պիեսներ, — գրում է Հակոբ Հակոբյանը, — և հասարակովյանը միշտ կդա, կլեցնի թատրոնը: Այս կողմից գովելի է ոեմիսոր Սեռմյանի ընտրությունը: Հուսանք, որ նա, ապագայում ևս, կդեկավարվի նույն ուղղությամբ»¹:

Մեմուարային դրականության մեջ ակնարկ կա այն մասին, որ Հակոբյանը և Սեռմյանը չերմ բարեկամությամբ էին կապված: Այդ բարեկամությունը պատահական չենք համարում, այլ ծնված՝ զաղափարների ու ձգումների ընդհանրության հողի վրա: Չի կարելի ասել, որ Սեռմյանն իր հայացքներով կարողացավ բարձրանալ մինչև Հակոբյանի աշխարհայացքի մակարգակը: Դա չէր կարող շղգալ պրոլետարական բանաստեղծը: Գուցե զրա համար էլ նա չի բավականացել այն գրուցներով, որ տեղի են ունեցել երկու արվեստագետների միջև, և նա մամուկի էջերում հանդես է եկել իր թեհ երիտասարդ, բայց և ընդհանուր առմամբ միշտ և առողջ ճանապարհի վրա կանգնած ընկերոջ աշխատանքի դրական գնահատությամբ: «Հատակումը» Սեռմյանի ոեմիսորական առաջին քայլերից էր, և Հակոբյանը շատ լավ էր հասկանում, որ դրա հրապարակային պաշտպանությունն ու քաջալերանքը էաւակս անհրաժեշտ էին: Դա պետք էր ոչ միայն որպես գործի ոեալ զնահատություն ընդհանրապես, անկախ ամին ինչից, այլ նկատի ունենալով միշտավայրը, դժվարությունները և գրիխավորապես այն դիմադրությունը, որ ծառացած էր երիտասարդ արվեստագետի դեմ՝ նրա ստեղծագործական կյանքի առաջին փորձերից սկսած: Վերջապես, դա էական նշանակություն ուներ ոչ միայն Սեռմյանի համար: Դա կարեոր էր ընդհանրապես թատրոնի, վերջապես, այն ուժերի համար, որ Սեռմյանի հետ կամ նրանից անկախ, բայց նույն մոտեցումն ունեին դեպի թատրոնի հարցերը:

¹ «Մշակ», 1909, № 281:

Պահպանվել են մի շաբք արխիվային նյութեր, որոնք ցույց են տալիս, թե մեր այն դերասանները, որոնց անվան հետ է առնչված «Հատակում» պիեսի առաջին բեմագրությունը հայ թատրոնում, որքան կապված էին Գորկու պիեսի հետ՝ նույնիսկ կենցաղում:

Օվի Սևումյանի և Գրիգոր Ավետյանի գլխավորությամբ, 1909-ին կազմվում է «Կովկասյան Հայկական Դրամատիկական խոսմք», որը մեկնում է Պարսկաստան, հետո Թյուրքիա, իսկ այնտեղից՝ Բուլղարիա:

Ինչպես պատմում է Վիկտորիա Ավետյանն իր անտիպ հիշողություններում, այդ թատերախումբը Բուլղարիայում եղած ժամանակ վերածվում է «կոմունայի» և վաստակած եկամուտը հավասարապես բաժանվում է նրա անդամների մեջ:

«Մեկ անգամ,— պատմում է նա,— երբ առանձնապես ուրախ էր ընթրիքի պահին, Օվի Սևումյանը մտածումքի մեջ ընկալ և հանկարծ հայտարարեց: «Գիտե՞ք ինչ, եկեք մեր կոմունան անվանները «Հատակում»: Սևումյանի առաջարկը բոլորիս սրտովն էր»¹:

Դրանից հետո կոմունայի յուրաքանչյուր անդամ կրում է Գորկու պիեսի որևէ գործող անձի անունը, և հետո այդ անունով էլ նրանք կոչում էին իրար: Նույն հիշողություններում կարդում ենք հետեւյալը. «բայց այն ժամանակ ոչ ոք չէր ենթադրում, թե մենք, Բուլղարիայում, Վառնա քաղաքում, կիաղանք «Հատակումը» և հենց այն դերաբաշխումով, որ ընկերական ուրախ ընթրիքի պահին արել էր ոեժիսոր Սևումյանը»²:

Զվարթ տրամադրության պահին, կատակով արված և բռ-

¹ „Դяд Գրիշա“ (Թատերական թանգարան, Գր. Ավետյանի տրմիկ):

² Նույն տեղում:

լորի կողմից սիրով ընդունված այս առաջարկը պատահականություն չէր: Մեր գերասանները սիրում և բարձր էին գնահատում Դորկուն և իրենց համարում էին նրա անվան հետանիզմի հիմքում էին նրա անվան հետանի կապված: Եվ դա զարմանալի չէ, եթե մանավանդ նկատի առնվի թատերախմբի կազմը, այսինքն՝ այն, որ խմբի մեծ մասը ոռուական առաջավոր կուլտուրայի ոգով՝ դաստիարակված արվեստագետներ էին, որոնք ոռուական կուլտուրայի ոչ միայն խանդավառ պրոպագանդիստներն էին իրենց հայրենիքում և, ինչպես փաստերն են ցույց տալիս, նրա սահմաններից դուրս, այլի խոր ակնածությամբ էին լրցված Ռուսաստանի նկատմամբ: Այդ իմաստով բնորոշ է թե՛կույզ այն փաստը, որ Պլովդիվ քաղաքը հասնելով՝ հայ դերասանները, քաղաքի տեսարժան վայրերում լինելով, իրենց պարտքն են համարում այցելել նուև Բուլղարիայում զոհված ուսա զինվորների գերեզմանատունը, որը, ինչպես պատմում են նրանք, «Չնորհակալ բուլղարացիները խնամում էին՝ միշտ թարմ ժաղկեփնչեր զնելով հողաթմբերի վրա»¹:

Հայ դերասանները Բուլղարիայում շփման մեջ են հղել տեղական ինտելիգենցիայի, բուլղար դերասանների և թատերասերների հետ: Իրենց ներկայացումները Պլովդիվում նրանք տվել են սոցիալ-դեմոկրատների ակումբում, որ կոչվում էր Ժողովրդական Տուն: «Մեզ, ցարական Ռուսաստանից հկածներիս վրա, — հիշում է Վիկտորիա Ավետյանը, — ահագին տպակալորություն թողեց բեմի կարմիր վարադույրի վրա զբրված — «Պրոլետարիներ բոլոր երկրների, միացե՛ք» լոգունգը²:

Պլովդիվում և Վառնայում հայկական ներկայացումներից բացի, «Կովկասյան Հայկական Դրամատիկական խումբը», տեղացիների պահանջով, մի քանի ոռուական ներկայացում է տվել, մանավանդ որ հայ դերասաններից մի քանիսը, ինչպես

¹ „Дяд Гриша“ (Թատերական թանգարան, Գր. Ավետյանի արթիվ):

² С. Ризаев, Из истории постановки армянским театром пьесы „На дне“ („Коммунист“, 1953, № 115).

Գրիգոր Ավետյանը, Սաթենիկ Աղամյանը, Օվի Սեռմյանը և
ուրիշները, պարզապես ազատ տիրապետում էին ուստաց
լեզվին:

Վիկտորիա Ավետյանն ասում է, թե «բուզդարացի երի-
տասարդությունը ոչ պահաս ուստականից, հրապուրված էր
պրոլետարական գրող Մարսիմ Գորկու երկերով»: Իսկ Գրիգոր
Ավետյանն իր հուշերում պատմում է հետեւյալը. «Տեղիս
սոցիալ-դեմոկրատների ակումբի վարչությունը մեզ խնդրեց,
ուսւերեն լեզվով անպայման բեմադրել Գորկու «Հատակում»
պիեսը և բոլոր տոմսակներն իրենց տալ»¹:

Հայ դերասանները համաձայնում են այն պայմանով
միայն, որ տեղական ուժերից մի քանիսը, թեկուզ թատերա-
սերներ, մասնակցեն, որովհետեւ ուսւերենին տիրապետող գե-
րասանների թիվը հայկական խմբում այնքան մեծ չէ: Ներ-
կայացմանը մասնակից են դառնում փոքրիկ դերերով բուզդար
ուսանողներ, որոնց մեջ եղել են նույնիսկ այնպիսիները, որ
միառօժանակ սովորել էին Մոսկվայի թատերական ուսում-
նարաններում, իսկ մեկն իր բեմական վարժությունն անցել
էր, օրինակ, հայտնի Լենսկու դեկավարությամբ:

Հիմնավոր փորձերից հետո, ներկայացվում է «Հատակու-
մը»: Լուկայի դերով հանդես է գալիս Ավետյանը, Սաթինի՝
Սեռմյանը, Վասիլիսային՝ Սաթենիկ Աղամյանը և այլն: Դահ-
լիճը լեփու-լեցուն է եղել: Թատրոնում էին բուզդարական նա-
վատորմիղի սպայական գրեթե ամբողջ կազմը և նավաստի-
ները, Ռուչշուկից եկած ուսուցչներ և ուսուցչուհիներ: «Առա-
ջանար դերասաններն իրենց բարձրության վրա էին... երի-
տասարդությունը նույնպես», — գրում է Վիկտորիա Ավետյանը,
որը նույնպես մասնակցել է ներկայացմանը՝ նատաշայի դե-
րակատարմամբ: Բոլորը խաղում էին մեծ ողեռությամբ, և
հասարակությունը վարձատրեց նրանց ջերմ ծափահարու-
թյուններով: Ներկայացումից հետո, այլում, ընթրիքի ժամա-

¹ Գրիգոր Ավետյան, Քառասունհինգ տարի հայ բեմի
վրա, հիշողություններ, 1933, էջ 110—111:

նակ, երիտասարդությունը մեծարեց դերասաններին և սիրելի պրոլետարական գրող Մաքսիմ Գորկուն: Ներկայացումը հարկ եղավ կրկնել հասարակության պահանջով՝¹:

Այս փաստերը վկայում էն և հաստատում հայ դերասանների առաջավոր շրջանների դեպի ոռւս զրամատուրգիան, դեպի Մաքսիմ Գորկին ունեցած սերը: Այս հաստատում է նաև այն, որ հակառակ եղած ակնտրիներին, թե ինչ հարկ կա Գորկու պիեսը բեմադրել, որ նա ոչ միայն օգուտ չի կարող տալ, այլև վնաս է հասցնում հայ բեմին՝ մեր բեմի լավագույն արվեստագետները «Հատակումը» պահում էին իրենց խաղացանկում և ավելի ամրապնդում մեկ անգամ արդեն նվաճված հաջողությունը:

Գորկու պիեսով ոգևորված էին, քացի Անուշյանից և Ավետյանից, նրանց հետ շրջագայության ելած դերասաններից և դերասանուհիներից, նաև ուրիշները: Այդ հաստատվումը է թեկուզ այն փաստով, որ «Հատակումի» անդրանիկ բեմադրության երեք առաջատար դերակատարների՝ Օվի Անուշյանի, Գրիգոր Ավետյանի, Սաթենիկ Ադամյանի բացակայությունը չի խանգարել, որ 1910-ին նորից բեմադրովի Գորկու պիեսը, որտեղ Սատինի դերը կատարել է Խաչակի Ալիխանյանը, իսկ Լուկայինը՝ Վարդան Միրզոյանը: Թեկուզ և այն, որ Անուշյանին փոխարինել է Ալիխանյանը և, ինչպես մատուցն է վկայում, հաջողությամբ², հաստատում է այն ճշմարտությունը, որ Գորկիիվ, նրա ստեղծած կերպարներով հայ իրականության մեջ առաջին հերթին հրապուրվել են մեր այն դերասանները, որոնք իրենց համարում էին Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի հետնորդներ:

Մեր նպատակը չէ այստեղ կանգ առնել «Հատակում» պիեսի մյուս բեմադրությունների մրա, որոնց թիվը, ի դեպ, այնքան էլ փոքր չէ: Մեր նպատակն ավելի չէր, քան ցույց տալ:

¹ „Դяд Գրիշա“ (Թատերական թանգարան, Գր. Ավետյանի արխիվ):

² «Սուրհանդակ», 1910, № 51:

Գորկու նշանավոր պիեսի բնմական պատմության առաջին էջը, իսկ մնացածը, ամբողջ պատմությունը, որ շատ ուշադրավ է, անշափ կարեոր, առանձին ուսումնասիրության առարկա է: Ի՞նչ է հետևում այս բոլորից:

Պայքարը ուսւա զրամատուրդիայի համար հայ թատրոնում՝ որ սկսվել էր անցյալ դարի 60-ական թվականներին, շարունակվելով և հետագայում, հասավ մինչև գարասկիզբ և մի աւանձին ուժով բորբոքվեց Գորկու կապակցությամբ: Գորկու համար հայ իրականության մեջ մղված պայքարը նշանավորեց մի նոր աստիճան այդ պայքարի պատմության մեջ:

Գորկու պաշտպանության գործը դվամավորել են մարքահստական մտքի առաջին հայ ներկայացուցիչները:

Գորկու զրամատուրդիայի բնմական պատմության առաջին էջերը կապված են հայ թատրոնի դերասանական նոր սերնդի, ընդհանրապես այն առաջավոր դեմքերի անվան հետ, որոնք, համակված լինելով Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի արագիցիաները հայ իրականության մեջ ընդերելու գաղափարով, իրենց եռանդուն և նվիրված գործունեությամբ քիմական արվեստի զարգացման նոր հորիզոններ էին գծում:

Գորկու զրամատուրդիայի համար մղված պայքարը հայ թատրոնի հասարակական-քաղաքական դժի համար մղվող պայքար էր: Հայ թատրոնի բոլոր խոշոր նվաճումները կապված են հասարակական-մերկացնող ուղղության հետ, որը վտանգի տակ էր ուսակցիայի տարիներին: «Հատակումի» բհմագրությամբ գորկիական տրադիցիայի հիմքը դրվեց, որ ամենից առաջ նշանակում էր ուսակցմի պահպանում: Իսկ այդ էլ, հասարակական կյանքի այս նոր շրջանում, նշանակում էր մեղադրական մի ահեղ դատավճիռ կապիտալիստական հասարակարգին, որը ճգմում էր մարդկանց, նետում նրանց փոսը, աղջակալում նրանց հոգիները: «Գորկին անխնա ճըշմարտացիությամբ ցուցը էր տալիս, որ տիրապետող դաստիարակերպ բարեկարգ, կուշտ ու զարդարում կյանքի կողքին գոյցություն ուներ այդ հասարակությունից անխուսափելիորեն

ծնունդ առած՝ լիակատար աղքատության, անհուն տան-
չանքների սոսկալի աշխարհը, աշխարհն այն մարդկանց,
որոնք գրված են ծայր աստիճան անմարդկային պայմաննե-
րում — նրանցից խլված է պատիվը, մարդկային արժանա-
պատվությունը, սիրո, մայրության, ընտանիքի հնարավո-
րությունը, ամեն տիսակ հավատ և հույս. ամեն ինչ ոտնա-
տակ է արված, ցեխին հավասարեցված»:

Սակայն գորկիական տրաղիցիան նշանակում էր ոչ
միայն մերկացնել, ցույց տալ, թե կապիտալիզմն ինչպես է
մարդկանց այլանդակում, այլև փառաբանել մարդուն, բարձ-
րացնել մարդկային արժանապատվությունը, նրա գովքն անել
ընդգեմ կարեկցության, հայ բեմից հնչեցնել ճշմարտության,
աղատության հպարտ երգը:

«ԿԵՆԴԱՆԻ ԴԻԱԿԻ» ԲԵՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1

Ծուսական դրամատուրգիայի բեմական տրադիցիան հայ թատրոնում շատ հարուստ պատմություն ունի:

Դեռ անցյալ դարի 60-ական թվականներից սկսած՝ ուստի դրամատուրգների աշխատ ընկնող երկերը խաղացվել են հայ թատրոնում։ Առաջին ուստի դրամատուրգը, որ մուտք է գործել հայ թատրոն՝ Օստրովսկին էր։ Օստրովսկուց հետո բեմ բարձրացան Սովորվո-Կորիլինի, Գրիբոյեդովի, Գոգոլի, Լեռմոնտովի և ուրիշների պիեսները։ Մի խոսքով՝ չկա ուստի ականավոր մի դրամատուրգ, սկսած Ֆոնվիզինից մինչև Տուրգենևը, Լեռմոնտովից մինչև Չեխովն ու Գորկին, որ խաղացված չինի հայ բեմում։

Ծուսական դրամատուրգիան հայ թատրոնի առաջավոր գործիշներին՝ դրամատուրգներին ու դերասաններին կողմնորոշել է դեպի ռհաղիզմ, դեպի քննադատական վերաբերմունք իրականության հանդեպ, կոչել հումանիստական իդեալների պաշտպանության, կոչել միշտ բարձր պահելու թատրոնի հասարակական-կրթական դերը։

Ծուսական դրամատուրգիայի պրոգրեսիվ նշանակությունը հայ թատրոնի առաջխաղացման գործում՝ անկասկած է։ Դրա համար էլ հայ դեմոկրատական թատրոնի պահաժառական հակառակորդներն իրենց սլաքներն ուղղում են հայ

ոեալիստ դրամատուրգների հետ միասին՝ նաև հայ թատրոն մուտք գործող ոռու նշանավոր հեղինակների դեմ:

Զափազանց բնորոշ է այն պայքարը, որ «Հայկական Աշխարհ» էջերից ոեակցիոն-պահպանողական քննադատությունը ծալվակց ոչ միայն Սունդովկյանի և Միքայել Տեր-Գրիգորյանի, այլև Օստրովսկու ու Սովոսովո-Կորիլինի դեմ: Չի կարելի ասել, թե ոռու դրամատուրգների գեմ ոեակցիոն ուժերի մղած պայքարն ավարտվում է այն ամոթալի պարտությամբ, որ նրանք կրեցին Օստրովսկու և Սովոսովո-Կորիլինի առնչությամբ՝ 60-ական թվականներին: Այս պայքարը շարունակվել է նաև հետագայում: Նման մի պայքար էլ 80-ական թվականներին ծավալվել է Գրիգորյենովի անմահ կոմեդիայի շուրջը: Ավելի ուշ, արդեն 900-ական թվականներին՝ հայ թատրոնի և դրականության դեմոկրատական գործիչները պայքարում են Գորկու դրամատուրգիայի համար:

Ուրեմն, ինչպես հայ թատրոնի պատմության փասոերն են վկայում, այդ պայքարը երբեք շի դադարել, տարբեր ձեռք է ընդունել այն, երբեմն բացահայտ, երբեմն քողարկված, բայց անընդհատ եղել է, որովհետեւ ոռւսական դրամատուրգիան միշտ էլ հայ թատրոնի կյանքում կաղմել է նրա գործունեության առողջ, զարգացող, առաջ մղող ազդակներից մեկը:

Հայ թատրոնի կապը ոռւսական դրամատուրգիայի հետ օրդանական է եղել: Հայ թեմի վարպետներն ու գործիչները սիրել ու պրոպագանդել են հայ իրականության մեջ ոռւսական թատրոնի առողջ տրադիցիաները, ոռւսական դրամատուրգիայի առաջավոր և լավագույն արժեքները:

Այս բոլորից հետո հարց է ծագում: Կարո՞ղ էր պատահել, որ հայ թատերական աշխարհն անտարբեր գտնվեր մի այնպիսի մեծ զրողի դրամատուրգիական ժառանգության նկատմամբ, ինչպիսին կե նիկուսիկը Տոլստոյն է:

Իհարկե, չէր կարող:

Ոռու թատրոնի և դրամատուրգիայի նկատմամբ հանդես

բերված սերն ու հետաքրքրությունը մեզանում տարեցտարի այնքան է աճել, այնպես ամրապնդվել, ոռուական դրաժառագրի առաջնայի արժեկանութիւնը ընդունակ շրջանակն հետզհետե այնպիս է լայնացել, որ շատ տարօրինակ և արտառող կլիներ, եթե հայ մամուկն ու թատրոնը շանդրադառնային ոռու մեծ գրողի դրամատուրգիային:

Չնայած դրան, Տոլստոյի դրամատուրգիան հայ իրականության մեջ ուշ է ճանապարհ գտել դեպի բեմ, և ընդհանրապես Տոլստոյը մեզնում ուշ է գիտակցվել որպես դրամատուրգ, որպես դրամատիկական դրականության մի եղակի ու հզոր ներկայացուցիչ:

Դրա պատճառներից մեկն այն է, որ ցարական դրաբենն ու թյունը, շատ լավ հասկանալով Տոլստոյի գրչի հասարակական մերկացնող ուժը, ամեն կերպ խոշընդուռում էր նրա պիեսների բեմադրությանը: «Խավարի իշխանությունը» և «Էռուսավորության պտուղները» մի քանի տարի շարունակ արգելքի տակ են եղել, իսկ գավառներում և երկրի ծայրամասերում, ինչպես Անդրկովկասն էր, երկար ժամանակ չէր թույլատըրվում այդ պիեսների բեմադրությունը:

Հայկական մամուկում, առանձնապես «Մշակ» լրագրում լույս են տեսնել հոդվածներ Տոլստոյի՝ «Խավարի իշխանություն» և «Էռուսավորության պտուղներ» պիեսների մասին: Դրանք, ինչպես և «Հարություն» ու «Աննա Կարենինա» վեպերի բեմականացման մասին մեր մամուկում զրկել է այն ներկայացումների կապակցությամբ, որ կազմակերպել են տեղական ոռուական թատերախմբերը կամ Ռուսաստանից եկած, հատկապես Մոսկվայի Փոքր թատրոնի դերասանները Պրավդինի դեկալաբությամբ:

Այդ հոդվածները մեծ մասամբ նվիրված են վերոհիշված պիեսների գաղափարական բովանդակության բացահայտմանը: Հոդվածներն իրենց առաջ նպատակ են դրել ծանոթացնել հայ ընթերցող հասարակայնությանը մեծ գրողի պիեսներին, մանավանդ որ «Խավարի իշխանությունը» բավականաշատ

ազգմուկ էր հանել և «որի մասին թե Եվրոպայում և թե Ռուսաստանում մի աշաղին գրականություն էր կազմվել»¹, որովհետեւ այն մի կողմից «առաջ բերեց սքանչացում, գովասանք, իրու մի մեծ դեղարվեստական արտահայտություն և փիլիսոփայական ու հոգեբանական խոր մտքեր պարունակող գործ»², իսկ մյուս կողմից՝ հայտարարվեց՝ «ոչ-հայրենասիրական... նույնիսկ իրականության որևէ հիմք ըստվանդակող ստեղծագործություն», «սաստիկ դատապարտություն», որի համար «զբրգածքը իրկար ժամանակ արգելվեց ոչ միայն ներկայացման, այլև ընթերցման համար»³:

Արձագանքելով «Լուսավորության պառազներին», «Մշակը» պրում է. «Տուլստոյի «Պլоды просвещения» պիեսը՝ մի բարդ, զրամատիկական կատարելություններ ունեցող զրամադք չէ, այլ մի պարզ, անպաճուցք պատկեր, որը գեղարվեստական ճշտությունը ներկայացնում է ուստաց հասարակության կյանքը՝ իր բոլոր կողմերով»⁴: Հոգվածազրին ամենից ավելի զրադեցրել է պիեսի քննադատական սպին: Նու ասում է. «Դուք տեսնում եք ձեր առաջ ծովովրդի արյուն-քրտինքով ապրող ուս կալվածատիրոջ, անսնում եք՝ ոչինչ զործ ու զրազմունք շունեցող երիտասարդություն, որի ամենամեծ իդեալը՝ «վեհագութեական» և «շնորհական» հն, տեսնում եք արիստոկրատ օրիորդներ, որոնց օրվա մտածնունքը՝ «կուպլեաներ երգել ու լսելն է», տեսնում եք՝ զղոտ, հիվանդոտ, բարոյապես և մոավորապես թուլացած, քայլայված ուս արիստոկրատ կնոջ, տեսնում եք, թե ինչպես քաղաքային հեշտասեր կյանքը կլանում և ապականում է զյուղական թարմ տարրը, տեսնում եք, թե ինչպես լուսավորված մարդկանց մի աշաղին լիզիոն, բան ու դործ թողած, առավոտից մինչև երեկո, խելագարվածի նժոն, զրազված են հիպոտիզմի սեանսներով, տեսնում եք վերջա-

¹ «Մշակ», 1895, № 143:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ «Մշակ», 1892, № 2:

պես ոռւս գյուղացուն իր խորին տգիտությամբ, իր ամբողջ աղքատությամբ, և տեսնելով այդ բոլորը, զուր քիչ է մնում, որ արտասլեք, հիշելով, որ այդ բոլորը բացառություններ չեն, այլ իրականության ընդհանուր պատկեր...»^{1:}

Հոդվածագրերը ընդհանուր առմամբ ճիշտ վեր հանելով Տոլստոյի պիեսների մերկացնող ոգին, ճիշտ գնահատելով պիեսների մեջ պատկերված իրականությունը, տիպերը, միաժամանակ բանավեճ են մղել նրանց սխալ ըմբռնման դեմ: Այսպես, օրինակ, «Ուսավորության պտուղների» կապակցությամբ հաճախ է զրվել, թե իրր Տոլստոյը հանդես է եկել լուսավորության դեմ: «Մշակիր» հոդվածագրին ասում է: «Նա զգվանք է հարուցանում ոչ թե լուսավորության դեմ, այլ միայն կեղծ, շինծու, շհասկացող լուսավորության դեմ»^{2:}

Մամուլը մասնավորապես շեշտել է Տոլստոյի պիեսներից ազդեցությունը, այն ակտիվ ներգործությունը, որ նրանք ունենում են հանդիսատես հասարակության վրա՝ մղելով նրանց գեղի նոր մտքեր և խորհրդաժություններ, մշակում նրանց մեջ քննադատական վերաբերմունք դեպի իրականությունը: «Մեծ գեղարվեստագետը, — զրում է մի հոդվածագիր, — արժանի է խորին երախտագիտության, որ նա իր գեղարվեստական գրչով կարողանում է այնպես ուժեղ ցնցում պատճռել և ստիպել մտածելու, թե պետք է պատռել այդ խավարը...»^{3:}

Առաջին պիեսը, որ բեմադրվել է Տոլստոյից նախասովետական հայ թատրոնում «Կենդանի դիակ» դրաման էր նար-Դոսի թարգմանությամբ^{4:} «Կենդանի դիակի» բեմադրությունը

1 «Մշակ», 1892, № 2:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, 1895, № 143:

4 «Կենդանի դիակի» հայերեն թարգմանությունը նախ լույս է տեսել «Սուրհանդակի» էջերում, 1911-ին, ապա՝ նույն տարին, առանձին զրքույկով: Ավելարդ չենք համարում հիշատակել, որ «Կենդանի դիակից» մի հատված (Պրոտասովի մենախառությունը քննիչի մոտ) թարգմանել է Գաբրիել Սունդոկյանը թիֆլոսահայ քարքառով (տե՛ս Գաբրիել Սունդոկյանի «Երկերի լիտատար ժողովածուիք» երրորդ հատորի 423—424 և 665—666 էջերը):

Ապարեսությունն է սոտանում որպես թատերական կյանքի մի ժիաստ ոչ միայն նրա համար, որ Տոլստոյի դրամատուրգիայի բնմական պատմությունը հայ թատրոնում սկսվում է նրանով, այլի այն պայքարով, որ ծավալվել է հայ մամուկում այդ բեմադրության շուրջը:

2

«Կենդանի դիակի» սյուժեի հիմքում, ինչպես հայտնի է, ընկած է իրական մի դեպք՝ Գիմեր ամուսինների քրեական գործը:

1900-ին Տոլստոյը սկսում է գրել «Կենդանի դիակը»: Մի առանձին համբաւակությամբ նա աշխատում է պիեսի վրա և նույն տարին էլ ավարտում սեազիր վիճակում: Տոլստոյի դրամատիկական նոր երկի մասին լուրեր են տպագրվում մամուկում, ուր համառոտ կերպով պատմվում է նաև բովանդակությունը: Ահա դրանց հիման վրա էլ նույն տարին, 1900-ին, «Տարազը» լույս է ընծայում մի ընդարձակ հազորդում ուստի մեծ գրադի նոր պիեսի մասին¹: «Տարազի» հոդվածից, որ պրված է պատկառանքի խոր զգացումով դեպի Տոլստոյը, մեծ հետաքրքրությամբ և ակնկալությամբ նրա նոր ստեղծագործության նկատմամբ, երեսում է, որ պիեսն իր վաղ շրջանում, երբ դեռ «Դիակ» էր կոչվում իր սյուժեատային կառուցվածքով տարբեր է եղել նրանից, ինչ որ հիմա մեզ հայտնի է, և որ դորձողության ընթացքով շատ մոտ կյանքում պատահած այն իրադարձություններին, որոնք հիմք են ծառայել սյուժեի կառուցման համար:

Տոլստոյը շարունակում է մշակել պիեսը, փոխել սյուժեի շատ կողմեր, խորանակ հերոսների փոխհարաբերության մեջ, սակայն մի հանդամանք նրան ստիպում է կանգ առնել, այլև շշարունակել աշխատանքը և, ընդհանրապես, հրաժարվել պիեսը երեսէ ավարտելու մտքից:

¹ «Տարազ», 1900, № 48:

Մամուլում հրապարակված նյութերից Տոլստոյի նոր երկիր մասին իմանում է այն կինը, որի կյանքի դեպքերն էին նկատյալ առնված պիեսում։¹ Նա զիմում է Տոլստոյին և խնդրում չհրապարակել պիեսը, որովհետև դա կատիպի իրեն նորից վերապրել մի ժամանակ կրած և արդեն հուշ գարձած հոգեկան տառապանքները, գուցե և պատճառ դառնա դատական նոր գործի հարուցման՝ Տոլստոյը խոստանում է չհրապարակել այն, և, ինչպես տանեցիներն են վկայում, այդ կապակցությամբ ասել է, թե «մարդկային կյանքը թանկ է ամեն տեսակի գլուխածքից»²:

Տոլստոյը մինչև իր կյանքի վերջը ճշտությամբ պահպանեց իր խոսքը, բայց նրա մահից հետո, մի տարի անց, պիեսը հրապարակվում և բեմադրվում է:

Մեծ գրողի երկիր հետմահու հրատարակությունը ահազին ազմուկ առաջացրեց։ Տոլստոյի հանձարի այդ նոր փայլատակումով հիացողների գեմ վիստում էր թշնամարար տրամադրվածների մի խայտաբղետ բազմություն, որ կանգ չէր առնում ոչ մի միջոցի առաջ՝ «Կենդանի դիակը» վարկարեկելու համար։ Գտնվեցին նույնիսկ այնպիսիները, որոնք Տոլստոյին պաշտպանելու անվան տակ, մի առանձին եռանդով ապացուցում էին, թե քա մեծ գրողի հեղինակությունը չէ, որ այդ երկը ժառանգները հրապարակ են հանել շահագիտական նկատումներով³։ Սակայն այդ և նման այլ փորձերը շխանդարեցին, որ Տոլստոյի դրաման շտեսնված չափերով լայն տարածում գտնի։

«Կենդանի դիակի» անդրանիկ բեմադրությունը պատկանում է Մուկվայի Գեղարվեստական թատրոնին։ Դրանից անմիջապես հետո ներկայացվում է բազմաթիվ թատրոններում, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում։ Մի

¹ Л. Н. Толстой. Полное собрание художественных произведений, т. IX, 1929, стр. 470.

² Նույն տեղում:

³ „Кавказ“, 1911, № 234.

միճակագրության համաձայն, Տոլստոյի նոր պիեսը 1912-ի հունվարի 7-ից մինչև նույն թվականի Հոկտեմբերի 15-ը, ուրիշն՝ ընդամենը ինն ու կես ամսվա ընթացքում բեմադրվել է 243 թատրոնում և խաղացվել ինը հազար անգամ¹:

Սա մի աննախընթաց երկույթ է թատրոնի պատմության մեջ:

Տոլստոյի նոր երկի շուրջը աշխույժ հետաքրքրություն է առաջանում նաև Անդրկովկասում, հատկապես Թիֆլիսում: Հայկական և ոռւսական, վրացական և աղբեջանական թերթերը հրապարակում են հոդվածներ, մամուլի էջերում ծավալվում է մտքերի փոխանակություն, դասախոսություններ են կարդացվում, թատրոններն անմիջապես բեմադրում են: Մկրտչում բեմադրում են Թիֆլիսի ոռւսական թատերախմբերը, ապա հայկական և վրացական թատրոնները:

3

«Կենդանի դիակի» հայկական բեմադրության մասին խոսելուց առաջ, կամենում ենք կանգ առնել մի ուշագրավ փաստի վրա, որը, մեր կարծիքով, իր նշանակությունն է ունեցել մեր թատրոնի համար:

Թիֆլիսում, 1911-ին, «Կենդանի դիակի» ոռւսական երկու բեմադրությունից հետո, մինչև հայկական և վրացական ներկայացումները, կազմակերպվում է գրական դատ՝ պիեսի գլխավոր հերոս Պրոտասովի վրա:

Մեղադրյալների խոսքը զրապարտչական բնույթ էր կրում: Պրոտասովին նրանք հայտարարում են պրտաքույժ, անբարոյական, ստախոս², բարոյական ոչնչություն, հանցավոր էգոփամի տեր³, մի խոսքով՝ հասարակության նկատմամբ հան-

¹ Л. Н. Толстой, Собрание сочинений художественных произведений, т. XI, 1952, стр. 386.

² «Մշակ», 1911, № 258:

³ „Կավեզ“, 1911, № 260.

ցավոր անհատ։ Պաշտպանը իր բարձրության վրա չէր. նա Պրոտասովի մեջ տեսնում է քարությամբ հոգեպես մաքրագործվողին¹։ Զնայած վիճաբանությունների բուռն ընթացքին, դատարանի որոշմանը², որ, երկիմաստ լինելով, տուրք էր տալիս և՝ մեղադրողներին, և՝ պաշտպանին, այդ ամբողջ դատն իր լիրերալ ֆրազաբանությամբ այսօր դժվար թե հետաքրքրություն հարուցեր, եթե չլիներ մեղադրյալ Պրոտասովի ելույթը, որի անունից հանդես է եկել ոռու դերասան Ամոլենսկին և որի ճառը տողորված է եղել հասարակական կարգերի քննադատությամբ։ Մամուլը, դժբախտաբար, ոչ միայն լրիվ չի հրապարակել մեղադրյալի ելույթը, այլև, ինչպես երեսում է, կրծատել է ճառի սուր հատվածները։ Այսպես, օրինակ, մի տեղ ճառն ընդհատվում է և «Մշակը» գրում է. «Ամոլենսկին այսողեղ բարվական խիստ ոճով սկսեց մեղադրել բուրժուական, հարուստ, արիստոկրատ խավերին» և այլն³։ Ինչ վերաբերում է «Կավկազին» և «Տիֆլիսսկի լիստովին», ապա նրանք վրդովվելու շափ հուզվել են։ «Կավկազը», որ ցարական կառավարության պաշտոնական թերթն էր Անդրկովկասով և, ինչպես կտեսնենք, խիստ բացասական դիրք էր բոնել Տոլստոյի նոր պիեսի նկատմամբ, վարկարեկիչ գնահատական է տվել Ամոլենսկու ելույթին, ասել է թե՝ «Ամոլենսկու ճառը գլխավորապես հույս ուներ էֆեկտ հարուցել և էժանագին ծափահարություններ շահել»⁴։ Իսկ «Տիֆլիսսկի լիստովի»՝ որ պաշտպանում էր «Կենդանի դիակը» ամեն տեսակի հարձակումներից և, կարելի է ասել, այն ժամանակ Թիֆլիսում լույս տեսնող բոլոր թերթերից համեմատաբար ավելի մոտ էր Պրոտասովի կերպարի ձիշտըմբոնմանը, զայրագին մեղադրում է դատարանի նախադադին, որ ժամանակին չի կանգնեցրել Ամոլենսկուն և կարգի չի հոսվերէլ»⁵։

¹ «Մշակ», 1911, № 258։

² Նույն տեղում, № 259։

³ Նույն տեղում։

⁴ «Կավկազ», 1911, № 260։

⁵ «Տիֆլիսկий листок», 1911, № 26?։

Գաղափարական պայքարի այն փաստերից է սա, երբ Տուստոյի պիեսի դնահատության հարցում հակառակ զիբբերի վրա կանգնած ունակցիոն և լիբերալ թերթերը միավորվել էին իրենց ընդհանուր սոցիալական հակառակորդի՝ գեմոկրատիայի ներկայացուցչի դեմ:

Մենք անհրաժեշտ ենք համարում մի երկու հատված բերել Պրոտասով-Մոլենսկու ճառից:

Այն շրջանում, ինչպես մամովի նյութերի ուսումնասիրությունն է ցուցը տալիս, Պրոտասովի կերպարի շուրջը, զանազան հարցերի հետ միասին, երկու հայացք է բախվել: Քսոմի տեսակետի՝ Պրոտասովը բացասական կերպար է, որովհետեւ հեռացել է տնից ու քննտանիքից, կապվել գնչուների հետ, արբեցողության տվել իրեն, վերջն էլ ինքնասպանություն է գործում: Բանը հասավ այնտեղ, որ Պրոտասովի դատապարտողներից մեկը հայտարարեց, թե «Հենց Ֆեդիայի անձնասպանության մեջ էլ էկոնիտական ներշնչում պետք է նկատել»¹: Այս տեսակետի հիմքը բուրժուական հասարակության օրենքների և բարոյականության պաշտպանությունն էր:

Մյուս տեսակետի կողմանակիցները պաշտպանում են Պրոտասովին, ասելով, թե նա չէ մեղավորը, այլ շրջապատը, նա հեռացել է, որովհետեւ չէր կարող հաշտվել իր միջավայրի հետ, գնչուների հետ է կապվել, որովհետեւ նրանց մեջ տեսնում է հասարակության քարացած օրենքներից ազատ մարդկանց, ինքնասպանություն է գործում, որովհետեւ նրան կամենում են բռնի ուժով վերադարձնել դեպի նախկին անազատ կյանքը:

Ահա այս տեսակետից էլ Մոլենսկին պաշտպանել է Պրոտասովի կերպարը դատի ժամանակ:

Մեղադրյալի ճառը մի կարևոր փաստաթուղթ է, նամանավանդ որ նրա հեղինակը, Մոլենսկին հենց այն դերասանն է, որ Ժողովրդական Տան բեմադրության մեջ հանդես է եկել Պրոտասովի դերակատարումով:

¹ «Մշակու», 1911, № 258:

Այս հանդամանքը կրկնակի հետաքրքրություն է հաղորդում փաստին:

«Դուք զատում եք ինձ,—ասում է նա, խոսքն ուղղելով գաւառվորներին և հասարակությանը,—այն պատճառով, որ իսխիզախ կերպով բարձրացրի այն քողը, վարագույրը, որ ծածկում էր ձեր ամբողջ ստությունը, կեղծիքը, ձեր նեխված կենցաղը... ես ձեզ ներկայացրի ձեր իսկական կերպարանքով, ձեր ոչնչությամբ: ...Ես բողոքեցի եկեղեցական արտաքին անիմաստ ժեսերի գեմ: Եվ երբ դուք այդ կրոնական խղճուկ կանոնների մեջ աշխատեցիք կաղապարել ինձ, երբ ձեր մերկ օրենքներով փորձեցիք ինձ վերստին հետ կանչել կնոջս մոտ ու վերստին ստեղու ստիպել, ո՞չ, այն ժամանակ ես դիմադրեցի և մեռա, որպեսզի ուրիշներին խոշընդոտ լինեմ, որպեսզի ձեր ստրուկ Կարենիններն իրենց հասկացած երջանկությունը վայելին:

Դուք,— շարունակում է մեղադրյալը,— ձեր աշխարհային օրենքներով կաշկանդում եք հավարավոր օրիորդների, շղթայում եք նրանց հոգին ու միտքը, որ միշտ ստեն նրանք, ընկած մնան: Եվ երբ ես ձեր բոլորի երեսին գոռում եմ՝ «ո՛չ, ես չեմ կարող», դուք ինձ ասում եք՝ «ուրեմն», դու պետք է ոչնչանաս»:

Ես չեմ կամենում լսել ձեր դատավճիռը. ես դրանից շատ բարձր եմ, բարձր եմ ձեր սին, պալարու դատավճուց:

Դուք շարունակեցեք ձեր սողալը, ձեր մերկանտիլ, անօդուտ, կեղծավոր կյանքը:

Կզա ժամանակ, որ ինձ կհասկանան»¹:

Սմոլենսկին հանդես է եկել Պրոտասովի պաշտպանությամբ ընդհանրապես և մասնավորապես այն կերպարի, որ ինքն է ստեղծել բեմում: Դա նրա խոսքին հաղորդել է պոլեմիկական ներքին իմաստ. խնդիրն այն է, որ դատից մոտ տասը օր առաջ «Կավկազը» անհաջող համարեց Սմոլենսկու խաղը Պրոտասովի դերում, սխալ՝ նրա մնելնաբանությունը: Օրինակ

քննադատին դուր չի եկել, որ Պրոտասովի մենախոսությունը՝ դատաքննության տեսարանում, գերասանն ասել է «ուժեղ, մի առանձին կրքով ու պաթուով»¹:

Սակայն ծիշա չի լինի կարծել, որ նրա ճառը մնում է այդ շրջանակներում: Ինչպես Պրոտասովի գերակատարությամբ բհմից, այնպես էլ այժմ, գրական դատի ժամանակ, նաև օդուագործում է ամբիոնը՝ հասարակական-մերկացնող խոսք ասելու համար: Հետաքրքիրն այն է, որ նա ոչ թե ընդհանրապես է խոսում ու վերացական դատողություններ անում, այլ, ըստ էության, զարգացնում է այն միտքը, որ իրենք այժմ էլ ապրում են Տոլստոյի նկարագրած հասարակության մեջ: Նա մեղադրում է հասարակությանը, նրա օրենքները, ինչպես ինքն է ասում՝ «ներկա հասարակական կարգերի աննորմալ վիճակը, այդ կարգերի կոսիտ ուժը անհատի հոգու և սրտի վրա»²: Կարենը է նաև այն, որ Ամոլենսկու ըմբռուսմով Պրոտասովը մենում է ոչ թե հուսահատությունից, այլ անհաշտությունից: Նա պարզ ասում է, որ բոլորու կան հասարակության օրենքներին շենթարկվողներին, ինչպես Պրոտասովն է, տիրողները ոչնչացնում են: Դրա համար էլ նա պահանջում է մեղադրյալի աթոռին նստեցնել և՛ իրեն մեղադրողներին, և՛ հասարակությանը³:

Այսպիսով, ուրեմն, Ամոլենսկին իր ճառի ընթացքում՝ մեղադրյալից գարձել է մեղադրող:

«Կենդանի դիակի» հետ կապված բոլոր այս իրադարձությունները, ուստական բեմադրություններից սկսած մինչեւ դասախոսությունները, մամուլի ելույթներն ու գրական դատը, նախորդելով «Կենդանի դիակի» հայկական բեմադրությանը, պարտավորեցրին մեր թատրոնի դործիշներին՝ որոշակի դիրքը բռնել գեպի իրարամերժ տեսակետները և ասել իրենց խոսքը:

¹ „Կավказ“, 1911, № 248.

² «Մշակ», 1911, № 259:

³ „Տիֆլիսский листок“, 1911, № 263.

«Կենդանի դիակի» հայկական առաջին բեմադրությունը առեղի է ունեցել 1912-ի հունվարի 9-ին:

Ներկայացման սեժմատորը Օվի Սևումյանն էր, Պրոտատովի դերակատարը՝ Խաչակի Ալիխանյանը: Այս արձանագրում ենք ոչ այնքան որպես ներկայացման կարևոր փաստերից մեծը, որքան ընդգծելու համար, որ Սևումյանի և Ալիխանյանի անվան հետ այդ բեմադրությունը կապված է ոչ պատահականորեն:

Օվի Սևումյանը մեկն է այն թատերական գործիչներից, որ հայ թատրոնն ամենասերտ կերպով կապված էր համարում ուսուական թատրոնի հետ: Սևումյանը առաջինը չէր, որ այդպիս էր մտածում, սակայն նա առաջիններից էր, որ ձգտում էր հայ իրականության մեջ ընդերել Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի արագիցիաները: Իր թատերական ուսումնառությունն անցնելով Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի զեկավարների՝ Ստանիսլավսկու և Նեմիրովիչ-Դանչենկոյի ձեռքի տակ՝ Սևումյանը հասկացել էր, որ յուրաքանչյուր թատրոն, եթե շահագրգուված է իր ապագա բախտով, պետք է հետեւ Գեղարվեստական թատրոնին, նրա ճանապարհով դնա:

Օվի Սևումյանի ամբողջ կյանքը ոչ այլ ինչ է եղել, բայց եթե պայքար դաշտաբարագուրկ պրոֆեսիոնալիզմի դեմ, շտամպի ու արեմյերականության դեմ, արտաքին էֆեկտի դեմ, հանուն գաղափարապիս հագեցված բեմական ստեղծագործության, հանուն ներդաշնակ, անսամբլային տեսակետից կուռ ներկայացման, հանուն կյանքի ճշմարտության՝ բեմական արվեստում:

Գեղարվեստական թատրոնի հետեւողներից լինելով՝ Սևումյանը պաշտպանում էր ուսուական կլասիկ դրամատուրգիայի տրագիցիան հայ թատրոնում: Նա առանձնապես ոգեվորված էր այն հեղինակներով, որոնք մոտ էին Գեղարվեստական թատրոնին, ինչպես Գորկին, Չեխովը, Տոլստոյը:

Ճիշտ է, նրան շհացողվեց Զեխովը բեմադրել հայ թատրոնում՝ բայց «Հատակումի» և «Կենդանի դիակի» բեմադրությունները նրա անվան հետ են կապված:

Ուրեմն՝ «Կենդանի դիակի» ընտրությունը մի պատահականություն չէր, դա կապված էր թատերական այն ձգտումների հետ, որոնց իրականացման համար պայքարում էր Օվի Սևոմյանը և նրա շուրջը համախմբված դերասանական նոր սերունդը, որին պատկանում էին Խաչակի Ալիխանյանը, Միքայել Մանվելյանը և ուրիշներ: Այդ սերունդը դրոշ ունենալով Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի հաղթանակները, ևսանդ չէր խնայում հայ թատրոնը ճացումից հանելու համար:

Դրա վրա հատուկ ուշադրություն է դարձրել «Կենդանի դիակ» ներկայացման ռեժիսուրից մեկը:

«Մինչև օրս շենք տեսել,— գրում է «Ընկեր» թերթի հոգվածագիրը,— որ մի դերասան պիհսների ընտրության գործում զեկավարվեր հատկապես իդեալական տեսակետով. սովորաբար դերասանները զեկավարվում են գեղարվեստի արտաքին ըմբռնման տեսակետով, նրանք ընտրում են այն տեսակ պիհսներ, որ իրենք շատ «խաղ» ունենան...»¹,

Անդրադառնալով «Կենդանի դիակի» ընտրությանը՝ թերթը դրական գնահատական է տալիս, որովհետև Տոլստոյի դրաման նա համարում է ոչ միայն «բարձրագույն գեղարվեստի մի անգույքական երկ», այլև մի պիհս, որ առաջազրում է էսթետիկական նոր պահանջներ: Մամուլն արձանագրել է, որ էսթետիկական այդ նոր պահանջի զգացողությունը թատրոնի զարգացման տվյալ շրջանում ամենից ավելի հանդես են բերել Օվի Սևոմյանը որպես ռեժիսոր և Խաչակի Ալիխանյանը՝ որպես դերասան: Մամուլը նրանց հայտարարում է հայ բեմի ռեփորմատորներ²: Անշուշտ այսուհեղ որոշ շափականցություն դոյցություն ուներ, հատկապես Ալիխանյանի նկատմամբ, բայց ներկա դեպքում դա չէ կարևորը, որքան այն, որ թատերական:

¹ «Ընկեր», 1912, № 3:

² Նույն աեղում:

առաջավոր հանարակայնությունը ճիշտ է դիտել հայ բնմի գործիչների շրջանում ծնունդ առած առողջ ձգտումները, քաշալերանքի խոսք է ասում, պաշտպան կանգնում նրանց:

«Կենդանի դիմակի» բեմադրությամբ Սևումյանը ոչ միայն ծանոթացրեց հայ հասարակությանը Տոլստոյի դրամատուրգիային, այլև մեծ շափով օգնեց հայ թատրոնին՝ դուրս գալու անհատապաշտական, ֆատալիստական, միստիկական պիեսների ոլորտից, որոնցով հեղեղվել էր բեմը շատ մոտիկ անցյալում՝ ոհակցիայի ազդեցությամբ։

«Կենդանի դիմակի» բեմադրությունն ուներ գաղափարական-սկզբունքային նշանակություն ընդհանրապես, այն ժամանակ՝ մասնավորապես։

Թատրոնի խաղացանկում բավական լայն տեղ գրավող անկումային դրամատուրգիան գումարարդված էր ներկայացնում բուրժուա-կալվածատիրական կյանքը, փառաբանում բուրժուական բարոյական բարոյականությունը, քաղաքաբարը։ Ուստի մի այնպիսի պիեսի բեմադրություն, ինչպիսին «Կենդանի դիմակն» է, ուր Տոլստոյը հանդես է գալիս որպես մի ամբողջ հասարակարգի մեղադրող, ուր մեծ ոհալիստը ցուց է տալիս, թե որքան ծանր, անմարդկային ու դաժան են ժամանակակից կարգերը նույնիսկ արտոնյալ խավերի ներկայացուցիչների համար, եթե նրանք համարձակվում են բախման մեջ մտնել նրանց հետ, շաշտվել, բողոքել՝ իրենց էությամբ մարդու բնական զգացողությանն ու ձգտումներին հակառակ բուրժուական հասարակության օրենքների դեմ, ահա այդպիսի պիեսի բեմադրությունը, իհարկե, գաղափարական խոշոր երկույթ էր հայ թատրոնի կյանքում։

Վ. Ի. Լենինի այն միտքը, թե «Տոլստոյը հսկայական ուժով ու անկեղծությամբ խարազանել է իշխող դասակարգերին, մեծ աինառությամբ մերկացրել է այն բոլոր հաստատությունների ներքին կեղծիքը, որոնց օգնությամբ պահպանվում է ժամանակակից հասարակությունը՝ եկեղեցին, դատարանը,

միլիտարիզմը, «օքինական» ամուսնությունը, բռոքուական գիտությունը¹, — ամբողջապես վերաբերում է նաև մեծ գրողի դրամատուրգիային և հատկապես «Կենդանի դիակին»:

Մենք չենք ուզում կարծել, որ Սևումյանն ու Ալիխանյանը, նրանց հետ միասին բեմադրության մեջ զբաղված գերասանները պիեսի գաղափարական բովանդակությունն ըմբռնել են այսպիսի խորությամբ: Սակայն այն հանգամանքը, որ նրանք բեմադրել են Տոլստոյի պիեսը և, ըստ որում, ինչպես քիչ հետո կտեսնենք, բեմադրել են հակառակ բուրժուական այն շրջանների, որոնք ճնշող ազդեցություն ունենին մամուլի, գրականության ու թատրոնի վրա, ինքնին արդին մի խիզախ քայլ էր, հասարակական հանդգնություն, նաև անավանդ, որ դա համարավորություն էր տալիս թատրոնի առաջավոր դործիներին՝ նոր աշխատություն շարունակել պայքարը ռեալիզմի պահպանման համար, վերակենդանացնել հասարակական-մերկացնող ուղղությունը: Իսկ ռեալիզմի ամեն մի աշխատացում այդ շրջանում, ինչպես զրել է «Պրավդան» 1914-ին «Մեալիզմի վերածնունդը» հոդվածում՝ արտահայտում էր «հասարակական ուժերի նոր տեղաշարժ, հասարակության դեմոկրատական շրջանների վերադարձը դեպի կյանք»²:

5

«Կենդանի դիակի» բեմադրության մեջ հանդես են եկել Հայ բինի ամենալավագույն ուժերը. Ֆեոդա Պրոտասովի դերը կատարում էր, ինչպես ասացինք, իսահակ Ալիխանյանը, Լիզայինը՝ Օլգա Մայսուրյանը, Վիկտոր Կարենինի դերը ինքը՝ Շևումյանը: Կարենինի մոր դերը ստանձնել էր Սիրանույշը, իսկ Հովհաննես Արելյանը խաղում էր իշխան Արքեզ-

¹ Վ. Ի. Ենին, Երկեր, հատ. 16, 1950, էջ 461:

² „Дооктябрская „Правда“ об искусстве и литературе“, 1937, էջ 16: Այս շատ արժեքավոր հոդվածը, որ լույս է տեսել ծածկանվամբ, ինչպես այժմ պարզվում է, զրել է Արտաշես Կարինյանը:

կով։ Ներկայացմանը մասնակցում էին նաև Միքայել Մանելի Ավագանը, Զարելը, Ժամանելը, Արշակ Հարությունյանը, Գրիգոր Ավետյանը և ուրիշներ։

Խմբում շունենալով մի այնպիսի դերասանուչի, որ արտաքին ու ներքին տվյալներով համապատասխան լիներ Մաշայի համար, բայց միաժամանակ վոկալ հնարավորություններ ունենար և կարողանար կատարել այնպիսի ուրույն երգեր, ինչպես գնչուականն են, Սևումյանը հրավիրում է Յուլիաննա Սպենդիարյանին, որը թատերասեր լինելով՝ ոչ բեմական վարժություն ուներ և ոչ էլ պրոֆեսիոնալ մեծ բեմերում հանդես գալու փորձ։ Այս վտանգավոր ձեռնարկությունը կատարելիս՝ ռեժիսորը ամենայն հավանականությամբ ելել է այն բանից, որ Մաշայի երգը ոչ միայն գնչուական կոլորիտի ստեղծման իմաստով էր կարեւոր, այլև նրա ու Պրոտասովի փոխհարաբերության բացահայտման, որի համար անհրաժեշտ էր, որ երգեր ինքը, Մաշայի դերակատարը և ոչ թե մի ուրիշը նրա փոխարեն, ինչպես հաճախ լինում էր թատրոնում։ Ռեժիսորի այս համարձակ փորձը դրական արդյունք տվեց։ Մամուն անդրադարձել է Սպենդիարյանի հաջողությանը, ասելով, որ նա աշքի է ընկել ոչ միայն երգելով, հատկապես երկրորդ պատկերում, այլև խաղով, առանձնապես այն տեսարանում, երբ համոզում է Պրոտասովին՝ կյանքին վերջ շտալայսուղ, ինչպես մամուն է զրել, նա արտահայտում էր «և» սեր, և՝ կամք, և՝ արիություն»¹։

Ուշադրության արժանի է և այն, որ, չնայած Աբելյանի մասնակցությանը, գլխավոր հերոսի դերը կատարել է Ալիսանյանը, որը նոր դեմք չէր թատրոնում և առանձին սեր ուներ դեպի ոռւսական դրամատուրգիան ու իր ունեցած հըռշակի համար ավելի շատ պարտական էր այնպիսի ոռւսական կերպարների ստեղծմանը, ինչպես Ֆեոդոր Իվանովիչ արքան, և լեստակովը, Նիկոնամովը և այն։ Թե ինչպես է Ալիսանյանը

¹ «Մշակ», 1912, № 5,

Ապատարել Պրոտասովի դերը՝ քիչ հետո կտեսնենք, սակայն մամուլը, հատկապես «Ընկեր» թերթը, որը ողջունել է նրա Պրոտասովը, միաժամանակ ցանկություն է հայտնել Արելյանին էլ տեսնել նույն դերում: «Մենք կուզենայինք, — գրում է թերթը, — Արելյանին ևս տեսնել Պրոտասովի դերում, տեսնել նրան տառապող մարդկության հիվանդու ներկայացուցչ՝ դերում»¹: Արելյանի խաղը, իհարկե, խոշոր երեսությ կլիներ մեր թատրոնի կյանքում, նաև անավանդություն որ նա կկարողանար բոլորուին այլ կյանք հաղորդել կերպարին և ընդգրկել այն մի այնպիսի խորությամբ, որը, իհարկե, անմատշելի էր Ավելյանյանի համար:

«Կենդանի դիմակը» այն ներկայացումներից էր նախասովելիտական հայ թատրոնում, ուր բեմի այնպիսի մեծ վարպետներ, ինչպես Արելյանը և Սիրանուցը, հանդես էին գալիս փոքրիկ, երկրորդական դերերում: Արելյանի բեմական կյանքում նման դեպքեր էին են եղել, օրինակ՝ Վրթանես Փափազյանի «Ժայռում» Գրիգոր-աղայի փոխարեն հանձն է առել գյուղացիներից մեկի շատ փոքրիկ դերը: Սիրանուցի կյանքում դա, գոնե այդ ժամանակ, մի եղակի նորություն էր: Այսպիսով, Սիրանուցն ու Արելյանը, որոնք անառարկելի հեղինակություններ էին թատերական աշխարհում, իրենց այդ խաղերով հաստատում էին շշեպկինյան հայտնի ճշմարտությունը, թիշկան լավ և վատ դերեր, այլ կան լավ և վատ դերասաններ: Օրինակ՝ «Տիֆլիսսկի լիստովկը» Սիրանուցի խաղի մասին գրել է: «Այդ երեկո առանձնապես փայլեց տիկին Սիրանուցը»², իսկ Արելյանի մասին «Ընկեր» թերթը գրել է: «Կենդանի դիմակի» մեջ Արելյանը կատարում էր մի աննշան դեր, բայց կատարում էր այնպիսի մեծ ըմբռնողությամբ ու վարպետությամբ, որ ուղղակի զմայլվում էր մեր սիրացը»³:

Անհրաժեշտ հնք համարում ասել, որ մի այնպիսի էպի-

¹ «Ընկեր», 1912, № 3:

² „Тифлисский листок“, 1912, № 8.

³ «Ընկեր», 1912, № 3:

զղոդիկ դեր, ինչպիսին ծեր գնչուի կերպարն է, ոեժիսորը հանձնարարել է Արշակ Հարռովյունյանի նման հմուտ և փորձաված դերասանի: Նույնը կարելի է ասել նաև Պետուշկովի դերակատար Գրիգոր Ավետյանի և Աննա Պավլովնայի դերը կատարող Զաբելի մասին: Երեքն էլ արդեն անուն հանած դերասաններ էին և մի շարք բեմական հաջողովյունների հեղինակ: Սեումյանը շատ լավ հասկանում էր, որ իրենց վարպետությամբ նրանք կկարողանան աննշան դերերը կենդանացնելու ստեղծել, թեև փոքր, բայց մի-մի ամբողջական պատկերով ուժիւմ սիմեոնը չէր սիմեոնը: Երիտասարդ, համեմատաբար ավելի քիչ փորձ ունեցող դերասաններին, ինչպես Մանվելյանն էր և Ժառանինը, հանձնված էին փոքր դերեր (քննիչ, Սաշա) այնպիսի հնարավորությամբ, որ կարողանան դրսենորել իրենց և ետ շման վարպետ խաղընկերներից: Վարպետների խաղի հետ միասին մամուկը նշել է երիտասարդների հաջողովյունը, հատուկ նշված է, որ Մանվելյանը կարողացել է ստիպական գծեր գտնել կերպարի համար: Իսկ ժամանենի մասին ասված է, որ Սաշան այնքան էլ փոքր դեր չէր երիտասարդ դերասանուհու համար, բայց նա առանձնապես ուշադրություն գրավեց Ֆեղյայի հետ ունեցած տեսարանում, որովհետեւ կարողացավ համապատասխան հուղական տրամադրություն առաջացնել:

Այս փաստերը վկայում ու հաստատում են, որ Սեումյանն ամեն ինչ արել է, որ ներկայացման մեջ ոչ մի կերպար, որքան էլ այն աննշան լինի, չկորչի և իրեն վերապահված շափով նպաստի մյուս կերպարների, նրանց փոխհարաբերությունների ճիշտ ու կենդանի բացահայտմանը, ընդհանրապես բեմադրության ամբողջացմանը: Այլ կերպ ասած՝ Սեումյանը ձգտել է անսամբլային ներկայացում ստեղծել և, իհարկե, հասել է իր հետապնդած նպատակին:

Կերպարների արտաքին բեմանկարը լուծելիս՝ Սեումյանը, որպես ներկայացման ոհմանը, աշքի առաջ է ունեցել Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի փորձը: Դա, անկասկած,

դրական քայլ է, նամանավանդ որ մեխանիկական ընդօրինակման բնույթ չէր կրում, այլ ընդհանրապես Գեղարվեստական թատրոնին հետևելու, նրա փորձը հայ իրականության մեջ տեղափոխելու առողջ ձգտում ու ցանկություն։ Եվ այն կշտամբանքը, որ այդ կապակցությամբ մամուլում¹ հայտնվել է, աղքային սահմանափակվածության արտահայտություն էր և նպատակ ուներ, անկախ և ինքնուրույն զարգացման անվան տակ՝ դիմադրել Գեղարվեստական թատրոնի բարերար աղդեցությանը հայ թատրոնի վրա։

Մամուլն առանձնապես շեշտել է, որ, ի տարրերություն հայկական այլ ներկայացումների, գերասաններն այս անդամ աշքի են ընկել կերպարների խոր և հիմնավոր ուսումնասիրությամբ։

Ինչպես է Սևումյանը լուսաբանել *Տուստոյի պիեսը*, ի՞նչ ինդիրներ է դրել իր առաջ՝ որպես բեմադրության հեղինակ։ Այս մասին, դժբախտափար, շատ նյութ չի պահպանվել։ Այսքանը միայն կարելի է ասել, որ Սևումյանը և նրա հետ միասին Պրոտասովի դերակատար Իսահակ Ալիխանյանը փորձ են արել մի փոքր այլ կերպ մեկնաբանել գլխավոր հերոսի կերպարը, քան այն ժամանակ ընդունված էր նյութերի ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ այդ շրջանի բեմադրությունների մեծ մասում շեշտավել է Պրոտասովի բարոյական անկման թեման։ Ալիխանյանի Պրոտասովը, գրում է «Մշակը», «Հէ գործում ընկած-կորածի տպավորություն»²։ Այսուհետև «Մշակը» դրում է. «Մի քանի տեսաբաններում նա ուժեղ և տպավորիչ կերպով ուղղագծեց անկեղծ, ազնվասիրտ, բայց դժբախտացած Ֆեղային։ Ընդհանրապես Ալիխանյանը, — շարունակում է թերթը, — ներկայացնում է Ֆեղային ավելի լուրջ, ավելի գուստ և ավելի խորամիտ»³։ Նույնը հաստատում էն նաև դրույթը թերթիր։ Օրինակ՝ «Սուրհանդակը» գրում է. «Նրա ներ-

¹ «Հորիզոն», 1912, № 5:

² «Մշակ», 1912, № 5:

³ Նույն տեղում։

կայացրած Ֆեդյան ավելի շուտ շափազանց մտածող ու մելանխոլիկ տիպ էր»¹:

Սակայն տարբերությունն այն է, որ «Մշակը» հիմնականում դրական է գնահատել դերասանի մոտեցումը, իսկ «Սուրճանդակը», ընդհակառակը, դժուճ է: Վերջինս քննադատում է Ալիխանյանին, որ չի տվել «գինեմոլի, վայրենի սիրո ծառավ, այլանդակ մարդու տիպը»²:

Միթե այժմ պարզ չէ, թե ինչու Ալիխանյանի Պրոտասովը չի գոհացրել «Սուրճանդակի» քննադատին: Քննադատի կարծիքով Պրոտասովը գինեմոլ է, այնինչ դերասանը ներկայացրել է նրան մտածող, քննադատի կարծիքով նա այլանդակ մարդ է, ցեխի և ապականության մեջ ընկած, այնինչ դերասանը ներկայացրել է աղմվասիրտ, բայց դժբախտ անձնավորություն:

Ալիխանյանը քննադատին չի բավարարել ոչ թե նրա համար, որ իսկապես վատ է խաղացել, այլ որովհետեւ դերասանն այնպես չի ներկայացրել կերպարն այդ տեսարաններում, ինչպես ինքն է պատկերացնում: Թիեւ միաժամանակ պետք է նկատել, որ «Սուրճանդակի» արտահայտած կարծիքը Պրոտասովի գրական կերպարի վերաբերյալ բավական հակասական է: Մի կողմից նա նրան «արբեցության ու զեխս կյանքի», անձնատուր եղած մի այլանդակ մարդ է համարում, մյուս կողմից այն ճիշտ միտքն է հայտնում, թե նա «մի ամբողջացրած վրեժինդրություն է ժամանակակից կարգերի և օրենքների դեմ»³:

Այսպիսով, ուրեմն, ոեթիսորը և դերասանը հակադրվել են Պրոտասովին զատապարտողներին, մարդկացին տառապանք են տեսել նրա ողբերդության մեջ և պաշտպան կանգնել նրա հոգու տանջալից արտահայտություններին:

Այսպիսի լուսաբանությունը մենք համարում ենք ոչ-պա-

¹ «Սուրճանդակ», 1912, № 481:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

կայացրած Ֆեղյան ավելի շուտ չափազանց մտածող ու ժեւանխողիկ տիպ էր»¹:

Սակայն տարբերությունն այն է, որ «Մշակը» հիմնականում դրական է գնահատել դերասանի մոտեցումը, իսկ «Սուրհանդակը», ընդհակառակը, դժգոհ է: Վերջինս քննադատում է Ալիխանյանին, որ չի տվել «գինեմոլի», վայրենի սիրո ծարպվ, այլանդակ մարդու տիպը»²:

Մի՞թե այժմ պարզ չէ, թե ինչու Ալիխանյանի Պրոտասովը չի գոհացրել «Սուրհանդակի» քննադատին: Քննադատի կարծիքով Պրոտասովը գինեմոլ է, այնինչ դերասանը ներկայացրել է նրան մտածող, քննադատի կարծիքով նա այլանդակ մարդ է, ցեխի և ապականության մեջ ընկած, այնինչ դերասանը ներկայացրել է ազնվասիրտ, բայց դժբախտ անձնավորություն:

Ալիխանյանը քննադատին չի բավարարել ոչ թե նրա համար, որ իսկապես վատ է խաղացել, այլ որովհետեւ դերասանն այնպես շի ներկայացրել կերպարն այդ տեսարաններում, ինչպես ինքն է պատկերացնում: Թեև միաժամանակ պետք է նկատել, որ «Սուրհանդակի» արտահայտած կարծիքը Պրոտասովի գրական կերպարի վերաբերյալ բավական հակասական է: Մի կողմից նա նրան «արբեցության ու զեխ կյանքի», անձնատուր եղած մի այլանդակ մարդ է համարում, մյուս կողմից այն ճիշտ միտքն է հայտնում, թե նա «մի ամբողջացրած վրեժինդրություն և ժամանակակից կարգերի և օրինքների դեմք»³:

Այսպիսով, ուրեմն, ոեժիսորը և դերասանը հակադրվել են Պրոտասովին դատապարտողներին, մարդկային տառապանք են տեսել նրա ողբերդության մեջ և պաշտպան կանգնել նրա հոգու տանջալից արտահայտություններին:

Այսպիսի լուսաբանությունը մենք համարում ենք ոչ-պա-

¹ «Սուրհանդակ», 1912, № 481:

² Նույն աեղում:

³ Նույն աեղում:

Խոհականը: Դա, անկասկած, առողջ հիմք էր՝ կերպարը ճիշտ և հետաքրքիր ներկայացնելու համար: Երկի դրանով պետք է բացատրել, որ մի երկու թերթ դժբահել են Ալիխանյանի խաղի առաջին մասից, մի թերթ, օրինակ, պարզ գրում է. «Նա մինչև դիակ դառնալը հաջող չեր խաղում»¹: Դերասանը ճիշտ է վարվել, որ, ասենք, գնչուական տեսարանում շատ շի ոգեսրպվել օղու բաժակներ դատարկելով, այլ ներկայացրել է Պրոտասովին որպես մի մարդ, որ հոգու դառնությունից ոչ այնքան իրեն ազդեցության ու զեխ կյանքի է տվել, որքան այդ ոգախ շրջապատում տիսուր ու տրտում, անձնատուր եղած իր խոհերին, կամնում է հասկանալ կյանքը: Սակայան միաժամանակ չենք կարող շնչամաճայնել քննադատի հետ, թե «դատական քննիչի երեսին նետած խոսքերը պիտի արտասանվեին բողոքողի ավելի բուռն շեշտերով»²:

Զպետք է երբեք մոռացության տալ, որ Պրոտասովի կերպարը հայ թատրոնում բեմական մարմնացումն է գտել մի այնպիսի ժամանակ, երբ հասարակական կյանքը նոր-նոր միայն թոթափում էր ունակցիայի մղձավանշը իր վրայից:

«Ընկեր» թերթի հոդվածագիրը ներկայացման թողած ընդհանուր տպավորությանն անդրադառնալով՝ գրել է, թե պարտերում բազմած «հասարակությունը մի առանձին ախորժակ չեր զգում պիեսից»: Հոդվածում ակնարկվում են նաև «զեկավար ինտելիգենցիայի ներկայացուցիչները»³: Պարզ է, որ Հոդվածի հեղինակը նկատի ունի բուրժուական ինտելիգենցիային:

Ինչպես ուսւական իրականության մեջ, այնպես էլ մեղնում, Տուլստոյի պիեսն ուներ դադափարական հակառակորդներ:

«Կենդանի դիակի» բեմադրության դեմ հանդես եկավ «Հորիզոն» թերթը: Նա ծաղրում էր «Կենդանի դիակի» բեմա-

¹ «Մուրհանգակ», 1912, № 481:

² Նույն տեղում:

³ «Ընկեր», 1912, № 3:

պրովիլյան նախաձեռնությունն ու նրա հեղինակներին, մեղադրում նրանց սնորբիզմի մեջ:

«Ինչպես կարելի է չհետևել ուրիշների օրինակին և շանել այն, ինչ որ անում է ամբողջ աշխարհը, — գրում է հեղնանքով թերթը: — Լրագրերն ամեն օր հաղորդում են, թե Տոլստոյի «Կենդանի դիակը» ներկայացվում է այստեղ, այնտեղ, և ամեն տեղ, կարելի՝ է, որ հայերը հետ մնան: Եթե նրանք ևս շթարգանեն և չներկայացնեն աշխարհահռչակ հեղինակի գործը, ո՞վ նրանց կհամարի «կուլտուրական ազգ»¹:

«Հորիզոնը» Տոլստոյի դրաման հայտարարում է «անկատար և միանգամայն թույլ պիես», նրա շուրջը ստեղծված աղմուկը՝ «կեղծ մինուլորտ, պարապ մարդկանց զբաղմունք, որտնք սիրեցրին ու մեծացրին մի գործ, որ եթե լիներ մի անհայտ գրողի արտադրություն, պիտի դատապարտվեր մահվան՝ իր ծնվելու առաջին օրն իսկ»²:

«Հորիզոնը» մենակ չէր: Նրա հետ և նրանից առաջ «Կենդանի դիակը» ոչնչացնելու հանդուգն փորձով հանդես էր եկել նաև «Կավկազը»: Օրինակ, անդրադառնալով «Կենդանի դիակի» բեմադրությանը ուսական թատրոնում, նա զայրացած դարմանքով գրում է, թե ինչո՞ւ «նորից հարություն է առել մի շարաթ առաջ թաղված դիակը»³:

Եվ նույն «Կավկազը», իբր թե վեճ է մղում նրանց գեմ, ովքեր ասում են, թե «Կենդանի դիակը» Տոլստոյը չի գրել, կաշվից դուրս է գալիս հաստատելու համար, որ դա, ըստ էռթյան, նրա հեղինակությունը չէ. «Անձամբ ինձ համար միանգամայն պարզ է, — գրում է մի քննադատ, որ «Դիակը» Տոլստոյը չէ գրել, այսինքն գուցե և ինքը կա նիկուանիչը, սակայն ոչ երբեք «Պատերազմ և խաղաղության» հեղինակը»⁴:

«Հորիզոնի» և «Կավկազի» հոդվածագրերը «Կենդանի

¹ «Հորիզոն», 1912, № 5:

² Նույն տեղում:

³ «Կավկազ», 1911, № 234.

⁴ Նույն տեղում:

դիակի» և նրա պաշտպանների վրա ցեխ են նետում Տոլստոյի հետեւ թաքնվելով, որպեսզի տպավորություն ստեղծեն, թե իբր իրենք մտահոգված են Տոլստոյի հեղինակությամբ, որ վիճի, թե նսեմանա, ինչպես «Հորիզոնն» է ասում՝ «միծ հեղինակի մեծ անունը»¹:

Այդ նույն միտքը «Կավկազը» արտահայտել է ոչ այդպիս բացահայտ, քայլ շատ ավելի կեղծավորությամբ: Թերթի ասում է, թե հեղինակը չի հրապարակել իր գրածը, այդ ցուցը է տալիս, թե «որքան կա Նիկոլաևիչ Տոլստոյը հարգանքով եր վերաբերում Տոլստոյ-գրողին: Սակայն, մեր ժամանակներում սովոր չեն դրա հետ հաշվի նստել: Երկյուղած հարգանքով վերաբերովի գրողի հիշատակին, նրա նկատմամբ երեան բերել որոշ նրբանկատություն, պահպանել նրա հետմահու հեղինակության անձեռնմխելությունը,— այս բոլորը հնացած սանտիմենտալություն է»²:

Ճիշտ այս ձևով էին արտահայտվում «Կենդանի դիակի» հակառակորդները՝ ոռւական գրականության մեջ:

Սակայն այս ուներանսները ոչ այնտեղ, ոչ էլ մեզ մոտ, իրերի ճշմարիտ պատկերը չեն փոխում: Դա ոչ թե մի քմահաճ շնավանություն էր կամ ընդհանուրին դեմ գնալու, ընդհանրապիս ինքնատիպ երեալու գալառական ձգուում, այլ գաղափարական հարձակում՝ Տոլստոյին պաշտպանելու անվան տակ՝ ընդդեմ Տոլստոյի:

«Կենդանի դիակի» դեմ գրված հոդվածների ու դրանց հեղինակների հետեւ կանգնած էին մարդիկ, որոնց դեմ էր փաստորին ուղղված Տոլստոյի պիեսը, համենայն դեպս, որոնք գրականության մեջ ներկայացնում էին Տոլստոյի պիեսում մերկացված դասակարգերի շահերը:

Մեծ վշտի տեր, իր շրջապատից բարոյապես բարձր կանգնած Պրոտասովը, «Հորիզոնի» կարծիքով, «մի ողորմելի և ճղճիմք անձնավորություն է, իսկ հնավանդ Կարենինը ոռուք

1 «Հորիզոն», 1912, № 5:

2 «Կավկազ», 1911, № 248.

ասղնվականության սքանչելի տիպարը»^{1:} Մի՞թե պարզ չէ, որ Հոդվածագիրը Կարենինի տեսակեալից է քննության առնում Հարցերը: Հոդվածագիրը քննադատում է Տուստոյին այն բանի համար, որ ո՛չ Կարենինը և ո՛չ էլ Պրոտասովը չեն պատասխանում քննիչի հարցին Սարատովի ուղարկված դրամի մասին: Նա այդ լուսությունը բացատրում է մի քստմնելի ենթադրությամբ, որ պիեսում անցնում է միայն քննիչի և այժմ էլ «Հորիզոնում» հանդես եկող քննադատի մտքով:

Տուստոյի պատկերած քննիչի համար անհասկանալի է Պրոտասովի պահանջը՝ կեզտոտ ձեռքերով շխառնվել ուրիշների կյանքին: Ճիշտ այսպես էլ՝ Տուստոյի պիեսից բխող այն դիպուկ միտքը, թե այնքան անխիղճ ու անմարդկային են բուրժուական հասարակության օրենքները, որ բարությունը բավական չէ՝ կյանքում արդարություն հաստատելու համար,— չէր կարող սիրողների շահերի պաշտպանությամբ հանդես եկած քննադատի սրտովը լինել:

«Կենդանի դիակի» այդպիսի կրթու մերժման պատճառներից մեկն այն էր, որ «Հորիզոնը» կանգնած էր մեծ զրոյի ժառանգության ռեակցիոն կողմերի՝ տուստոյականության պաշտպանության դիրքերում: Եվ պարզ է, որ չէր կարող պաշտպանել մի պիես, որը, վերջին հաշվով, ուղղված էր իր բունած դիրքի դեմ:

Շատ կարճ ժամանակ անց՝ «Հորիզոնը» նորից հայտնեց իր անբավականությունը, որ ներկայացումներ տալու համար երեան մեկնած Արմեն Արմենյանը և Դուրյան-Արմենյանը բեմադրել են «Կենդանի դիակը»^{2:}

1 «Հորիզոն», 1912, № 5:

2 Նույն տեղում, 1912, № 23: Այդ կապակցությամբ մի նամակով դիմեցինք ժողովրդական արտիստ Արմեն Արմենյանին, քերում ենք մի երկու քաղվածք նրա պատասխանից. «Դժբախտաբար չպիտի կարողանամ ձեզ զոհացնել... —զբում է նա, —հիշողությամբ միայն պիտի կարողանամ պատասխանել, այն էլ եթե, իմ այս տարիքում, ինձ չդավաճանե: Բացի երեանից, «կենդանի դիակը» մենք բեմադրել ենք

Այս փաստը մեզ իրավունք է տալիս կասկածել, որ «Հուրիգոնը», օգտագործելով իր ունեցած կապերն ազդեցիկ շրջանների հետ՝ խափանել է «Կենդանի դիակի» հետագա ներկայացումները։ Դրանից հետո միթե պարզ չէ, որ «Մշակի» հոգմածագրի հետեւալ տողերը՝ «այժմ հասկանալի է, թե ինչու բռնապետական տենչերով առաջնորդվող հասարակության վրա է. Ն. Տոլստոյի պիեսը այն խորունկ ու մեծ ազդեցությունը շատի ունինար, ինչպես սպասվում էր»¹, վերաբերում էին նաև «Հորիգոնին»։

Սա այն գաղափարական պայքարի շարունակությունն էր, որ սկսվել էր 60-ական թվականներին։ Տոլստոյի գեմ «Հորիգոնը» հանդես եկավ որպես աղքային-պահպանողական ռայական Աշխարհի» իդեալան ժառանգորդ։

Տոլստոյի «Կենդանի դիակի» առաջին բեմադրությունը, ինչպես տեսանք, անցել է գաղափարական սուրբ բախումների մթնոլորտում։ Եվ դա հասկանալի է, որովհետև հարցը միայն «Կենդանի դիակի» մեջ չէ, այլ այն նոր ու թարմ հոսանքի, որի պաշտպանության արտահայտություններից էր Տոլստոյի պիեսի բհմադրությունը։ Իրավացի էր «Ընկեր» թերթը, երբ «Կենդանի դիակ» պիեսի և նրա ներկայացման նկատմամբ բուրժուական ինտելիգենցիայի բացասական վերաբերմունքը բացատրել է նաև նրանով, որ այդ ինտելիգենցիան նախա-

Նաև Բաքվում, 1914 թ., որտեղ իսկական ցիտանական խումբ ենք հրավիրել, օգտվելով նրանց զատրուխներից և մենք, Դուրյան-Մշայի հետ միասին նրանցից սովորելով միասին երդել ենք «Շելմե վեստան» և այլն։ Թե ովքեր էին մյուս մասնակիցները՝ չենք հիշում... Պրոտասովին ես մեկնաբանել եմ և խաղացել որպես չափականց զպայուն, աղնիվ հոգու տեր, պայքարի անընդունակ զդվանքով իր միջավայրից հեռացած և ազնիվ, մաքուր ճներքնախավումք հոգեկան անդորրություն դատած մարդ, ընդհանուր զայրութիւն ողովթկումք կուլմինացիոն աստիճանով զուրս եմ տվել՝ հարցաքննիչ գատավորի երեսին։

¹ «Մշակ», 1911, № 282:

զգում էր, թե ինչպես վերածնվող թատրոնը «կատարելապես շարդուփուր է անելու նրանց շաբլոնական էսթետիկան»¹:

Այսպիսով, ուրեմն, «Կենդանի դիակի» ինչպես և գրանից առաջ «Հատակումի» բեմադրությունը հիմք է տալիս անելու այն կարևոր հետևությունը, թե պրոդրեսիվ դիրքերի վրա կանգնած հայ դերասանների առողջ ձգտումներն ու ծրագրերը, որոնք ձևակերպվել էին Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ազդեցության տակ, ճիշտ է, ուժեղ դիմադրության էին հանդիպում, բայց բեմական արվեստի զարգացման նոր հորիզոններ էին բացում հայ թատրոնի առաջ, որոնք, սահմայն, նվաճվեցին միայն ապագայում՝ սովետահայ թատրոնի ստեղծումով:

1953

¹ «Բնկեր», 1912, № 3,

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հեղինակի կողմից	3
Խուսական դրամատուրգիայի մուսքը հայ իրականություն	
«Ենթակա պատուհասի» առաջին բեմադրության հարցի շուրջ . . .	7
Դարձյալ «Ենթակա պատուհասի» առաջին բեմադրության մասին .	20
Նորահայտ մի էջ «Ենթակա պատուհասի» վաղ բեմադրությունների պատմության մեջ	31
Մի էջ «Ենթակա պատուհասի» բեմական պատմությունից	44
Խուսական դրամատուրգիայի առաջին գեանատականը	
հայ իրականության մեջ	
Մի մոռացգած անուն կամ ոռուհայ զրական կապերի շուրջը . . .	57
Պայման ուսական դրամատուրգիայի համար	
Պայման Օստրովսկու համար	77
Մաքովի Գորկու մուտքը հայ թատրոն և պայման նրա համար .	106
«Կենդանի» պիակին բեմական պատմությունից	144



ԿԱՐՔԻՐ՝ ԱՐԴ. ՀԱԽԱՍՏԱՆ
ՏԵԽՆ. ԽՈՐԱԳԻՐ՝ և. ԱԱՄՎԵԼՅԱՆ
ԿԱՆԱՐՈՒ ԱՐՐԱՊԻՀ՝ Գ. ԹԱՆԴԱՅԱՆ

ՎՃ 05595

Պատվիր 467

Տիրապ 3000>

Հանձնված է արտադր. 15/VIII 1954 թ.. ստորագրված է տպագր. 15/XII 1954 թ.
Քաղաք 84×103^{1/2} տպագր. 10,75 մամ. հրատ. 6,0 մամ.
Գինը 7 ո. 20 կ. կտագր 1 ո. 50 կ.

Հայկական ԱՍՏ ԳԱ ՀՐԱՄԱՐԹԱՀՆԵՐՅԱՆ ազգարան, Երևան, Աբովյան, 1954,

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0006988

A II
20641